

8257

== Ը Ն Դ Յ Ա Ն Ո Ւ Ր ==
ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿՆՔՎԱԾ Ե ՀՍԻՀ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ԱՐԶԵՍԱԿ-
ՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏ. ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՑԵՎ
«ՀԱՅՊՂԻՆՁ» ՏՐԵՍԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

1929 Տ. ՀԱՄԱՐ

331.1
Ա-89

ՅԵՐԵՎԱՆ

1929 Թ

331.1

Ա-89

ԱՄՐ

53

== ԸՆԴՀԱՆՈՒՐ ==
 ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կնիված է ՀՍԽՀ Մեծադագործների Արհեստակ-
 ցական Միության կենտրոն. վարչության յեկ
 «Հայպոլիմն» տեսի վարչության սիջեկ

1929 Տ. ՀԱՄԱՐ

(
 1008
 37728
)

2001

ԵՆԻՍՎՍՆ

1929թ.

2010

150
 78-2

30522-42

Տնտեսագրական և ՀՈՍՀ Աշխոյզ-
կամատի տարիք-կոնֆլիկտա ին
րաժնուժ 1929 թ. Հունվարի 17-ին
№ 71-ի տակ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ.

Յերևան. 1929 թ. հունվարի 8-ին: Սույն հավաքա-
կան պայմանագիր կնքված է ՀՍՍՀ մետաղագործների
Միության կենտրոնական վարչության, հանձինս նրա
նախագահ՝ Հրաչյա Արշակի Դեմիրճյանի, վորը հետա-
դառնում կոչվում է «Միություն» մի կողմից, և «Հայ-
պղինձ» տրեստի վարչության՝ հանձինս նրա նախա-
գահ՝ Իվան Պետրովիչ Չեկապինի, վորը հետագա ուժ
կոչվում է «Տնտեսարմին» մյուս կողմից, հետևյալի
մասին:

1. Պայմանագիրը տարածվում է Տնտեսարմին, այժմ
գոյություն ունեցող և բացվելիք հիմնարկություննե-
րում կամ ձեռնարկություններում աշխատող ու ծառա-
յության նոր մտնող բոլոր բանվորների, ծառայողների
և վարչա-տեխնիկական կազմի վրա:

Ծանոթություն.—1. Սույն պայմանագիրը չի տա-
րածվում ծառայության ընդունելու կամ արձակե-
լու իրավունք ունեցող վարչական բարձրագույն
կազմի վրա:

2. Սույն պայմանագիրը չի տարածվում այլ ար-
հեստակցական միությունների անդամների վրա,
յեթե նրանց աշխատանքի պայմանները ձեռնարկու-
թյուններում, սահմանված են համապատասխան
միության պայմանագրով:

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ Ի ՏՄԱՐԱԼ
ՊԱՏՎԵՐ № 2335
ԳՐԱՌԵՊԳԼԵՎԱՐ 1781
ՏԻՐԱԺ 150



12982-58

3. Ժամանակավոր բանվորների և ծառայողների աշխատանքի պայմանները կանոնավորվում են ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողովրդական 1927 թ. հունվարի 14-ի վորոշմամբ և ԽՍՀՄ Աշխատողականների, այդ վորոշման կիրառման վերաբերյալ ունեցած համապատասխան հրահանգներով (տես հավելված № 1) :

4. Տնտմարմինն իր կողմից կնքած բոլոր անհատական պայմանագրերի պատճենները միությանն և ներկայացնում յերեք օրվա ընթացքում—կնքման պահից հաշված :

2. Սույն պայմանագիրը կնքվում և մեկ տարի ժամանակով և ուժի մեջ և մտնում 1929 թ. հունվարի 1-ից :

3. Սույն պայմանագրի դործողության ընթացքում նրա մեջ նախատեսված պայմանները վատթարացնող անհատական վորեև համաձայնության գալը, այն բանվորների և ծառայողների հետ, վորոնց վրա տարածվում և սույն պայմանագրի 1-ին կետի ուժը, չի թուլությամբ :

4. Սույն պայմանագրի դործողության ժամկետի սահմաններում նրա առանձին կետերն ու մասերը, կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխվել: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում, պայմանավորվող կողմերի նրանց ստորագրելու պահից, յեթև համաձայնությամբ այլ ժամկետ չի սահմանված :

Սույն պայմանագրի կետերը փոփոխելու հետ կապված բոլոր վիճելի խնդիրները լուծվում են կոնֆլիկտային կարգով և ուժի մեջ են մտնում իրենց լուծումը ստանալուց հետո վորոշման մեջ մատնանշված ժամկետից :

5. Այն կողմը, վորն առաջարկում և պայմանագրի մեջ վորեև փոփոխություն կամ լրացում մտցնել, պարտավոր և այդ մասին իրազեկ դարձնել մյուսին, հաղորդելով փոփոխությունների և լրացումների տեքստը :

Այն կողմը, վորն առաջարկություն և ստացել, 7 օրվա ընթացքում պետք և տեղեկացնել մյուսին իր համաձայնություն տալու կամ չտալու մասին: 7 օրվա ընթացքում պատասխան չստանալը փոփոխություն կամ լրացումներ մտցնելու համաձայնության նշան և համարվում :

6. Պայմանագրի ժամկետը յերկու կողմերի ցանկությունամբ կարելի յե յերկարաձգել: Պայմանագրի ժամկետը յերկարաձգելու, կամ վորեև փոփոխություններ մտցնելու յուր ցանկություն մասին կողմը պետք և գրավոր հայտնի մյուսին վոչ ուշ քան յերկու շաբաթ մինչև պայմանագրի ժամկետը լրանալը: Յեթև պայմանագիրը վերակնքել յուր ցանկություն մասին, սահմանված ժամկետին, կողմերից մեկին ու մեկը չի հայտնի, այդպիսին մեխանիկորեն պահպանում և իր ուժը ևս մեկ ամիս ժամանակով :

7. Սույն պայմանագիրը կենսագործելու և նրա կիրառման ու մեկնարանման ժամանակ ծագելիք վեճերն ու կոնֆլիկտները, լուծելու համար զնահատուկոնֆլիկտային հանձնաժողովներ են կազմակերպվում :

Ծանոթություն.—Տնտմարմինը պարտավորվում և ԳԿՀ-ի վարչական մասի անդամներին տալ համապատասխան գրավոր լիազորություններ :

2. ՎԱՐՁՈՒՄ ՅԵՎ ԱՐՁԱԿՈՒՄ .

8. Տնտմարմինը աշխատանքի յե ընդունում, հավասար վորակ ունենալու դեպքում, առաջին հերթին ար-

հետակցական միությունների գործադուրկ անդամներին—աշխատանքի մարմիններին, իսկ վորտեղ դրանք բացակա չունեն, միութենական մարմինների միջոցով: Յուրաքանչյուր ընդունված բանվորին վերաբերյալ միութենական մարմիններին, պատճառարանված բացարկ (ոտովոդ) հայտնելու իրավունք է վերապահվում: Այդ հոդի վրա ծագած վեճերը լուծվում են կոնֆլիկտային կարգով:

Ծանոթություն.—Միության գործադուրկ անդամներին չարքը դասվում են՝ գորացրված կարմիր բանակայինները, բանվորներին և ծառայողները առաջին անգամ աշխատանքի մտնող զավակները, իրենց կերակրողներից զրկված միայնակ կանայք և մանկատաններից դուրս գրված. վերահասները (պերետոստի):

9. Բանվորներն ու ծառայողները ծառայության վերջնական ապես ընդունվելուց առաջ աշխատանքի փորձման չըջան են անցնում, ըստ իրենց մասնագիտության:

Ծանոթություն.—Փորձման ժամկետը սկսվում է աշխատավորի փաստական աշխատանքի սկզբի ուրից. նշված ժամկետի մեջ պետք է մտնեն միմիայն նրա փաստական աշխատանքի որերը: Աշխատավորի կողմից հիվանդության, կամ այլ պատճառներով բաց թողնված որերը չպետք է հաշվվեն Աշխ. Որենսդրքի 38 հոդ. նախատեսված փորձման ժամկետներին մեջ:

10. Բանվորական ուժի ընդունման կանոնները պահանջելու, այլ և անհրաժեշտ վերահսկողություն սահմանելու նպատակով, ստեղծարմինը պարտավորվում է յուրաքանչյուր ձեռնարկության մեջ հատկապես մեկին

նշանակելու, վորը պարտավոր լինի պահպանելու, այլև պատասխանատվություն կրի աշխատանքի ընդունման կանոնները կիրառելու համար: Այդ անձնավորության թեկնածությունը պետք է համաձայնեցված լինի միության հետ:

Ծանոթություն.—1. Վարչությունը պարտավոր է բանվորներին, ծառայողներին և վարչատեխնիկական կազմի ընդունման մասին տեղեկացնելու միության մարմիններին յերեք օրվա ընթացքում, ընդունման պահից հաշված:

2. Առանձին բանվորների և ծառայողների յեթաբարձր հեռացումների մասին ձեռնարկությունների վարչությունը պարտավոր է տեղեկացնելու միության մարմիններին յերեք օր արձակումից առաջ:

Միության արձակմանը համաձայն շլինելու դեպքում հարցը հանձնվում է ԳԿՀ-ի ըննությանը: Վերջինը պարտավոր է ըննելու հարցը յերեք օրվա ընթացքում: Մինչև հարցի լուծում ստանալը ԳԿՀ-ում, աշխատավորը մնում է իր պաշտոնում:

Տեղեկացնելու որից յերեք օրվա ընթացքում, միութենական մարմինների կողմից արձակման դեմ բողոք չստանալու դեպքում համարվում է, վոր միությունը արձակմանը համաձայն է:

11. Ի լրումն Աշխ. Որենսդրքի 37, 44, 49, 88, 90 և 160 հոդ. սահմանվում են հետևյալը.

ա) Հաստիքների կամ արտաբերության կրճատման Ժամանակ, հավասար վորակ ունենալու դեպքում, առաջին հերթին արձակվում են վոչ միության անդամները:

բ) Արձակումն ըստ Աշխ. Որենսդրքի 47 հոդ., «ա» և

«բ» կետերի կատարվում է միության հետ նախորդ համաձայնեցնելով, իսկ հիմնարկության կամ ձեռնարկության լուծարքի կամ աշխատանքների կրճատման խնդիրը առանձին կողմից լուծվում է միության մասնակցությամբ:

դ) Արհեստակցական, քաղաքական, կոոպերատիվ, խորհրդային և ապահովագրական կազմակերպություններում աշխատելու համար ընտրված աշխատավորներն իրավունք են վաճելու ընտրման ժամկետը լրանալուն պես, անցնեն իրենց նախկին կամ համապատասխան պաշտոնի, ըստ վորում նշված անձինք ձեռնարկությունից, բացառությամբ որենքով նախատեսված դեպքերի, վոչ մի վարձատրություն չեն ստանում:

դ) Գործարկումների և ԳԿՀ-ի բանվորական Ֆրակցիայի անդամների, ալլե ձՏՍ-ի լիազորների արձակուրդ կարող է տեղի ունենալ միմիայն միութենական մարմինների հետ համաձայնեցնելուց հետո:

յե) Միայնակ կանանց և ընտանիքի միակ կերակրողներին հատիքների կրճատման ժամանակ, ալլ հավասար պայմաններում, նախապատվություն է տրվում, պաշտոնում թողնելու իմաստով:

զ) Արտադրության ռացիոնալացման կամ մեքենայացման պատճառով կրճատվածները, անկախ նախադրույցներից, ամսական միջին աշխատավարձի չափով նպաստ են ստանում:

Ծանոթություն.—Ռացիոնալացման ձեռնարկումներ համարվում են ջերմաուժային տնտեսության վերակահավորումը, կոնվեյերի սխեմա (անրդհատ հոսանք) մտցնելը, նոր կահավորում մտցնելը, կամ յեղածի կատարելագործումը,

2

ձեռքի աշխատանքից մեքենայի անցնելը, ներքին գործարանային տրանսպորտի մեքենայացումը, արտադրության մեջ ավելի մեծ աշխատանքի բաժանում մտցնելը, մեկ բանվորի միջոցով ավելի մեծ քանակությամբ մեխանիզմներ սպասարկելը (բանվորական որվա խտացումը, մեքենաների ու դազգյահների ավելի մեծ բեռնավորումը) արտադրական պրոցեսի ընթացքի կրճատումը, մշակման պրոցեսների պարզեցումը, բանվորներին նշույթեր և գործիքներ տալու գործի կատարելագործումը, պատվերների, կահավորման կամ միևնույն տրեստի արտադրական առանձին ձեռնարկությունների Փունկցիաների վերաբաշխումը կամ կետրոնացումը, վորի հետևանքով բանվորների բանակը կրճատվում է, իսկ տրեստի կամ կոմբինատի արտադրական անելիքները մնում են անփոփոխ:

Ռացիոնալացում բառի տակ հասկացվում է արտադրության մեջ աշխատի տեխնիկական և կազմակերպչական փոփոխություններ կատարելը, վորի շնորհիվ բարձրանում է բանվորների աշխատանքի արտադրողականությունը, յեղածի համեմատությամբ, նախկին արտադրանքը (վերաբրտակ) ձեռք է բերվում ավելի քիչ քանակությամբ բանվորների միջոցով:

2. Պայմանագրի 11 հոդ. «ա» կետում և 8 հոդ. նշված դեպքերում, վորակի հավասարությունը վորոշում է վարչությունը, իսկ այդ հոդի վրա ծագող կոնֆլիկտները լուծվում են ԳԿՀ-ում:

3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐԸ.

12. Բանվորների և սպասարկու ստորադաս կազմի

համար նորմալ բանվորական որ է սահմանվում ութ ժամ տեղաբերումը: Սույն պայմանագրին կցված ցուցակում մասնանշած արհեստների բանվորական որվա տեղաբերումը վեց կամ յոթ ժամ համապատասխանորեն (տես հավ. № 2):

13. Ծառայողների համար սահմանվում է ութ ժամյա բանվորական որ-կես ժամ ճաշի ընդմիջումով, վորը աշխատանքի ժամերի մեջ է հաշվվում:

14. Մի ամսվա ընթացքում աշխատանքի դուրս գալու պարտադիր թիվը բոլոր աշխատավորների համար, ընդունվում է ամսվա որացույցային բանվորական որերի լրիվ թիվը:

Ծանոթութուն. — 1. Տնտնարմինը պարտավոր է աշխատանք տալու ամսվա բոլոր որացույցային բանվորական որերը, հակառակ դեպքում բանվորին վճարում է որական միջին աշխատավարձը չաշխատած որերի համար:

2. Բանվորական որերին առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս չեկող աշխատավորը պատասխանատվության է յենթարկվում ներքին կարգապահության կանոնների հիման վրա:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

15. Տրեստի ձեռնարկություններում աշխատանքի ըստ ժամյա (սղոջատվայա) վարձահատուցման ձևին անցնելը 1929 թ. ընթացքում անհրաժեշտ է համարվում:

Կողմերը պարտավորվում են բոլոր նախապատրաստական աշխատանքներ տանելու և սկսած հուլիս ամս

ույց ըստ ժամյա վարձատրություն մտցնելու հերթակառուցության կարգով, համալրություններն իրար հետևից այն հաշվով, վորպեսզի հաջորդ 1930 թ. հավաքական պայմանագրերը կնքելու պահին, տրեստի բոլոր ձեռնարկություններում անցկացված լինի աշխատանքի ըստ ժամյա վարձատրություն:

16. Բանվորների, աշակերտների և դեռահասաների աշխատավարձը սահմանվում է յուրաքանչյուր արհեստի համար—որավարձի, իսկ ծառայողների, վարչատեխնիկական և սպասարկող ստորին կազմին—ամսական դրույքի հաշվով:

17. Նորմալ բանվորական որվա առաջին կարգի որական տարիֆային դրույքը բանվորների և սպասարկող ստորին կազմի համար սահմանվում է մեկ ոտրլի 16 կ.: Մնացած կարգերի տարիֆային դրույքները սահմանվում են ութ—կարգային տարիֆային ցանցի հետևյալ դործակիցների համեմատ—1: 2.8 հարաբերությամբ:

ԿԱՐԳ	ԳՈՐԾԱ-ԿԻՑ	ԴՐՈՒՑՔ
1	1.01	1.16
2	1.20	1.39
3	1.43	1.68
4	1.70	1.97
5	1.85	2.26
6	2.20	2.55
7	2.50	2.90
8	2.80	3.25

Ծանոթութիւն.—Սպասարկու ստորադաս կազմի (ՍՍԿ) ամսական վարձատրութիւնը վորոշելու համար համապատասխան կարգի որական տարի-Փային դրույքը բազմապատկվում է 24-ի վրա:

18. Հաշվա-գրասենեկային և տնտեսական կազմի ծառայողների առաջին կարգի ամսական դրույքը, ամսվա բոլոր որացույցային որերի համեմատ, սահմանվում է 39 ո., մնացած կարգի տարիՓային դրույքները սահմանվում են 16 կարգային տարիՓային ցանցի հետևյալ գործակիցների համեմատ, 1 : 8 հարաբերութլամբ:

ԿԱՐԳ	ԳՈՐԾԱ-ԿԻՑ	ԴՐՈՅՔԻ
1	1.0	39 ո.
2	1.2	46—80
3	1.4	54 60
4	1.7	66 30
5	2.0	78 —
6	2.3	89—70
7	2.7	105—30
8	3.1	120—90
9	3.5	136 50
10	4.0	156 —
11	4.5	175—50
12	5.0	195 —
13	5.6	213—40
14	6.3	245—70
15	7.1	276—90
16	8.0	312—

19. Անհատական և խմբակային (բրիգադա) աշակերտութլանը պատկանող աշակերտների համար հետևյալ ըստ կարգյա, որական տարիՓային դրույքներն են սահմանվում.

ԿԱՐԳ	ԳՈՐԾԱ-ԿԻՑ	ԴՐՈՅՔԻ
1	1.0	—64
2	1.2	—76
3	1.5	—96
4	1.8	1—16
5	2.2	1—40
6	2.5	1—60

20. Աշխատանքի և պաշտոնների ըստ կարգերի բաշխումն տնտմարմնի կողմից կատարվում է միութլան հետ միասին:

ՏարիՓային տեղեկատուների մեջ այս կամ այն արհետու, կամ մասնադիտութլունը չնախատեսանված լինելու դեպքում, դրանց այս կամ այն կարգի գասելու լնդերը վորոշում է ԳԿՀ-ն:

Ծանոթութլուն.—Բանվորների ծառայողների և սպասարկու ստորին կազմի աշխատանքների և արհետուների ստորաբաժանումն կատարվում է ՄԲՀՄ Կենտկոմի տարիՓային տեղեկատուների համաձայն (հրատ. 1928 թ.):

21. Այն դեպքերում, յերբ ըստ արտադրութլան աշխատանքի բնութլի անհրաժեշտ է աշխատել հատուկ և չարաթական հանգստի որերը, աշխատավորներին, այդ որերի փոխարեն, չարաթվա մեջ հանգստի համար ուրիշ որեր են տրվում, իսկ աշխատանքի որերի վարձատրու-

թիւնը տրվում է սովորական չափով, առանց հատուկ հավելումի:

Աշխատանքը հեղափոխական տոներին, վորպես կանոն, արգելվում է: Բացառիկ դեպքերում, աշխատանքը կարող է կատարվել միութեան և աշխատանքի մարմինների հետ համաձայնեցնելուց հետո ու պիտի վարձատրվի կրկնակի չափով:

22. Շարախական հանգստի և անո օրերի նախորդակին բանվորական օրվա տեղում թիւնը չպիտի վեց ժամից ավելի լինի, ըստ վորում այդ օրերը վարձատրվում են վորպես լրիվ բանվորական օրեր: Ըստգործյա վարձատրութեան տարիս չաշխատած ժամերը պետք է լրացուցիչ վարձատրվեն ըստ համապատասխան կատեգորիայի տարիֆային դրույքների:

23. Միջին ամսական դատումը և վոչ լրիվ ամսվա դատումի հաշվելու կարգն ամեն տեղ, ուր այդ մասին խոսվում է, ընդունվում է ԽՍՀՄ Աշխտողկոմատի 1924 թ. հունիսի 17-ի № 268/426 և 1924 թ. նոյեմբերի 14-ի № 467/439 պարզաբանութեան խմբագրութեամբ (տես հավելված № 3 և 4):

24. Աշխատանքը գիշերվա պահին, վորպես կանոն, կրճատվում է մեկ ժամով, բացառութեամբ հերթափոխական աշխատանքների:

Գիշերվա աշխատանքների համար, ինչպես ըստգործյա, նույնպես և ըստժամանակյա աշխատողները, բացի իրենց հիմնական դատումից, ստանում են այն աշխատանքներում, ուր նախատեսված է 8, 7 և 6 ժամյա բանվորական օր, գիշերային յուրաքանչյուր աշխատած ժամի համար, մեկ ժամյա տարիֆային դրույքի¹⁾ 7/8:

¹⁾ համապատասխանորեն:

Գիշերվա ժամեր համարվում են յերեկոյան ժամը 10-ից մինչև առավոտյան ժամը 6-ը:

25. Աշխատավարձը տրվում է ամիսը յերկու անգամ ց հետևյալ ժամկետներում:

Ամիսներ	Վոչ պահանջաւ տարիֆային դրույքի 60 տոկոսը	Նախորդ ամսի վերջնական հաշվարկը
Դեկտեմբերի համար	—	Հունվարի 10-ին
Հունվարի	Հունվարի 25-ին	Փետրվարի 8-ին
Փետրվարի	Փետրվարի 25-ին	Մարտի 8-ին
Մարտի	Մարտի 25-ին	Ապրիլի 10-ին
Ապրիլի	Ապրիլի 25-ին	Մայիսի 10-ին
Մայիսի	Մայիսի 25-ին	Հունիսի 10-ին
Հունիսի	Հունիսի 25-ին	Հուլիսի 10-ին
Հուլիսի	Հուլիսի 25-ին	Սեպտեմբերի 9-ին
Սեպտեմբերի	Սեպտեմբերի 24-ին	Սեպտեմբերի 10-ին
Սեպտեմբերի	Սեպտեմբերի 25-ին	Հոկտեմբերի 10-ին
Հոկտեմբերի	Հոկտեմբերի 25-ին	Նոյեմբերի 9-ին
Նոյեմբերի	Նոյեմբերի 25-ին	Դեկտեմբերի 10-ին
Դեկտեմբերի	Դեկտեմբերի 25-ին	—

Ծանոթութիւն.— Տնտմարմինը պարտավորվում է վճարել աշխատավարձը աշխատանքի ժամերին, աշխատանքի վայրում, ծրարային սխտեմով: Ծրարային սխտեմը կիրառել մարտի 1-ից:

26. Բոլոր ըստգործյա աշխատողների համար, օրվա միջին դատումը հաշվվում է նախորդ վորոչ ժամանակաշրջանի վատական դատումը, (դրույքն ըստգործյա հավելյալ դատումը, արտաժամյա, պարգևատրման վարձատրութեանը, վորոնք մշտական ընույթ ունեն) նույն շրջանում աշխատանքի դուրս դալու քանակի վրա բաժանելու միջոցով:

5. ՄՇԱԿՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ.

27. Մշակման նորմաները սահմանվում են առավելագույն և տեխնիկապես հնարավոր, յեղնելով տեխնիկական կահավորման լրիվ ոգտագործումից և միջին բանվորի բանվորական որվա լրիվ բեռնավորումից, — աշխատանքի առանձին արհեստների համար սահմանված աշխատանքի ժամերի համեմատ և հաշվի առնելով աշխատանքի գոյություն ունեցող պայմանները:

Ծանոթություն.—1. Նորմալ են համարվում այն պայմանները, վորոնք նշված են Աշխ. Որ. 57 հոդ. ծանոթության մեջ:

2. Մշակման նորմաները կրճատ բանվորական որունեցող աշխատավորների համար սահմանվում են նորմալ բանվորական որվա նորմաների համեմատ, իջեցված նրանց բանվորական որվա հարաբերությամբ:

28. Պայմանագրում նախատեսված աշխատավարձով բանվորը պարտավորվում է լրիվ կատարել սահմանված մշակման նորմաները, ըստ վորում կատարած աշխատանքի վորակը պիտի համապատասխանի տեխնիկական պայմաններին:

Սահմանված մշակման նորմաները, աշխատանքի նորմալ պայմաններում, իր մեղքով չկատարելու դեպքում, բանվորն առաջին անգամ աշխատավարձը ստանում է իր կատարած աշխատանքի համեմատ, բայց համեմայն դեպս վոչ պակաս յուր տարիՖային գրույթի 2/3-ից: Յերկրորդ անգամ—իջեցում ստորին կարգի և յերրորդ անգամ արձակում: Իորր դեպքերումն էլ ԳԿՀ-ի վորոշմամբ (տես հավելված № 5):

82-68829

Ծանոթություն.—Արտադրական բնույթի պատճառներով մշակման նորմաները չկատարելու դեպքում (նյութերի վոչ համապատասխան վորակը, իր ժամանակին նյութերն աշխատանքի վայրը չհասցնելը, գործիքների վատ վորակը), բանվորներին վերապահվում է միջին դատումը:

29. Մշակման բոլոր տեխնիկապես հնարավոր նորմաները, վորոնք հայտնաբերված են զուտ գիտական միջոցով, խրոնոմետրափի և բանվորական որվա լուսանկարման միջոցով, հաշվի առնելով նաև ուսցիտնալացման բնույթի բոլոր պայմաններն ու հնարավորությունները—կենսագործվում են ԳԿՀ-ի կողմից հաստատելու որից մեկ տարվա ժամկետով:

Ծանոթություն.—1. Մշակման նորմաները կարող են փոփոխվել ժամկետից ավելի շուտ, միմիայն լրիվ կամ մասնակի վերակահավորման, տեխնիկական կամ կազմակերպչական բնույթի ընդհանուր բարեփոխումների դեպքում, վորոնք ավելացնում են արտադրանքի քանակը, բայց վոչ պակաս 10 տոկոսից:

2. Մշակման նորմաների փոփոխման կամ նորերի սահմանման դեպքում, բանվորները այդ մասին պիտի տեղեկացվեն մինչև աշխատանքի սկսվելը:

30. Նոր աշխատանքների և արտադրությունների ստուգվում են վորձի միջոցով, աշխատանքի րիթացքում, վորից հետո վերջնականապես վորոշվում է ընդունվում են մեկ տարվա ժամկետով:

31. Յեկակի, հազվագյուտ դեպքերում, կատարվող աշխատանքների մշակման նորմաները և ըստգործյա գնահատումները բանվորին պետք է անպայմանորեն հարորդվեն մինչև տվյալ աշխատանքի սկիզբը, գրանցելով

1008
37725

12982-58



ըստգործյա քարտերի, պատվիրագրերի կամ ձեռնարկուժյան մեջ ընդունված աշխատանքի հաշվառման այլ ձևերի մեջ:

Ծանոթություն.—Գործող մշակման նորմաների և զնահատումների ամեն տեսակի փոփոխությունների մասին բանվորները տեղեկացվում են փոփոխված նորմաների և զնահատումների գործադրության մեջ զնելուց յերկու շաբաթ առաջ:

32. Մշակման նորմաները սահմանվում են տնտնաբանի կողմից և կախվում ձեռնարկուժյան մի վորևե տեսանելի տեղում, բանվորներին նրանց հետ ծանոթացնելու համար, և միաժամանակ, ներկայացվում են ԳԿՀ-ի հաստատությանը, վորից հետո կիրառվում են կյանքում:

6. ՐԱՏԳՈՐԾՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՀԱՏՈՒՅՈՒՄ

33. Ըստգործյա զնահատումները սահմանվում են բացառապես ըստ աշխատանքի կարգերի, այլ վոր թե աշխատանքը կատարողի, և բոլորովին անկախ տվյալ կատեգորիայի բանվորների բանվորական որվա տնտեսությունից, այլև աշխատանքի կատարման ժամանակից (ցեղեկը, գիշերը, տոն օրերը, արտաժամյա):

Ծանոթություն.—Այն ժամանակը, վոր ծախսված և րսո աշխատանքի բնույթի պահանջվող պարագաների պատրաստման համար, հաշվի յե առնվում ըստգործյա զնահատումները սահմանելիս, նշանակվում է պատվիրագրի մեջ և հատուկ վարձատրման յենթակա չէ: Պարագաներ պատրաստելու համար ծախսված ժամանակը, վոր ըստ իր եյությամբ չէր

կարող նախատեսվել և չի մտել ըստգործյա զնահատման մեջ, վարձատրվում և հատուկ համաձայնությամբ:

34. Չպիստացման յենթարկվող բոլոր աշխատանքներում գործադրվում են աշխատանքի վարձահատուցման հետևյալ սխեմաները—ուղիղ անսահմանավաղ, ըստգործյա և պարզեային վարձատրում—աշխատանքի ընթացքում բանվորների կողմից ձեռք բերված գանազան տեսակի նվաճումների համար:

Ծանոթություն.—1. Աշխատանքի վարձատրման պարզեային բոլոր սխեմաները մշակվում են վարչության ու հաստատվում ԳԿՀ-ի կողմից:

2. Աշխատանքի հրահանգային ձևի գործադրման դեպքերում, սահմանվում են աշխատանքի վարձատրման ամբողջաժամ (Ֆիկսիրովանայա) սխեմա և հաստատվում ԳԿՀ-ի կողմից:

35. Ըստգործյա զնահատումները վարչության կողմից սահմանվում և բանվորներին հայտարարվում են պատվիրագրերը հանձնելու հետ միաժամանակ. ըստգործյա զնահատումները չեն փոփոխվում ըստ տվյալ աշխատանքը կատարող բանվորների վորակին, հետևաբար բանվորներին աշխատանք պետք է տրվի միմիայն ըստ իրենց մասնադիտության, բացառությամբ դադարի դեպքերի: Հետին թվով պատվիրագրի (նարյադ) տալը չի թույլատրվում:

36. Միայն սահմանված մշակման նորմաների և ըստգործյա զնահատումների դեմ բանվորների բողոքները քննում է ԳԿՀ-ն: Մինչև նրանց ԳԿՀ-ում քննվելը, բանվորը չի կարող հրաժարվել իրեն հանձնված աշխատանքից, յեթե նույնիսկ նա համաձայնություն չի տվել

հայտարարված գնահատմանը կամ մշակման նորմային : կոնֆլիկտի շրջանում բանվորները վարձատրվում են ԳԿՀ-ի սահմանած գնահատմամբ :

37. Ըստգործյա գնահատումները վորոշվում են—մեկ օրյա տարիֆային դրույքը սահմանված մեկօրյա մշակման նորմայի վրա բաժանելու, կամ ըստժամյա տարիֆային դրույքը տվյալ աշխատանքը կատարելու համար, վորպես նորմա, սահմանված ժամերի քանակի վրա բազմապատկելու միջոցով :

38. Յերկարատև աշխատանքներ կատարելու դեպքում, վերջնական ըստգործյա հաշվարկը կատարվում է աշխատանքներն ավարտելուց հետո, ըստ վորում մյուս բանվորներին ամսական դատումը վճարելու հետ միաժամանակ, աշխատողին կանխավճար է տրվում տվյալ ամսվա ընթացքում կատարած աշխատանքի տուևոսի համապատասխան չափով, բայց վոչ պակաս տարիֆային դրույքից : Վերջնական հաշվարկ կատարելիս, դատումի գումարից պահվում են բոլոր կանխավճարները և պարբերական վճարումները : Յեթե կանխավճարի գումարը տրվելիք դատումից ավելի կլինի, այդ դեպքում բոլոր ավելորդ վճարածը պահվում է հետագա դատումից, այն հաշվով, վորպեսզի տրվող գումարը տարիֆային դրույքի $2/3$ -ից պակաս չլինի :

39. Առանց հարգելի պատճառների, աշխատանքը սկսելուց հետո, պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում, աշխատողին վճարվում է իրեն հայտարարված ըստգործյա գնահատումների և այլ բանվորին նույն պատվերը ավարտելու համար վճարված գումարի միջի յեղած տարբերությունը, բայց համենայն դեպս, աշխատողի դրույքից վոչ պակաս :

40. Յեթե ըստգործյա աշխատողից անկախ պատճառներով (մահ, հիվանդություն, պետական, արհեստակցական աշխատանքի կանչելը) կամ վարչության կարգադրությամբ, վորեև պատվեր կմնա անավարտ, ապա պատվերի կատարված մասը վարձատրվում է, դրա վրա փաստորեն ծախսված ժամանակի համար, ըստ միջին աշխատավարձի :

41. Բանվորները այլ աշխատանքների ուղարկվելու դեպքում, յեթե վերջինները նրանց պարտականությունների մեջ չեն մտնում, այդ աշխատանքները կատարելու ժամանակամիջոցի համար (բայց վոչ ավելի յերկու ամսից) վարձատրվում են նույն աշխատանքներով դրադվածների դրույքով, բայց իր միջին դատումից վոչ պակաս չափով :

42. Պարգևները տրվում են ամսվա վերջնական հաշվարկը կատարելիս :

7. ԸՍՏԺԱՄԱՆԱԿՅԱ ՎԱՐՁԱՀԱՏՈՒՅՈՒՄԵ .

43. Աշխատանքի ըստժամանակի վարձահատուցումը թույլատրվում է միմիայն չափավորման դժվար յենթարկվող աշխատանքի նկատմամբ : Այն բանվորները, վորոնք մշտապես ըստգործյա յեն աշխատում և միմիայն ժամանակավորապես են չափավորման դժվար յենթարկվող (յեղակի գնահատումներով) աշխատանք կատարում, այդ ժամանակաշրջանի համար վարձատրություն են ստանում կատարած աշխատանքների համեմատ, բայց վոչ պակաս նախորդ շրջանում ըստգործյա աշխատանքների համար ստացած նրանց միջին դատումի չափից :

Ծանոթութիւն.—Մշտապես ըստգործյա աշխատողներ համարվում են նրանք, ովքեր տվյալ ամսվա որացույցային ժամանակամիջոցի վոչ պակաս քան 65 տոկոսը գրադրված են յեղել նման աշխատանքներով:

44. Ըստժամանակյա վարձատրվող այն աշխատողներին, վորոնց աշխատանքը դժվար է յենթարկվում չտփափորման, կարող է պարզեններ (պրեմյա) նշանակվել, արտադրական նվաճումների համար—ինչպես կատարվող աշխատանքների յարվածության, նույնպես և նյութերի, վառելիքների յննայողության, դադարների ու յտոտանի նվազեցման յմատուով: Նմանապես պարզեններ կարող են նշանակվել այն բանվորներին, վորոնք սպասարկում են ըստգործյա աշխատողներին, ըստ նշված ֆախտորների, վարոնք պարզեատրվողների սղղեցության տակ են գտնվում:

Պարզենների չափը սահմանվում է կողմերի համաձայնությամբ և հաստատվում է ԳԿՀ-ի միջոցով:

45. Աշխատանքի ժամերն այն բանվորների համար, վորոնք ըստժամանակի վարձատրություն են ստանում, հաշվում է գործուղման (ուսկումանդիրովկա) պահից, ըստ վորում, աշխատելու տեղը գալու համար ծախսված ժամանակը ճշտիվ վորոշվում է կողմերի համաձայնությամբ և մտցվում աշխատանքի ժամերի մեջ:

46. Արտաժամյա աշխատանքներ կատարվում են վարչության դրավոր կարգադրությամբ: Վերջինիս բացակայության դեպքում, բանվորն իրավունք ունի հրաժարվելու արտաժամյա աշխատանքներից:

Ծանոթութիւն.—Ի յրումն Այս. Որենս. 60, 103, և 109 հոդ. սահմանվում է արտաժամյա աշխատանքների

տանքների հատուցումն ադատ որով—չի թուլատրվում:

47. Ըստգործյա աշխատողներին և ըստժամանակի աշխատող ու պարզե ստացող բանվորներին արտաժամյա աշխատանքներ կատարելու համար, վարձատրություն է տրվում հետևյալ ձևով—ըստգործյա դատումին կամ դատումի պարզելի հետ միասին, միացվում է հալվելում—առաջին յերկու ժամվա ընթացքում յուրաքանչյուր աշխատած ժամի համար—կես ժամյա տարիֆային դրույքի, իսկ հետագա ժամերից յուրաքանչյուր այլ և հանգստի ու տոն որերին աշխատած յուրաքանչյուր ժամի համար—մեկ ժամյա տարիֆային դրույքի չափով:

48. Դադարներն արտադրության մեջ, վորոնք առաջացել են արտադրական պատճառներով ու անկախ աշխատավորների կամքից, վոչ ալելի քան յերեք որ տեփողությամբ, վարձատրվում են միջին դատումի չափով: Զեռնարկության, համքարության կամ նրա մի մասի աշխատանքն յերեք որից ալելի և սինչև սեկամիս դադարելու դեպքում, բանվորները դադարի ժամանակաչրջանի համար վարձատրություն են ստանում ըստ տարիֆային դրույքի:

Ծանոթութիւն.—1. Սույն հոդվածի յերկրորդ մասում նշված վարձատրությունը դադարի առաջին որվանից սկսած տարիֆային դրույքով տրվում է միմիայն այն դեպքում, յեթե բանվորները չեն ողտագործվել այլ աշխատանքներում ու բոլորովին առանց գործի յեն մնացել:

2. Վարչությունն իրավունք ունի սույն հոդվածում նշված բանվորներին, դադարի ժամանակ, ողտագործելու ուրիշ աշխատանքներում, ըստ վորում վարձատրությունը տրվում է մինչև յերկու

չարթ—միջին դատումի չափով, իսկ յերկու շարթից հետո—տարիֆային դրույքով կամ հատուկ գնահատմամբ (Աշխ. Որ. 64 հոդ.): Այլ աշխատանքներ կատարելուց հրաժարվողները կարող են արձակվել համաձայն Աշխ. Որ. 36 և 88 հոդ.:

3. Բանվորները պարտավոր են հենց դադարի սկսվելուն պես տեղեկացնել այդ մասին վարչությանը, հակառակ դեպքում, դադարը չի վարձատրվում:

4. Վարձատրություն տրվում է միմիայն բանվորական օրերի համար և այն աշխատավորներին, վորոնք սահմանված ժամերին ներկայացել են նշանառման համար, դադարի օրերին:

5. Դադարներն ընդհանուր առմամբ մինչև 20 օրով սրվա ընթացքում, չեն վարձատրվում:

49. Մշակման նոր նորմաներ և գնահատումներ սահմանելիս տեխնիկապես անխուսափելի դադարները (հատուկ ցուցակի մեջ նշված), նայած արտադրության ընույթին, նախորդ հաշվի չեն առնվում և մտցնվում գնահատումների մեջ: Նման դադարների համար հատուկ վարձատրություն չի տրվում:

50. Բանվորների մեղքով առաջացած դադարի համար վարձատրություն չի տրվում: Նման դադարների ցուցակը կազմվում է վարչության ու Միության կողմից ու կախվում համալրություններում, տեսանելի տեղում:

8. ԽՈՏԱՆԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

51. Ստանը, վորը առաջացել է վոչ ըստգործյա աշխատանք կատարող բանվորի մեղքով, վարձատրվում է նրա միջին դատումի հաշվով: Այն արտադրություն-

ներում, ուր հենց աշխատանքի պրոցեսն ինքը խոտանի վորոչ տոկոս է պայմանավորում, պիտի սահմանված լինի խոտանի վորոչ նորմալ տոկոս, վորը ըստգործյա գնահատումները վորոչելիս, մտցնվում է գնահատումների մեջ ու հետագայում հատկացնելի վարձատրվում: Ըստգործյա գնահատումներ վորոչելիս խոտանի նորմալ տոկոսը հաշվի չառնելու դեպքում, այդպիսին պետք է վարձատրվի վորպես պիտանի արտադրանք:

Մակնքություն.—Ստան բառի տակ ցածր վորակի գործվածքներ են հասկացվում (ստորին տեսակը), բայց համենայն դեպս, այնպիսիները, վորոնք կարող են վաճառվել, թեկուզ և ավելի ցածր գներով: Նորմալ խոտանը վորոչ տոկոսի ձևով սահմանվում է Տնտմարմնի կողմից, Արհեստակցական Միության հետ համաձայնեցնելով, և հայտնվում է բանվորներին, համալրության մեջ հայտարարություն կախելու միջոցով: Ստանի սահմանված տոկոսը իջեցնելու նպատակով, կարելի չի խրախուսական պարգև մտցնել:

52. Նախորդ պրակում նախատեսնված նորմալ տոկոսից ավելի խոտան ստացվելու դեպքում, վորն առաջացել է բանվորի անիութության պատճառով, խոտան ճանաչված գործվածքի կամ կիսաֆարրիկատի պատրաստման վրա ծախսված ժամանակի համար, բանվորը ստանում է վոչ պակաս քան տարիֆային դրույքի ²/₃ մասը:

53. Ստան ճանաչված գործվածքի մշակման ժամանակ, բանվորի անիութության պատճառով նյութերը փչացնելու դեպքում, նրա աշխատավարձից Աշխ. Որ. 83 հոդ. համաձայն, ԳԿԶ-ի հավանությամբ,

կարելի յե պահել փչացած նյութերի արժեքը միանվազ, բայց վոչ ավելի քան նրա ամսական տարիֆային դրույքի $\frac{1}{3}$ -ը :

9. ԿՈՄՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ .

54. Տնտնարմինը հատկացնում է բոլոր աշխատավորներին իր տրամադրութեան տակ յեղած, որ ընդհանրապէս և կապալով վերցրած, ու Աշխտողութեան նորմաների սանիտարական և առողջապահական բոլոր պահանջներին բավարարող բնակարաններ, ինքնարժեքով, վորը սահմանվում է Միութեան մարմինների հետ համաձայնեցնելով, բայց վոչ բարձր տեղական կոմմունալ մարմինների գներից : Կոմմունալ ծառայութեանները, այն է—ջեռացում (ոռոպլենիյն), լույս—վարձատրվում են ինքնարժեքով, Վարչութեան կողմից և Միութեան հետ համաձայնեցված նորմաների համաձայն : Նորմաներից ավելի ծախսերը ձեռնարկութեան կողմից կատարվում է լրիվ կերպով ծածկելու պայմանով :

Մանրութիւն 1.—Կազարմաներում և հանրակացարաններում կոմմունալ ծառայութեանները ձրի յեն հատկացվում :

2. Ելեքորո-եներգիան աշխատավորներին բաց է թողնվում ինքնարժեքով :

3. Բանվորները և ստորին սպասարկու կազմը—այնտեղ, վորտեղ համբարային բաղնիքներ չկան, սպալում են ընդհանուր բաղնիքից ձրիաբար, համբարութեանները տրված տարիներով : Բանվորների ընտանիքների անդամները, ինչպես նաև աշխատավորների բոլոր կատեգորիաները և նրանց ընտանիքների անդամներն, ողտվում են բաղնի-

քից Վարչութեան կողմից սահմանված ու Միութեան մարմինների հետ համաձայնեցրած վճարով :

55. Տնտնարմինը պարտավորվում է կահավորել հանրակացարաններն անհրաժեշտ բանակութամբ յերկաթե մահճակալներով, ծղնտախ մատրացներով և բարձերով, տուբիկներով—յերկու բանվորին մեկ տուբիկի հաշվով, յերկու մասերով, այլև բավարար բանակութեամբ սեղաններով ու նստարաններով :

Մանրութիւն.—Տնտնարմինը պարտավորվում է ձեռնարկութեանների կենտրոններում հյուրանոցներ ունենալ և պաշտոնական ու հասարակական շորձերով ձեռնարկութեան յեկող աշխատավորներին, սահմանված գներով, նրանց մեջ տեղեր հատկացնել :

56. Տնտնարմինը պարտավորվում է ձեռնարկութեան շրջարնի մեջ, բոլոր տեղերում վորոչ վճարով կոոպերացիային շենքեր հատկացնել—աշխատավորների համար ճաշարաններ բացելու նպատակով :

10. ՅԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ .

57. Տնտնարմինը իՍՀՄ այլ քաղաքներից ու վայրերից հրավիրված բանվորներին, Աշխ. Որ. 47 հոդ. «ա», «բ» և «ե» (ж) կետերի հիման վրա, արձակելու վեպքում, վճարում է նրա (բանվորի) ճանապարհածախսը—կոչտ վագոնի տարիֆով, մինչև այն տեղը, վորտեղից հրավիրված է յեղել :

11. ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ .

58. Դեռահասները, վորոնց 18 տարին տվյալ որացուցային տարում լրանում է, ամսական արձակուր-

դից ոգտվում են միմիայն այն դեպքում, յեթև այլ իրավունքը ծագել է մինչև նրանց 18 տարին լրանալը:

Յանուարի 1-ը.—Մինչև արձակուրդի իրավունքի ծագելը նրանց 18 տարին լրանալու դեպքում, արձակուրդը հաշվվում է գումարամբ—մեկ ամսվա հաշվով—մինչև 18 տարին լրանալու ժամանակի և 15 որվա հաշվով մնացած ժամանակի համար:

59. Արձակուրդներ հատկացնելու կարգը սահմանում է ԳԿՀ-ն:

60. Աշխատավորին արձակելիս Վարչութիւնն իրավունք չունի վորևէ գումարներ պահել նրա աշխատավարձից, իր ժամանակին հատկացված արձակուրդի համար—անկախ փաստորեն աշխատած ժամանակից:

61. Հանգստի տներում անցկացված ու ձեռնարկութեան կողմից վարձատրված ժամանակը արձակուրդի մեջ է մտնում:

62. Կցված արձեռնների ցուցակում հիշատակված աշխատավորներին, հերթական արձակուրդների հետ միաժամանակ, լրացուցիչ արձակուրդներ են հատկացվում, առանց վորևէ մասնատման (տես հավելված № 6):

Յանուարի 1-ը.—Յեթև ըստ արտադրութեան ընթացքի աշխատավորների բացակայութեանը կարող է արտադրութեանը վնաս հասցնել, ԳԿՀ-ի վորոշմամբ հերթական և լրացուցիչ արձակուրդները կարող են հատկացվել յերկու անգամ, յուրաքանչյուրն յերկու շաբաթ ժամանակով:

2. Արձակուրդներ հատկացնելիս, բոլոր դեպքերում, Վարչութիւնը պարտավոր է վճարել աշխատավորներին, նրանց հասանելիք աշխատա-

վարձը սկզբից, արձակուրդի վորջ ժամանակի համար:

63. Յեթև արձակուրդն ոգտագործելու համար աշխատավորներին անհրաժեշտ է ձեռնարկութեան չըջանի սահմաններից մեկնել, ապա ճանապարհին յեղած ժամանակը, բայց վորջ ալիելի 5 որից, արձակուրդի ժամանակի մեջ չի հաշվում, բայց և վարձատրման ևլ յենթակա չի:

Յանուարի 1-ը.—Այն աշխատավորը, վորն արձակուրդ պետք է զնա ձեռնարկութեան չըջանի սահմաններից դուրս, պարտավոր է այդ մասին, համապատասխան զիմում տալու Վարչութեանը, մատնանշելով, գնալու վայրը, և մինչև 5 որ ժամանակը, վորը անհրաժեշտ է գնալու և հետ վերադառնալու համար. այդպիսին թույլատրվում է Վարչութեան կողմից Միութեան հետ միասին:

2. Արձակուրդից վերադառնալուց հետո, յուրաքանչյուր արտոնյալ ժամկետից ոգտված աշխատավորը պիտի փաստաթղթերով ապացուցի այդ ժամկետը ըստ յուր նպատակին ոգտագործելու հանգամանքը:

64. Առանց հարգելի պատճառների, նախորդ պրակում նախատեսված 5 որից ալիելի ուշ արձակուրդից վերադառնալը, Վարչութեանն իրավունք է տալիս ուշացածներին արձակելու:

Յանուարի 1-ը.—Հարգելիութեան աստիճանը վորոշում է ԳԿՀ-ն:

65. Ի լրումն Աշխ. Որ. 114 հոդ. հաշվազբասենյակային աշխատավորներն ու տնտեսական կազմը, վորոնց աշխատանքի ժամերը չեն չափավորված, ոգտվում են լրացուցիչ մեկ շաբաթյա արձակուրդից (տես հավելված № 7) :

12. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ .

66. Առանձնապես վնասակար աշխատանքներում, ուր ավելի արագ են մաշվում հագուստը կամ կոշիկները, բոլոր աշխատավորներին տրվում է պահպանողական հագուստ և կոշիկներ, սույն պայմանագրին կցված ցուցակի համաձայն (տես հավելված № 8) :

Ծանոթութուն 1.—Աշխատավորներին այնպիսի աշխատանքի փոխադրելու դեպքում, ուր նրանց տրված մասնահագուստը գործածել չի թույլատրվում, կամ տրված մասնահագուստի մաշվելու ժամկետից առաջ արձակելու դեպքում, նրանք պարտավոր են այդպիսին վերադարձնելու գործածելու համար պիտանի դրուժյան մեջ, հակառակ պարագային, Տնտմարմինը նրանց որինական պատասխանատվություն չունի և կանչում: Պիտանիություն աստիճանը, այդ դեպքերում, վորոշում է Վարչութունը, միության մարմինների հետ համաձայնեցնելով:

2. Այն բանվորները, վորոնց արհեստները կցված ցուցակում չեն նշանակված, մասնահա-

գուստ են ստանում, ԽՍՀՄ գործող որենդբու-թյամբ նախատեսնված-նորմաների համաձայն:

3. Չտրված մասնահագուստի դիմաց դրամական հատուցում տալը թույլատրվում է որենդով նախատեսնված դեպքերում:

4. Մասնահագուստի կարկատելն ու լվա՛յլը Տնտմարմինն իր հաշվին է վերցնում, սակայն, քանի վոր ձեռնարկություններում հանվելու տեղ չկա ու անհնարին է այդպիսիները ընթացիկ տարում կառուցել, մասնահագուստը և կոշիկները, սպառվելու ժամկետը լրանալուց հետո, մնում են բանվորների մոտ, վորպես նրանց սեփականություն: Տնտմարմինը մասնահագուստի լրիվ կոմպլեկտ (հագուստ և կոշիկներ, կամ ճտկավոր կոշիկներ) ստացող բանվորներին տալիս է ամսական 45 կոպ., չորեր լվանալու (հաշված և ոճառի արժեքը) և կարկատելու համար, ըստ վորում միմիայն կոշիկներ կամ ճտկավոր կոշիկներ ստացողներին տրվում է 20 կոպ., իսկ առանց կոշիկների, միմիայն հագուստ ստացողներին—25 կոպ. ամսական:

Մասնահագուստի մնացած տեսակների կարկատելն ու լվանալը Տնտմարմնի պարտականությունների մեջ չեն մտնում, ուստի և հատուցման էլ յենթակա չեն:

5. Նոր մասնահագուստ ընդունող Հանձնաժողովի մեջ մտնում է Միության ներկայացուցիչը:

6. Մասնահագուստի վաղակետ փոխարինումը կատարվում է միմիայն այն դեպքերում, յեթև հաստատված է վոր նա փաստորեն անպետքացել է արտադրական բնութի պատճառներով:

7. Աշակերտներն ու դեռահասաներն արտադրու-

Թյան մեջ մասնահագուստ են ստանում նույն կատեգորիայի չափահաս բանվորների հետ համահավասար:

8. Մասնահագուստի և կոշիկների մաշվելու ժամկետի մեջ չի մտնում բանվորի հիվանդության, արձակուրդի ու գործալքումների (պրոգուլ) ժամանակը:

67. Բանվորի առողջության համար վնասակար աշխատանքներում, և այնտեղ, ուր թունավոր նյութեր են դուրս գալիս, անպայման պետք է տրվեն, Տընտմարմնի հաշվին չեզոքացնող միջոցներ, սույն պայմանագրին կցված ցուցակի համաձայն (տես հավելված № 9):

Մակնքուքյուն. — Ըստ կցված ցուցակի տրվելիք կաթը Ձանդկոմբինատում, մինչև այնտեղ կաթնատնտեսութուն կազմակերպելը, կարելի չէ փոխարինել անհրաժեշտ քանակությամբ յուղով:

68. Թղթատարներին և ցրիչներին, փորոնք փոստրաժանում են վոչ պակաս քան իրենց ձեռնարկության շրջանից 2 կիլոմետր հեռավորության վրա, Տնտմարմինը պարտավորվում է փոխադրական միջոցներ հատկացնել:

69. Առաջին բժշկական ոգնութուն հասցնելու նպատակով, Տնտմարմինը սույն պայմանագրին կցված հրահանգի համաձայն, պարտավորվում է բոլոր գործավարչութունների համար ձեռք բերել ղեղատնիկներ (ապտեչկա) լրիվ քանակությամբ ղեղորայքով: Տնտմարմինը պարտավորվում է շտապ կերպով փոխադրական միջոց հատկացնել հիվանդներին և դժբախտ դեպքերից տուժածներին հիվանդանոց տեղափոխելու համար (տես հավելված № 10):

70. Աշխատանքի վայրերում յեղած բաղնիքները ու

հանվելու տեղերը Տնտմարմնի կողմից պետք է մաքուր և սարքին պահվեն: Այն գործարաններում, ուր բաղնիքներ կան, տնտմարմինը պարտավորվում է նրանց կահավորել:

Մակնքուքյուն. — Ձանդկուրի Լենվաժրակի համար բաղնիք կառուցելու վերջնական ժամկետ սահմանվում է 1929 թ. հոկտեմբերի 1-ը:

71. Տնտմարմինը պարտավոր է գոյություն ունեցող համաքարային տներում կահավորել ճաշելու համար ծոտայոց սենյակներ:

72. Ձեռնարկություններում պետք է բալարար քանակությամբ լվացարաններ տնենալ—ջրով և սձառով:

Յուրքանչյուր բանվորին պետք է տրվի մեկ յեթեսարիչ—1.25 մետր, մեկ տարվա ժամանակով:

Մակնքուքյուն 1. — Կեղտոտ աշխատանքներում ըղբաղված արհեստների համար, պայմանագրին կցված ցուցակի համաձայն, բացի լվացարանների վրա գրված սձառից, ձեռնարկության հաշվին լայ և թողնվում, իրենց բանվորներին, 400-ական գրամ սձառ (տես հավելված № 11):

2. Յեթեսարիչներով բանվորները պետք է ողտվեն միմիայն աշխատանքի վայրում:

73. Ձեռնարկություններում բանփորների համար փորոչ ժամերին պետք է բալարար քանակությամբ յեփացրած սաք ջուր լինի, այլ և յեփացրած սաք ջուր—պաշաճ տեղերում:

74. Տնտմարմինը պարտավոր է աշխատանքի վայրերում բալարար քանակությամբ արտաքնուցներ տնենալ:

75. Սույն պայմանագրի գործողության ժամկետի

րնթացքում, Տնտնարմինը պարտավոր է լրիվ ուղտա-
ցործելու ԽՍՀՄ Գերօպդանտխորհի կողմից հաստատո-
ված կոնարտը թվելի համաձայն, բնակչինարարու-
թյւնը անվտանգութեան տեխնիկային, կոմմունալ կա-
ռուցվելիքներին, սանիտարային ու այլ բարեկարգու-
թյուններին 1928-29 տարվա համար հատկացված
վարկերը, ըստ իրենց անմիջական նպատակների:

76. Տնտնարմինը պարտավորվում է, ըստ կարիքի,
բնակարաններն այլ և պարբերաբար ախտահանել հան-
րակացարանները (կազմումները), մացնելով այդ
ծախսերը բնակարանների ինքնարժեքի մեջ:

13. ՃՏՄ-ի ԱՇԽԱՏԱԿՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

77. Ի լրումն կառավարական մարմինների կողմից
ճարտարապետինիկական աշխատավորների զանազան
կատեգորիաների իրավունքների և պարտականու-
թյունների վերաբերյալ հրատարակված կանոնադրու-
թյունների, Վարչութեանը պարտավորվում է մշակել
և համաձայնեցնել Միութեան հետ (ՃՏՄ բյուրո) մեկ
ամսվա ընթացքում (մինչև սթ. փետրվարի 1-ը)
մանրամասն հրահանգներ, փորձնք ճշտորեն փորձում
են յուրաքանչյուր ճարտարապետինիկական պաշտոնի
իրավունքներն ու պարտականությունները:

78. Տնտնարմինը պարտավորվում է ծառայութեան
ընդունել, համապար փորակ ունենալու դեպքում, ա-
ռաջին հերթին, Միութեան անդամ տեխնիկական աշ-
խատավորներին (ՃՏՄ), իսկ արձակելիս—առաջին
հերթին վոչ Միութեան և ՃՏՄ-ի անդամներին: Յու-
րաքանչյուր աշխատանքի ընդունվող տեխնիկական
աշխատավորի վերաբերյալ ՃՏՄ-ին իրավունք է վե-
րապահվում պատճառարանված բացարկ (տավոլ)
հայտնելու:

79. Աշխ. Որ. 47 հոդ. «ա» և «բ» կետերի հիման
վրա արձակելիս այլ և աշխատանքի պայմանները
վատթարացնելու դեպքում, վորի հետևանքով ճարտա-
րապետինիկական աշխատավորը հարկադրված է թող-
նելու աշխատանքը, նա պետք է նախադրուշացված
լինի Տնտնարմնի կողմից մեկ ամիս առաջ, հակառակ
պարագային—արձակման նպատար արվում է ամուս-
կան միջին դատումի շարիով: Իր կամքով աշխատանքը
թողնելու դեպքում, ճարտարապետինիկական աշխա-
տավորը պարտավոր է նախադրուշացնել Վարչութեանը
մեկ ամիս առաջ գրավոր: Յեթե Վարչութեանը աշ-
խատանքը թողնելու վերաբերյալ ճարտարապետինի-
կական աշխատավորի գրավոր նախադրուշացումը
ստանալուց հետո, աշխատավորի իսկ ցանկութեամբ,
կղահի նախադրուշացումից—մեկ ամսից ավելի ժա-
մանակով, ապա մեկ ամսից ավելի ժամանակի վար-
ձատրումը կատարվում է կողմերի փոխադարձ հա-
մաձայնութեամբ:

Ծանոթություն.— Վարչութեան և ճարտարապետինի-
կական կազմի միջև այդ հոդի վրա ծագելիք կոնֆ-
լիկտները քննվում են Գկչ-ում: Այդ գեպքերում
Գկչ-ի կազմի մեջ պետք է լինի և ՃՏՄ-ի ներկա-
յացուցիչը, Սեկցիայի բյուրոյի մատնանշմամբ,
վճռական ձայնի իրավունքով—բաց պարիտետի
պահպանման պայմանով:

80. Արտագրութեան յերկրորդ հերթափոխութեան
մեջ չզբաղված սեկցիայի անդամներին, Տնտնարմնի
և Միութեան համաձայնութեամբ, արվում է չարաթ-
վա աշխատանքի որերից մեկի յերեկոն—արհեստակ-
չական աշխատանքների համար:

81. Խորը ճարտարապետինիկական աշխատավորնե-
րին չարաթվա մեջ պետք է հատկացվի 42 ժամ անընդ-

Հատ հանդիսա: Մահճանված փոչ աշխատանքի որերը աշխատակը, փորպես կաննն արգելվում է: Այն դեպքերում, յեթե ալո որերը աշխատելն անհրաժեշտ է, ալոպիսին կարող է թույլատրվել միմիայն Վարչության զրափոր կարգադրությունը առանալս պայմանով: Վերջին դեպքում, նա փոխհատուցվում է համապատասխան ազատ որով կամ ժամերով, մոտակա վեց որվա ընթացքում:

Մանրություն 1.—Վոչ չափավորված բանփորական որ ունեցող ճարտարատեխնիկական կազմի պաշտոնների ցուցակը կցվում է պայմանագրին (տես հավերված № 12):

2. Վոչ չափավորված որ ունեցող ճարտարատեխնիկական աշխատավորների վրա ալս պրակր չի սարածվում, ալս նրանց աշխատանքը փոխհատուցվում է լրացուցիչ արձակուրդով, պայմանագրի 82 հոդ. համաձայն:

82. Ի լրումն Աշխ. Որ. 114 հոդ. Տնամարմինը պարտավոր է մեկ ամսով արձակուրդ հատկացնել այն ճարտարատեխնիկական աշխատավորներին, փորանց աշխատանքն ընթանում է առողջության համար փնասակար պայմաններում կամ փոչ չափավորված է համարվում:

83. Իր ունեցած պաշտոնի հետ կապված աշխատանքներն ու պարտականությունները կատարելու համար, ճարտարատեխնիկական կազմը վարձատրվում է ստորև հիշված ցանցի համաձայն—

ԿԱՐԳ	ԴՈՐԾԱ ԿԻՑ	ԴՐՈՒՅՔ
1	1.0	90
2	1.1	99
3	1.2	108
4	1.3	117
5	1.4	126
6	1.55	139 50
7	1.7	153
8	1.85	166 50
9	2.0	180
10	2 2	198
11	2.4	216
12	2.6	234
13	2.85	25 50
14	3.15	283 50
15	3.5	315
16	4.0	360

ճարտարատեխնիկական կազմի պաշտոնները և արհեստները ցանցի ալս կամ այն կարգին դասելը կատարվում է վարչության կողմից, միության հետ միասին ՄԲՀՄ Գեներալի տարրֆային տեղեկատու հիման վրա (հրատ. 1928 թ.):

84. ճարտարատեխնիկական աշխատավորի անմիջական պարտականությունների մեջ չմտնող, թեկուզ և նրա մասնագիտությանը վերաբերող, աշխատանքը կատարվում է և անպայման ալո աշխատավորի համաձայնությամբ ու հատուկ վարձատրվում է կողմերի համաձայնությամբ:

85. Տնամարմինը ճարտարատեխնիկական աշխատավորների անտնտեսավարության կամ արտադրա-

կան սխալների մեջ մեղադրելու գեպտոմ, պարտավոր
և մինչև պատասխանատվութան կանչելը, կամ գատա-
կան գործ հարուցելը, պատասխանատու եքսպերտիզա
նշանակել, միության և ՃՏՄ-ի մասնակցութեամբ:

86. Տնտմարմինը պարտավորվում է մինչև 1929 թ.
մարտի 1-ը մշակել ճարտարատեխնիկական կազմի պար-
գեատրման սխտեմն այն իրական նվաճումների և կա-
տարելագործումների համար, վորոնք վորոշ տնտեսում
են տալիս: Պարգեատրման ֆոնդը կազմվում է ստաց-
ված տնտեսումից վորոշ տոկոսային մասնահատումներ
անելու միջոցներով: Պարգեատրման սխտեմն ու ֆոն-
դի մասնահատումների տոկոսը համաձայնեցվում է
միության մարմինների հետ, ընդ վորում, սխտեմի
գործողութեան տեղադրությունը, վորպես կանոն, վեց
ամսից պակաս լինել չի կարող:

87. Վոչ չափավորված բանվորական որ ունեցող
յուրաքանչյուր աշխատողի հետ, տնտմարմինը պար-
տավոր է անհատական պայմանագիր կնքել, վորը չի
կարող վատթարացնել սույն պայմանագրով և աշխա-
տանքի վերաբերյալ գործող որևէ գրութեամբ նախա-
տեսնված, նրանց աշխատանքի պայմանները:

88. Ճարտարատեխնիկական աշխատավորն իր-
վունք չունի առանց վարչութեան համաձայնութեան,
գուղավար պաշտոններ վորել:

89. Տնտմարմինը պարտավոր է ղրքմական միջոց-
ներ բաց թողնել ճարտարատեխնիկական աշխատավոր-
ների վորակի բարձրացման ձեռնարկումներ կազմակեր-
պելու համար այն և—գործուղումներ, եքսպերտիաներ
ԽՍՀՄ ներսում, գործուղումներ զիտատեխնիկական
համագումարներին և խորհրդակցութեաններին, այլ և

տեխնիկական զրադարանների կազմին ու կոմպլեկտա-
ցումը:

Այս նպատակների համար անհրաժեշտ դումարների
չափը, նրանց ծախսման կարգն ու ձեռնարկումների
կիրառումը, այլ և ճարտարատեխնիկական աշխատ-
վորների գործուղումների կարգը, համաձայնեցվում են
միության (ՃՏՄ) հետ: Նշված բոլոր գեպերում գոր-
ծուղվածի գատումն իրեն է թողնվում:

14. ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

90. Ի յրումն Աշխ. Որ. 121 և 128 հոդ. սահման-
վում է հետևյալը.—

ա) Դեռահասների քանակը ձեռնարկութեաննե-
րում, ԽՍՀՄ կենտրոնի և Ժողկոմխորհի 1928 թ.
ոգոստոսի 1-ի վորոշմամբ սահմանվածից ավելի քիչ
լինելու հերոզ (տես հոգեմած № 13 և 14):

բ) Յերեք ամիսը մեկ անգամ պետք է ստուգվեն
ձեռնարկութեան մեջ յեղած առեա սեռահասների քա-
նակը, և յեթե այդպիսին սահմանվածից պակաս յե-
ղավ, պետք է լրացնել:

գ) Աշակերտութեան ստորարժանումն ըստ նրա
տեսակների կատարվում է տնտմարմնի կողմից, միութ-
թեան հետ միասին, վորակյալ բանուժ պատրաստելու
տեսակետից ու արտադրութեան շահերի համեմատ:

դ) Աշակերտները չեն կարող ոգտադործվել իրենց
ուսուցմանը չվերաբերող աշխատանքներում:

յե) Աշակերտները պետք է ղեռահասների բրոնյայում
գտնվեն մինչև 18 տարեկան հասակը, վորից հետո
բրոնյայից դուրս են գրվում: Ձեռնարկութեան մեջ
պետք է պայմաններ ստեղծվեն, վորպեսզի նրանք ան-
հրաժեշտ վորակ կարողանան ձեռք բերել ու թողնվեն
աշխատելու չափահաս բանվորների հետ հալասար:

դ) Շող և վնասակար համբարություններում, այլ և ծանր աշխատանքներում, սահմանված քանակի հաշվին մնում են վերահասներ (պերերտակի): Նրանց բրոնյայի մեջ մտնելու ժամկետը վորոշվում է ուսուցման ժամկետով:

ե) ՖՊՈՒ-սի գպրոցներում ուսանելու ժամկետը սահմանվում է յերեք տարի, իսկ խմբակային (բրիգադային) և անհատական աշակերտության համար—յերկու տարի, ըստ վորում աշակերտներին մեկ հիմնարկությունից մյուսը փոխադրելիս, նույն կամ համանման արհեստի մասնելու պայմանով, հաշվի յե առնվում առաջին ձեռնարկության մեջ, ուսման համար, նրա անցկացրած ժամանակը:

91. Տնտնարմինը պարտավոր է իր հաշվին պահել Ֆերեանի ՖՊՈՒ-սի գպրոցում արդեն սովորող 30 աշակերտներին:

Մանրություն.—Տնտնարմինը պարտավորվում է ՖՊՈՒ-սի գպրոցների շրջանավարտներին տեղավորել Տրեստի գործարաններում, տրամաշրջելով նրանց վորակին համապատասխանող տեղեր: Տրեստի ձեռնարկներում տեղ չլինելու դեպքում—նրանք տեղավորվում յեն այլ ձեռնարկներում, համաձայնեցնելով աչգ խնդիրը համապատասխան մարմինների հետ:

92. Տնտնարմինը պարտավորվում է խմբակային և անհատական աշակերտության համար մասնագիտական տեսական գիտելիքների գիշերային դասընթացներ բացել հետևյալ կետերում—Ալլաշվիերգու կոմբինատի համար—Լենխմբակում կամ Մարքսի անվան գործարանին կից, Չանգեղուրի կոմբինատի—Լենխմբակում կամ «Կարմիր Նոյեմբեր» գործարանին կից: Ուսման ծրագիրը մշակում է Արհզլիլուսովարը, տնտնարմինի և միության մասնակցությամբ:

գիրը մշակում է Արհզլիլուսովարը, տնտնարմինի և միության մասնակցությամբ:

Մանրություն.—Դասընթացների ուսման ժամկետը սահմանվում է 96 ժամ տարեկան:

93. Աշակերտներին սխտատվարձ արվում է ըստ նրանց փաստական վորակի լրիվ տարիֆային դրույթով կրճատ բանվորական որվա համար: Աշակերտների վորակը վորոշվում է յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ տնտնարմինի և միության ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից:

Մանրություն.—1. Վորպես եքսպերտներ անհրաժեշտ է հանձնաժողովի աշխատանքներին մասնակից անել արտադրական ուսուցման հրահանգիչներին, այլև ձեռնարկության ճարտարագետներին:

2. Աշակերտներին իրավունք է տրվում քննության յենթարկվելու և մինչև սահմանված ժամկետը—վարպետի կամ ուսման ղեկավարի առաջարկությամբ, ինչպես նաև իր անհատական դիմումով ԳԿՀ-ին:

94. ՖՊՈՒ-սի գպրոցի աշակերտներին թույլատրվում է ըստգործյա աշխատանք կատարել ուսման յերբորդ, իսկ անհատական խմբակային աշակերտությունը—ուսման յերկրորդ տարվանից:

95. Ըստգործյա աշխատանքներում գրազված ղեռահասներն ու աշակերտները վարձատրվում են գործող ընդհանուր ըստգործյա գնահատումներով, կրճատ բանվորական որվա համար, հավելմամբ ըստ տարիֆի:

96. Ձեռնարկություններում վոչ վորակյալ աշխատանքներում գրազված համապատասխան վորակի բանվորական յերիտասարգության լինելու դեպքում, վորակյալ բանվորների ազատվող տեղերը, պետք է

հանձնվեն բանվորական յերիտասարդությանը—չափա-
հաս բանվորների հետ համահավասար:

97. Արտադրության մեջ ոժանդակ և վոչ վորակ-
յալ աշխատանքներում զբաղված գեոահասանները վար-
ձատրություն են ստանում հասակավոր բանվորների
հետ համահավասար չափով:

Մանրություն.—Դեոահաս աշակերտները, վորոնք
չափահասանների հետ հավասար վորակի աշխատանք-
ներն են կատարում, պետք է չափահասանների հետ
համահավասար վարձատրություն ստանան:

98. Անհատական աշակերտությանը կից վարակա-
ներին և վորակյալ բանվորներին, անչափահասաններին
սովորեցնելու համար լրացուցիչ վճարվում է սովո-
րեցնող վարակաի տարիճային զբույքի 15-25 տո-
կոսի չափով, ըստ վորում սովորեցնողը, յարաբանչյուր
լրեն հանձնված աշակերտի համար ստանում է այդ
զումարի 50 տոկոսը, իսկ մնացած գումարը տրվում է
նրան վեց ամիսը լրանալուց հետո և միմիայն այն դեպ-
քում, յեթե աշակերտը քննությունը հաջող կտա:

99. Անչափահասաններին արձակուրդներ պետք է
արվեն մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը: Արձա-
կուրդը վոչ մի դեպքում չի կարելի մասհատել այլև
փոխարինել զբամական հատուցմամբ:

100. Տնտմարմինը պարտավոր է խմբակալին աշա-
կերտությանը տրամադրել անհրաժեշտ գործիքներ:

101. Անկախ նրանից, յե կա արդյոք հասարկային
պաշտոն, տնտմարմինը պարտավոր է յույլ տալ վոր-
ձի յենթարկվելու չափահաս բանվորներին և յերիտա-
սարդությանը, վորոնք նման ցանկություն կհայտնեն:
Փորձից հետո, տնտմարմինը բանվորին տեղեկանք է
տալիս, մասնանշելով նրա մեջ այն վորակը ու կարգը,
վորի համար վորձի յե յենթարկվել բանվորը:

Սրա հետ միասին, հերթականության կարգով,
պատված պաշտոնների համար բանվորները կարգից
կարգ են փոխադրվում:

102. Վնասուհար և չոյ տեղեր աշխատանքի մասձ
աշակերտների և գեոահասանների աշխատավարձը պետք
է սկսվի աշակերտական ցանցի յերկրորդ կարգի զբույ-
քից:

103. Բրանչոյի մեջ ընդունվող գեոահասաներ,
բժշկական քննության են յենթարկվում—արդյունաբե-
րության տվյալ ճյուղի աշխատանքների համար, ա-
վելի տուղճներին և ֆիզիքապես սլտամիներին քնարե-
յու նպատակով:

15. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԳԱՏՐԱՍՏՈՒՄԸ

104. Տնտմարմինը իս վրա յե վերցնում արտատրո-
թյան աշխատավորների վերապատրաստման համար
կարճատև դասընթացքների կազմակերպման և պահ-
պանման ծախսերը:

Դասընթացքների պահպանման ծախսերի մեջ պետք է
մտնեն—վարչամանկավարժական և տեխնիկական կազ-
մի աշխատավարձը, դասընթացքների բոլոր սենյակների
վերանորոգումն ու պահպանումը, այլ և ուսման ձեո-
ւարկները ու գործնական զբաղմունքների համար ան-
հրաժեշտ նյութերի և գործիքների գնումը:

16. ԿՈՒՆԸ-ԱՅԽԱՍԱՆՔ

105. Միության վոյճ կույտաշխատանքի համար
տնտմարմինը մասնատրում է բանվորների և ծաոայող-
ների աշխատավարձի ընդհանուր գումարի մեկ տոկո-
սը, վորպիսին հանձնվում է միությանը աշխատավարձ
տալու հետ միաժամանակ:

106. Բացի կուրամանատրումներից, տնտեսամի-
նը պարտավորվում է ընթացիկ վերանորոգումներ կա-
տարել ակումբներում և գրադարաններում և յեթե դը-
րանք գտնվում են ձեռնարկությունների վայրում,—
նաև ջեռուցել ու անհրաժեշտ քանակությամբ ելեկ-
տրո-եներգիա մատակարարել:

Ծանոթ.—Այդ արտոնությունները տարածվում են
նաև Չանդեգուրի կոմբինատի մեծապագործների
ակումբի վրա:

17. ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

107. Չեռնարկության միութենական մարմինների
պահպանության համար աշխատավարձը վճարելու հետ
միաժամանակ, տնտեսամիներ վճարում է գործատուին
բանվորների և ծառայողների ընդհանուր աշխատա-
վարձի գումարը 1 և 1/4 տոկոսը:

108. Հատկացումների չափը սահմանելիս «աշխատա-
վարձ» հատկացություն մեջ մտնում են տվյալ ամսվա
ընթացքում վճարված աշխատավարձի բոլոր տեսակ-
ները, բացառությամբ—

ա) Հատուկ հանձնարարություններ կատարելու հա-
մար տրված պարգևային և միանվագ վարձատրու-
թյուններ:

բ) Արձակման նպատները—աշխատանքից հեռացնե-
լու ու միանվագ նպաստի—դիմիտրական ծառայության
կանչելու դեպքում:

գ) Գործուղումների և փոխադրումների ժամանակ
տրվող որսապահիկների և գործուղումների, այլ և այն
գումարների, վոր տրվում են վորպես գործուղումների
և փոխադրումների հետ կապված ծախսերի հատուցում:

դ) Չողապագործված արձակուրդի, գործիքների մաշ-
վելու, չարված մասնահագուստի, պահպանման պա-
րագանների, մասնկաթի փոխարեն տրվող հատուցման:

109. Ի լրումն Աշխ. Ար. 155 հոդ. սահմանվում է
հետևյալը.—

ա) Տնտեսամիներ պարտավորվում է միութենական
մարմիններին տեղերում հատկացնել կահավորված
սենյակներ գրասենյակի համար—ջեռուցմամբ և լույ-
սով:

բ) Տնտեսամիներ պարտավորվում է ձեռնարկության
չրջապեղում—միութենական մարմինների պահանջմամբ,
փոխադրական միջոցներ հատկացնել, ընդհանուր հի-
մունքներով:

գ) Տնտեսամիներ սխարտավոր է բնակարաններ հա-
կացնել ազատ պրոֆաշխատակիցներին, մյուս բանվոր-
ների հետ համահավասար հիմունքներով:

110. Տնտեսամիներ պարտավորվում է սույն պա-մա-
նագիրը իր բոլոր հավելվածներով առանձին թերթերի
վրա բացված ձևով ապագրել հայերեն և ռուսերեն լե-
զուներով, և ուղարկել տեղերին, տեսանելի տեղերում
կախելու համար: Բացի դրանից, մինչև 1929 թ. փե-
տրվարի վերջը սույն պայմանագիրը բոլոր հավելված-
ներով պետք է տպագրված լինի 200 օրինակ սրբույկ-
ների ձևով—բանվորներին բաժանելու համար:

111. Սույն պայմանագիրն ունի հետևյալ հավել-
վածները—

№ 1. «Ժամանակավոր բանվորների և ծառայողների
աշխատանքի պայմանների մասին»—ՈՍՀՄ Կենտգործ-
կոմի և Ֆոդկոմխորհի 1927 թ. հունվարի 14-ի վորո-
շումը.

№ 2. Կրճատ բանվորական օր ունեցող արհեստների
ցուցակը.

№ 3. Միջին դասումի հաշվելու կարգի մասին—ԽՍՀՄ Աշխտողկոմատի 1924 թ. հունիսի 17-ի № 268-426 վորչումը.

№ 4. Վոչ լրիվ ամսվա աշխատավարձը հասվելու կարգի մասին—ԽՍՀՄ Աշխտողկոմատի 1924 թ. նոյեմբերի 14-ի № 467-439 պարզարանումը.

№ 5. Պատժացուցակ.

№ 6. Յուցակը աշխատանքի, վորոնց լրացուցիչ յերկշաբաթյա արձակուրդ և հասկացվում:

№ 7. Վոչ չափավորված բանվորական որ ունեցող հաշվադրանեկային պաշտոնների ցուցակը.

№ 8. Մասնաճարգուտի ցուցակը.

№ 9. Յուցակ աշխատանքի, վորոնց աշխատանքի պայմանների վնասակարության պատճառով որական մեկ չիշ կաթ և արվում.

№ 10. Հրահանգ-թշկական ատաջին սզնության կազմակերպության մասին.

№ 11. Յուցակ աշխատանքի, վորոնց (հատկապես իրենց) ամսական 400 դր. ոճառ և արվում.

№ 12. Յուցակ վոչ չափավորված բանվորական որ ունեցող ճարտարատեխնիկական կազմի պաշտոնների.

№ 13. «Գեոհասանքի», բրոնիայի նվազագույն նորմաների մասին» ԽՍՀՄ Կենտրոնիկոմի և Ժողկոմխորհի 1928 թ. սպտտոսի 1-ի վորչումը.

№ 14. «Գեոհասանքի, բրոնիայի մասին» ԽՍՀՄ Աշխտողկոմատի 1928 թ. հոկտեմբերի 22-ի №.—619 հրահանգը.

№ 15. Կանոնադրություն ԳԿՀ-ի մասին.

№ 16. Եւրքին կարգապահության կանոնները.

№ 17. Յուցակ աշխատանքի, վորոնց աշխատանքը հաշվառման չի յենթարկվում:

Մետաղագործների Միության «Հայրկինձ» Տրեստի վարչութ. Կենտրոնության Նախագահ Ի. ՉԵԿԱՍԻՆ

Պատ. քարտուղար՝ ՅՆ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Բաժ. վարիչ՝ Ա.Ր. ՄԻԿԱՅԵԼՅԱՆ

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԻԿԱՆ ԳՈՐԾԱՂԿՈՄԻՏԵՆԻ

1927 թ. հունվարի 14-ին.

«Փամանակավոր բանվորների և ծառայողների աշխատանքի պայմանների մասին».

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտեաների Սորհուրդը վորոշում են.—

1. Փամանակավոր բանվորներ և ծառայողներ համարվում են.—

ա) Այն բանվորներն ու ծառայողները, վորոնք վարձվում են վորոշ փամանակով—մինչև յերկու ամիս, կամ անվորոշ փամանակով,—բայց վոչ ավելի յերկու ամսից.

բ) Այն բանվորներն ու ծառայողները, վորոնք թեև վարձվում են յերկու ամսից ավելի, բայց վոչ ավելի քան չորս ամսով փոխարինելու փամանակավորապես լացակայող աշխատավորներին, վորոնց պաշտոնը որինական հիմունքներով թողնվում է իրենց:

2. Վորպես փամանակավոր բանվորներն և ծառայողներ վարձվող աշխատավորները պիտի այլ մասին նախադուշացված լինեն աշխատանքի պայմանագրեր կնքելու փամանակ:

3. Փամանակավոր բանվորները և ծառայողները վրա աշխատանքի ընդհանուր որենադրության դործողությունը տարածվում է, սույն վորոշման հետագահողվածներով սահմանված բացառություններով:

4. Տվյալ ձեռնարկության կամ անտեսության մեջ դործող հավաքական պայմանագրեր (տարիֆային

համաձայնությունը) փամանակավոր բանվորներին և ծառայողներին վրա տարածվում է միմիայն այդ պայմանագրով (համաձայնությամբ) նախատեսված դեպքերում և սահմաններում:

5. Փամանակավոր բանվորներին և ծառայողներին հաշվեգրություններ են տրվում անկախ նրանց վարձման փամակաից, յեթև աշխատավորը վարձվել է յերկու շաբաթից ավելի փամանակով, կամ փաստորեն, յերկու շաբաթից ավելի յե աշխատել:

6. Վարձվողը կարող է լուծել պայմանագիրը նախադուշացնելով վարձակալին հեռանալուց մի որ ասը:

7. Վորոշ փամակետով փամանակավոր բանվորներ և ծառայողներ վարձելու դեպքում, վարձակալը կարող է լուծել պայմանագրերը.—ա) հիմնարկության, ձեռնարկության կամ անտեսության լրիվ կամ մասնակի լուծարել յենթարկվելու, այլև հիմնարկության, ձեռնարկության կամ անտեսության աշխատանքները կրճատվելու դեպքում, բ) արտադրական ընդլթի պահանջներով ձեռնարկության կամ անտեսության աշխատանքները մեկ շաբաթից ավելի փամանակով ընդհատվելու դեպքում, գ) յեթև պարզվում է, վոր վարձվողը անպեաք է այն աշխատանքին, վորի համար վարձված է, դ) յեթև վարձվողը չի կատարել այն պարտականությունները, վոր նրա վրա դրված են յեպել աշխատանքի պայմանագրով կամ ներքին կարգապահության կանոններով, յե) յեթև վարձվողը իշխանության համապատասխան մարմինների կողմից քրեյական պատասխանատվության է կանչվում իր աշխատանքների հետ կապ ունեցող արարքի համար, այլ և մեկ շաբաթից ավելի փամանակով կարանքի տակ գտնվում, զ) առանց հարգելի պատճառների մեկ ամսվա

ընթացքում յերեք որից ավելի աշխատանքից բացակա-
յելու դեպքում, և) ժամանակավորապես աշխատունա-
կուն թյունը կորցնելու պատճառով մեկ շաբաթից կամ
ալլ հարգելի պատճառներով յերեք որից ավելի ժամա-
նակով աշխատանքից բացակայելու դեպքում :

ԾԱՆՈՒՅՆՈՒՅՐՅԱԼԻ .— Մույն հոդվածում թված դեպքե-
րում, արձակելու համար, չի պահանջվում ԳԿՀ-ի
նախնական վորոշումը, բայց վարձվողն իրավունք
ունի բողոքարկել արձակումը կոնֆլիկտային կար-
գով, բոս վորում սխալ արձակման դեմ բողոքը
պետք է արվի վոչ ուշ քան արձակելու որվանից 2
շաբաթվա ընթացքում :

8. Ժամանակավոր բանվորներն ու ծառայողները,
վորոնք վորոշ ժամանակով են վարձված, ու արձակ-
ված են հիմնարկության, ձեռնարկության կամ սնտե-
սության լուծարքման, աշխատանքների կրճատման
կամ մեկ շաբաթից ավելի ժամանակով ընդհատվելու
պատճառով (7 հոդ. «ա» և «բ» կետեր) պիտի վարձա-
կալի կողմից նախազգուշացված լինեն արձակելուց յե-
րեք որ առաջ: Չնախազգուշացնելու դեպքում, նրանց
արձակման նպատտ և տրվում 3 որվա միջին դատումի
չափով :

Վորոշ ժամկետով վարձված ժամանակավոր բան-
վորների և ծառայողների արձակման մնացած բոլոր
դեպքերում (7 հոդ. «գ» «դ» «յե» «զ» և «ե» կետերը)
արձակման մասին նախազգուշացնել կամ արձակման
նպատտ տալ չի պահանջվում :

9. Ժամանակավոր բանվորներին և ծառայողներին
վորոշ ժամանակով վարձելու դեպքում, վարձակառն 1-
րավունք ունի լուծել պայմանագիրն առանց պատճառա-
բանության, նախազգուշացնելով վարձվողին արձակե-

լուց մեկ որ առաջ, կամ չնախազգուշացնելու դեպքում,
վճարելով նրան որական միջին դատումը :

10. Վարձակալի կողմից յր վրա վերցրած պարտակա-
նությունները չկատարելու դեպքում, վարձվողն իրա-
վունք ունի արձակման նպատտ ստանալու 3-որյա մի-
ջին դատումի չափով, վորոշ—մեկ ամսից ավելի ժա-
մանակով վարձելու դեպքում և մեկ որյա միջին դա-
տումի չափով—մնացած դեպքերում :

11. Ժամանակավոր բանվորի կամ ծառայողի աշ-
խատանքը մեկ շաբաթից ավելի տևելու դեպքում, աշ-
խատավարձը վարձվողի պահանջմամբ պիտի նրան
վճարվի յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամից վոչ
ուշ :

ԾԱՆՈՒՅՆՈՒՅՐՅԱԼԻ .— Մույն վորոշման ուժը չի տարած-
վում այն ժամանակավոր բանվորների և ծառայող-
ների վրա, վորոնք վարձվում են ժամանակավորա-
պես բացակայողներին փոխարինելու համար: (1
հոդ. «բ» կետը) :

12. Հաշվարկը (ուսուչյոտ) սխալ կազմելու վերաբեր-
յալ բողոքները պետք է արվեն վոչ ուշ, քան վերջնական
հաշվարկը կատարելուց մեկ ամսվա ընթացքում :

13. Վեց որից վոչ ավելի ժամանակով վարձելու
դեպքում, աշխատանքը—շաբաթական հանգստի, տոն
և հանգստի հատուկ որերը, ալլ վեց որվա չըջանում,
կարող և կատարել առանց պահանջու կոնֆլիկտային
հանձնաժողովի և աշխատանքի տեսչության հավանու-
թյան ու վարձատրվում և պայմանավորված աշխատա-
վարձից վոչ ավելի բարձր չափով :

Այդ դեպքերում, ահհրաժեշտ չի նաև աշխատանքի
տեսչության կրճատումը շաբաթական հանգստի և
տոն որերի նախորդակին :

14. Յեթե ժամանակավոր բանվորը կամ ծառայողը իր աշխատանքը չի կատարել վարձակալի կողմից աշխատանքը դադարեցնելու վերաբերյալ կարգադրելու պատճառով, սպա բաց թողնված ժամանակի, բայց մոչ ավելի քան մեկ շաբաթվա համար, աշխատավարձը արվում է նրա տարիֆային դրժույկի չափով: Աշխատանքն իրենից անկախ պատճառներով դադարեցնելու ալլի վարձակալի կարգադրությամբ մեկ շաբաթից ավելի ժամանակով աշխատանքը չկատարելու դեպքում բաց թողնված ժամանակի վարձատրության չափը վորոշվում է կողմերի համաձայնությամբ:

15. 1925 թ. սեպտեմբերի 18-ի պարտադիր դինվորական ծառայության մասին (ՍՍՀՄ Որ. հավ. 1925 թ. № 62 հոդ. 463) որենքով նախատեսված պարտականություններ կատարելու պատճառով ժամանակավոր բանվորների և ծառայողների կողմից աշխատանքը դադարեցնելու դեպքում, նրանք պաշտոնից և դատումից զրկվում են:

Միանվագ նպաստ, պաշաճ դեպքերում, արվում է մեկ ամսից ավելի աշխատածներին—շաբաթական միջին դատումի, և վեց սրվանից ավելի բայց մեկ ամսից մոչ ավելի աշխատածներին—յերեք սրվա միջին դատումի չափով: Վեց սրվանից մոչ ավելի աշխատածներին նպաստ չի արվում:

16. Վարձակալի ստորագրած չի աշխատատեղի վճարելու ժամանակի համար, յերբ վարձվողը չի աշխատել արհեստակցական ու կոոպերատիվ կազմակերպությունների կողմից դումարած համազումարներին, կոնֆերանսներին ու պատգամավորական ժողովներին, վորպես ներկայացուցիչ—մասնակցելու պատճառով:

17. Ժամանակավոր բանվորներին և ծառայողներին, վարձակալի կարգադրությամբ, աշխատանքի մեկ

վայրից մյուսը անդալիսելու դեպքում, վարձվողին հատուցվում են փոխադրության հետ կապված ծախսերը: Փոխհատուցման մնացած մեկերը, ալլ և փոխադրության ժամանակաշրջանի աշխատավարձը սահմանվում են կողմերի համաձայնությամբ:

18. Վարձվողի գործիքների մաշվելու համար արվելիք հատուցումը կողմերի համաձայնությամբ, կարող է մուծվել աշխատավարձի մեջ:

19. Ժամանակավոր բանվորներն ու ծառայողները արձակուրդի կամ սրան փոխարինող հատուցման իրավունք չունեն:

20. Ժամանակավոր բանվորներին և ծառայողներին արվում է մասնահազուստ (ձեւնոցներ, դոդնոցներ և ալլն) և անհրաժեշտ պահպանողական սարքանքներ, արտադրության վնասակարությունից պաշտպանվելու համար (կեւսպիրատներ, ալկոնցներ և ալլն) ՍՍՀՄ Աշտողկումատի հատուկ հրահանգի համաձայն:

21. Ժամանակավոր բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրության խնդիրները կանոնավորվում են Աշխատանքի և Պաշտպանության Սորհրդի հատուկ վորոշումներով:

22. Յույն վորոշման ուժը չի տարածվում հետեյալ դեպքերի վրա.—

ա) Յերբ ժամանակավոր բանվորը կամ ծառայողը 1 հոդ. «ա» և «բ» կետերում նշված ժամկետից ավելի չի աշխատել, աշխատանքի հարաբերությունների յերկարաժաման պատճառով, բ) յերբ արձակված ժամանակավոր բանվորը կամ ծառայողը նորից աշխատանքի չի կանչվում նույն հիմնարկությունը, ձեւնարկությունը կամ անտեսութունը մեկ շաբաթից մոչ ավելի ընդմիջումից հետո, ըստ վորում նրա աշխատանքի ժամկետը մինչև ընդմիջումը և ընդմիջումից հետո

ընդհանուր առժամը համապատասխանորեն պիլի յի յերկու կամ չորս ամսից :

Նշված յերկու դեպքերումն էլ բանվորը կամ ծառայողը ժամանակավոր չի համարվում, նրա և վարձակալի միջև աշխատանքի հարաբերութեան ծագման պահից : Մահացի, ժամանակավոր բանվորներին կամ ծառայողին մշտական աշխատանքի փոխադրելու դեպքում, մինչև նրա փոխադրումը կատարված սոցալաճովադրական մուծումների վերահաշվում չի կատարվում :

23. Սեզոնային աշխատանքներում դաստիարակված ժամանակավոր բանվորներին և ծառայողներին նկատմամբ, բացի սույն վորոշման 1—22 հոդ. հոդ. կիրառվում են հետևյալ կանոնները—ա) աշխատանքի ժամանակի անողությունը, աշխատանքի վարձատրութեան չափն ու կարգը կարող են վորոշվել կողմերի համաձայնում են ժամը նույն հիմունքներով, ինչ վոր սահմանված են ավրայ սեզոնային աշխատանքներում դրողված համապատասխան կատեգորիաների մյուս աշխատավորների համար, բ) արտաժամյա աշխատանքներ թույլատրվում են ավրայ սեզոնային աշխատանքներում դրողված համապատասխան կատեգորիաների մյուս աշխատավորների համար սահմանված կարգով, գ) սեզոնատար աշխատանքները վերջանալու պատճառով, ժամանակավոր բանվորին կամ ծառայողին արձակելու դեպքում, արձակվածն մասին նախազգուշացնել կամ արձակման նպատակով չի պահանջվում :

23. Սույն վորոշումն ուժի մեջ է դրվում նրա հրատարակման պահից : Դաշնակից հանրապետությունների կենտրոնարձկաններին սահմանվում է սույն մարտի 20-ին ամսոցվորին մացնել դաշնակից հանրապետությունների աշխ. արենագրքի մեջ :

ԽՍՀՄ ԿԳԿ Նախագահ Մ. ԿՍԼԻՒԻՆ
ԽՍՀՄ ԺԿՍ Նախագահի Տեղակիտ Ս. ՅՅՈՒԲՈՒԳՍ,
ԽՍՀՄ ԿԳԿ Քարտուղար՝ [Redacted]

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԿՐՃԱՏ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ ՌԵՆԵՑՈՂ ԱՐԶԱՍՏԵՐԻ
Գ-ԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ :

ա) Կուլուշիկ

1. Մանրացնողներ
2. Վաղոնապաններ
3. Բարձրողներ
4. Կշտողներ
5. Մեքենավարներ

բ) Ավան-կուրգի

1. Վարպետներ և նրանց ողնականներ
2. Կուսնահատներ
3. Առվապաններ

գ) Կոնվերտոր

1. Վարպետներ
2. Վարպետների ոգևականներ
3. Խողովակագործներ (փութով չչիկ)
4. Վաղոնապաններ
5. Հերթապահ փականագործներ և կաթալուսործներ, վորոնք սպասարկում են կոնվերտորը և Վասիլ-ժուհեոր ու աշխատում վնասակար պայմաններում կես հերթափոխությունից վոչ պակաս
6. Շրակով չչիկներ
7. Տուտիբով չչիկներ—կոնվերտորի չոյ ժամանակը աշխատելու

դ) Շպլեյգոփեն

- 1. Վարպետները (յոթը ժամ)
- 2. Պղինձ թափողները
- 3. Բանվորները հնոցի մոտ (յոթը ժամ)
- 4. Մեխանիքական համալսարանի բանվորները մըլտապես ինքնուրույնությամբի ժամանակ (ափառակենսայտ սփարկա) —

յե) Լարոբատորիա

- 1. Լարոբանտներ
- 2. Լարոբատորիայի վարիչներ
- 3. Լարոբատորիայում մշտնապես աշխատող բանվորները

զ) Չուլմանի համալսարանը

- 1. Բանվորներին այն դեպքերում յեթե ձուլումն կատարվում է վոչ պակաս քան շարաթական յերեք անգամ :
- Ծանոթություն. — Շողագործները, շիշենիկները և ձեկագործները, յեթե մեկուսացված են համալսարանից — չեն սղավում կրճատ բանվորական որով :

Մետաղագործների Միությունը «Շալպղինձ» Տրեստի վարչ. կենտ. Վարչությունը նախագահ՝ Ի. Չեկուսին
 նախագահ՝ Հ. ԴեմարձՅԱՆ Աշխ. Տնտ. Բաժնի վարիչ՝ Ա.Ր. ՄԻԲԱՅՆԻՅԱՆ
 Պատ. Բարաւար՝ Ա.Ր. ՄԻԲԱՅՆԻՅԱՆ
 Յե ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Վ Ո Ր Ո Շ Ո Ի Մ № 268/426

ԽՍՀՄ ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ

1924 թ. հունիսի 17-ին.

Միջին դատումը հաշվելու կարգի մասին.

Աշխ. Որենսդրքի 68 հոդ. ծանոթության հիման վրա և ի վերացումն Աշխատողկամատի և ՀՍՄԿԽ-ի 1922 թ. հունիսի 29-ի վորսչման (հրատարակված է «ՏԻՈՒԻ» թեոթի № 141-ում), ԽՍՀՄ Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատը սահմանում է, Աշխատանքի Որենսդրքի 68, 77, 79, 81 և 89 ու 91 հոդ. ծանոթությամբ նախատեսված դեպքերում վճարվող միջին դատումի հաշվելու հետևյալ կարգը. —

1. Վերահիշյալ դեպքերում աշխատանքի տևողությամբ վարձատրություն ստանալիս, աշխատավորը ստանում է իրեն հասանելիք աշխատավարձը :

2. Ըստագործյա (սղեւնուտ) վարձատրության դեպքում, նշված պատճառներով բաց թողնված յուրաքանչյուր բանվորական որվա համար, բանվորին տրվում է նախորդ շրջանի փաստական միջին ամսական դատումի 1/24 :

Նախորդ շրջանը պիտի համարել՝ — 2 չարաթ բաց թողնելու դեպքում (12 բանվ. որ) և ավելի — վարձատրման նախորդ 3 ամիսը : 3 որից ավելի և 12 բանվորական որից պակաս բաց թողնելու դեպքում, վարձատրման նախորդ ամիսը : Մինչև 3 որ բաց թողնելու

դեպքում, որական միջին դատումը հաշվում է ընթացիկ ամսվա մնացած բանվորական որերի փաստական դատումով:

3. Աշխատավարձի (սույն վորոշման 1 հոդ.) և փաստական դատումի (սույն վորոշման 2 հոդ.) մեջ մըտնում են ինչպես հիմնական վարձատրությունը, նույնպես և մշտական բնույթ կրող աշխատանքի վարձատրման այլ ձևերը: Միանվայ վճարումները (տանտյեմներ, պարգևանորոշյուններ և այլն) միջին դատումի մեջ չեն մտնում: Նախորդ շրջանի արտաժամյա աշխատանքների համար ստացված վարձատրությունները միջին դատումի մեջ են մտցրվում միմիայն ան ձեռնարկություններում, ուր նման աշխատանքների կատարումը սխտեմատիկ բնույթ է կրում և առաջանում է արտադրության առանձնահատուկ սրայաններից:

4. Յեթե աշխատանքը չկատարելու ընթացքում— աշխատանքի վարձատրման սրայանները (տարիֆային դրույքները, բազորժյա գնահատումները, մշակման նորմաները և այլն) փոփոխվել են դեպի մեկ կամ մյուս կողմը, ապա այդ փոփոխությունների համեմատ— փոփոխվում է և միջին դատումի չափը:

5. Արձակման նպատակից հաշվելիս (ԱՇՍ. Ար. 80, 88, 89, հոդ.) միջին դատումը սահմանվում է սույն վորոշման 1 և 3 հոդ. համաձայն:

6. Հավաքական սրայանադրով կարող են սահմանվել միջին դատումի հաշվելու այլ ձևերը, այն պայմանով, յեթե այդ համաձայնությունը չի վատթարացնում աշխատատեղների արտադրությունը— Ա. Ս. Ար. նորմաների և սույն վորոշման 1-5 հոդ. համեմատությամբ:

7. Սույն վորոշումը չի տարածվում սոցիալական ապահովագրության կարգով արվող նպաստների չափը վորոշելու համար միջին աշխատավարձը հաշվելու դեպքերի վրա: Միջին աշխատավարձը հաշվելու կարգը այդ դեպքերում սահմանվում է Աշխտոգկոմատի հասուկ վորոշումներով:

ԽՍՀՄ Աշխտոգկոմատի տարիֆ-կոնֆլիկտ.

ր. մի վարիչի-ոգնական՝ ԿՈՐՇՈՒՆՈՎ.

ԽՍՀՄ ԱՇԽԺՈՂԿՈՄԱՍԻ

1924 թ. նոյեմբերի 14-ի

վոչ լրիվ ամսվա աշխատավարձը հաշվելու կարգի մասին.

ԽՍՀՄ Աշխատանքի Ժողովրդական Կոմիտարիատը պարզարանում է, վոր աշխատանքն ըստ Ժամանակի (ամսական) վարձատրելու դեպքում—վոչ լրիվ ամսվա աշխատավարձը հաշվում է հետևյալ հիմունքներով,—

1. Ամսվա ընթացքում 15-որից ավելի քիչ ծառայության մեջ յեղած անձինք վարձատրություն են ստանում ամսական աշխատավարձի մեկ քսան չորս յերրորդականի հաշվով—փաստորեն աշխատած յուրքանչյուր օրվա համար:

2. Ամսվա ընթացքում 15 և ավելի օրացույցային օր (բայց մեկ լրիվ օրացույցային ամսից ավելի քիչ) ծառայության մեջ յեղած անձինք, աշխատավարձ ստանում են 15 օրվա համար—ամսական վարձատրության կեսի չափով, իսկ մնացած օրերի համար—սույն պարզարանության 1 հոդ. նշված կարգով, սակայն, այն պայմանով, վոր ընդհանուր գումարը ամսական վարձատրությունից ավելի չլինի:

ԽՍՀՄ ԱշխժԿ. Տարեֆ կոնֆլ. Բաժնի վարիչ՝ ՎՈՒՆԴԵՐՎԻՆ
ՀԱՄԿԻՆ-ի հետ համաձայնեցված է՝ ՎՊԱԳԻՄԵՐՈՎ:

ՊԱՏԺԱՅՈՒՅԻԿ

«ՀԱՅՊՂԻՆՁ» ՏՐԵՍԻ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ներքին կարգապահության կանոնները, վորոնք սահմանված են վարչության կողմից միութենական մարմինների համաձայնությամբ, պարտադիր են ձեռնարկության բոլոր բանվորներին, ծառայողների և վարչության համար:

2. Ներքին կարգապահության կանոնները խախտելու համար կարող են նշանակվել հետևյալ պատիժները.—

ԱՌԱՋԻՆԸ.—Հանդիմանություն, հայտարարելով այդ մասին համբարությունում, գործարանում, հանքերում կամ բաժնում ու հայանելով միութենական մարմիններին և

ՅԵՐԿՐՈՐԴԸ.—Արձակում:

3. Պատիժը նշանակում է վարչությունը, իսկ հավաքական պայմանագրում և Աշխ. Որենսդրքում նախատեսված դեպքերում, անց է կացվում ԳԿՀ-ի միջոցով: Սահմանված պատիժից դժգոհ մնացած բանվորները ու ծառայողները կարող են բողոքել ԳԿՀ-ին, վորի վորոշումը պարտադիր է:

4. Թված պատիժները գործադրվում են, հաշվի առնելով հավաքական պայմանագրի գործողության վողջ ընթացքում կատարված գանդաքեհերը (պրոստուպիլ), վորից հետո գանդանքների և նշված պատիժների հաշվառումը սկսվում է նորից, բացի ՊՊ.—Գ, 7 և 8. վորի

Համար յուրաքանչյուր համբարութիւնում կամ բաժնում հատուկ մտայն է պահվում :

5. Սույն պատժացուցակի հիման վրա գործադրվող իջեցումը կարգի մեջ, կատարվում է անմիջապէս, առանց միջին դատումով յերկու շաբաթվա ընթացքում վարձատրելու : Նմանապէս է արձակումը, վոր կիրառվում է ըստ 2-րդ կետի . կատարվում է առանց նախազուգացման և 2-շաբաթյա արձակման նպաստ տալու :

Ծանոթութիւն .— Այլ գեպքում, յերբ բանվորի արձակումը ըստ սույն պատժացուցակի պէտք է անցկացվի ԳԿՀ-ի միջոցով, վերջինը պէտք է քննի գործը յերեք որվա ընթացքում : Յերեք որվա ընթացքում գործի չքննելը համարվում է, համաձայնվել արձակմանը :

Մինչև հարցի ԳԿՀ-ում լուծում ստանալը, անամարմինը կարող է չթուլաորել մեղսունակ բանվորներին աշխատելու, վարձատրելով նրանց ԳԿՀ-ի կայանայիք վորոշման համաձայն :

ՉԱՆՅԱՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԻՔՆԵՐԻ ՅԱՆԿԸ .

6. Առանց հարցելի պատճառների, մեկ ամսվա ընթացքում կրկնվելու կարգով առանձին օրեր, ինքնահամ գործը թողնելու համար :

Մեկ օրից մինչև յերեք օր (ընդմիջումով) 1-ինը
Գործադրում յերեք և ավելի օր, անկախ

ընդմիջումից 2-րդը

7. Առանց հարցելի պատճառների ժամանակին աշխատանքի չգալու, կամ վաղաժամ աշխատանքը թողնելու համար .

Ամսվա ընթացքում յերկու անգամ 1-ինը

Ամսվա ընթացքում յերրորդ անգամ 2-րդը

Բացի դրանից, բոլոր գեպքերում գործադրված (պրոզուկնոյե) ժամանակը չի վարձատրվում :

8. Աշխատանքի վայրից ինքնակամ հեռանալու կամ առանց համբարային վարչութիւն թույլտրութիւն համբարութիւնից—համբարութիւն չըջելը կամ օրիններին խանդարելը .

Ամսվա ընթացքում յեկու անգամ 1-ինը

Ամսվա ընթացքում յերրորդ անգամ 2-րդը

Ծանոթութիւն .— Նամարմինը միութիւն համաձայնութիւնում, պարտւմ է կախում է համբարութիւններում այն աշխատանքների ցուցակը, վորոնցից բացակայելը յերեք չի թույլտրվում և պատժվում է արձակմամբ :

9. Վոչ հարցելի պատճառներով սովորական, այլ և ըստգործյա աշխատանքից հրաժարվելու համար—ըստ աշխատանքի կարեւորութիւն և հրատապութիւն .

1-ինը կամ 2-րդը

ըստ վորում բանվորները հրաժարվելու պատճառով չաշխատած ժամանակի համար—վարձարութիւն չեն ստանում :

10. Ներքին կարգապահութիւն կանոններով նախատեսված արտաժամյա աշխատանքներից հրաժարվելու համար—ըստ աշխատանքի կարեւորութիւն .

1-ինը կամ 2-րդը

11. Հանքերում, գործարանում կամ համբարութիւնում, սահմանած վերահսկողութիւն կանոնները չկատարելու համար, (համարների կախումը, վերատու-

դեչ թերթերի վրա ստորագրելը) մեկից մինչև յերկու
անգամ 1-ինը

Յերկուսից մինչև չորս անգամ 2-րդը

12. Համքարութիւններում, համարների աւել-
տակը աշխատանքներ վերջանալուց առաջ, վաղաժամ
լացելու և վոչ իբ ժամանակին փակելու համար

1-ինը կամ 2-րդը

13. Անցաթուղթը, համարը, կամ հիմանդանոցի դը-
րութունն ուրիշին տալու, ուրիշի համար տախտակի
վրայից նշան վերցնելու կամ թերթի վրա ստորագրելու
համար 1-ինը

Իսկ խախտման սխտեմատիկ կամ շարամխա բնույթ-
թի գեպքում 2-րդը

14. Կյանքի համար վտանգալուր կամ գաղտնի շեն-
քը ներս թողնելու համար 1-ինը կամ 2-րդը

15. Համքարային վարչութիւնը սարքերի, մեխա-
նիզմների ու սարագանների վնասման կամ կտրվելու
մասին ժամանակին չհայտնելը, վորը դժբախտ գեպքե-
րի առիթ և ծառայել 1-ինը կամ 2-րդը

16. Զուրոյ կամ պղնձահալ համքարութիւններում
մինչև հարման վերջը, աշխատանքները թողնելը, թե-
կուց և գրանք անցի ունեցած լինեն աշխատանքի ժամե-
րկց հետո—նայած հետանքի լրջութիւնը

1-ինը կամ 2-րդը

17. Անդուշութիւն, անխութիւն կամ ներքին
կարգապահութիւն կանոնները չկատարելու պատճա-

ռով մեքենաների, դադգլահների, սպարատների, սար-
քերի, նյութերի և այլ փչացման համար

1-ինը կամ 2-րդը

պահելով աշխատավարձից փչացրածի արժեքը հա-
մաձայն Աշխ. Որ. 83 հոդ. իսկ դիտավորութեան դեպ-
քում 2-րդը

Քր. Որ. նախատեսնված հետեանքներով:

18. Մեքենաների հետ վարվելու վերաբերյալ կա-
նոնները չկատարելու, այլ և նախադուշական միջոց-
ները խախտելու կամ նրանց կեդտտա պահելու հա-
մար 1-ինը

Իսկ յեթե հիշված դանցանքի հետեանքով դժբախտ
դեպք և պատահել մի այլ բանվորի հետ 2-րդը

19. Ուրիշներին գործիքներ, սարքեր կամ պարա-
պաներ տալու համար 1-ինը կամ 2-րդը

20. Առանց պտուշած թուշլուծութեան գործարանի
գործիքները, սարքերը, պարագանները, և այլ գործա-
բանային գույքը գործարանից դուրս հանելու կամ կոր-
ցնելու համար 1-ինը կամ 2-րդը

Քր. Որ. նախատեսնված հետեանքներով:

21. Առանց վարչութեան թուշլուծութեան, իր անձ-
նական կարիքների համար աշխատանքներ կատարելու—
այդ նպատակի համար ձեռնարկութեան նյութերը և
ստորագրութեան աշխատանքը սպառագործելու համար
1-ինը

22. Սահմանված մշակման նորմաները չկատարելու
համար, վորը բանվորից և կախված յեղել, առաջին
անգամ 1-ինը

Իսկ սխտեմատիկաբար չկատարելու դեպքում 2-րդը

23. Աշխատանքի մեջ խոտանի (բրակ) սահմանված տակոսը գերազանցելու համար, յեթե այդ տեղի յե ունեցել բանվորի մեղքով առաջին անգամ . . . 1-ինը յերկուսից յերեք անգամ . . . 2-րդը

յերկրորդ գեպքում աշխատավարձից պահվում է փչացած արտադրանքի և նյութի արժեքը համաձայն հավաքական պայմանագրի:

24. Կրակի հետ անփուլթ (անզգուշ) վարվելու և հակահրդեհ միջոցները չպահպանելու համար . . . 1-ինը կամ 2-րդը

25. Հրդեհի հանդման, տարրերային աղետների, գժբախտ դեպքերի դեմ պայքարելու վերաբերյալ վարչության կարգադրությունները չկատարելու գեպքում . . . 1-ինը կամ 2-րդը

26. Հրավտանց արգելված տեղերում ծխելու համար . . . 1-ինը կամ 2-րդը

27. Արտադրական խնդիրների վերաբերյալ համբարության կարգադրությունները չկատարելու համար—նայած հնարավոր հետևանքների լրջությանը . . . 1-ինը կամ 2-րդը

28. Վարչությունը կամ վարչության կողմից բանվորին կամ ծառայողին խոսքով վիրավորելու համար . . . 1-ինը կամ 2-րդը

Իսկ գործողությամբ վիրավորելու գեպքում առանց ԳԿՀ-ին բողոքարկելու իրավունքի . . . 2-րդը

29. Ներքին կարգապահության կանոններով նախատեսված սանիտարական միջոցները չկատարելու

համար . . . 1-ինը
Իսկ սխտեմատիկարար չկատարելու գեպքում . . . 2-րդը

30. Աշխատանքի ժամանակ հարբած վիճակում շտնվելը (բացի աշխատավայրից հեռացնելը՝ առանց վարձատրման) կամ դործարանը վողելից խմիչքներ բերելու, այլ՝ գործարանը հարբած վիճակում ներս թողնելու համար . . . 1-ինը

Իսկ յեթե այդ կապված է վտանգավոր հետևանքների հետ . . . 2-րդը

31. Աշխատանքի ժամանակ քնելու համար . . . 1-ինը կամ 2-րդը
Իսկ պատասխանատու աշխատանքներում . . . 2-րդը

32. Ձեռնարկության մեջ աշխատանքի ժամերին թուղթ և այլ բախտախաղեր խաղալու համար . . . 2-րդը

33. Գործարանի փաստաթղթերը գողանալու, կեղծելու, վոջնչացնելու համար, անկախ դատի մասնելուց . . . 1-ինը կամ 2-րդը

34. Դազգյահների և մեքենաների վրա թերի հակողություն ունենալու և նրանց վերանորոգման համար միջոցներ ձեռք չարնելու համար . . . 1-ինը
Իսկ սխտեմատիկարար կրկնվելու գեպքում . . . 2-րդը

35. Առանց հարգելի պատճառների, թերություն ունեցող դազգյահների, մեքենաների, հնոցների և այլ պարագաների վրա աշխատանքի դնելու համար, յեթե զրա հետևանքով նյութերի կամ արտադրական միջոցների վնասում է տեղի ունեցել, հանցավոր վարպետը,

Համալսարանի վարիչը և այլ վարչատեսչական կազմը յենթարկվում են . . . 1-ին կամ 2-րդ պատժին

36. Իր ժամանակին բանվորին աշխատանք, նյութեր և դործիքներ չտալու համար, վորի հետևանքով հանցավորի անտնտրիկության շնորհիվ դադար (պարտոսյ) և առաջացել 1-ինը կամ 2-րդը

37. Դադարահանների, կառուցվածքների և տեղակայվածքների (ուստանովկա) վերանորոգումը ուշացնելու համար, վորի հետևանքով բանվորները չեն աշխատել, վերանորոգման համար պատասխանատու անձնավորությունը 1-ինը կամ 2-րդը

38. Առանց ձեռնարկության վարչատեսչական կազմի թույլտվության վաճառքի նյութերով և գործիքներով մատակարարելու համար, յեթե նբանց վատորակ լինելը մինչ ադ հայտնի յե յեղել

1-ինը կամ 2-րդը

39. Անհրաժեշտ հումույթի, նյութերի և գործիքների ժամանակին չտանալու համար, վորի պատճառով դադար և տեղի ունեցել 1-ինը կամ 2-րդը

40. Մեքենաների պահպանման պարագաների վրա վարչատեսչական կազմի կողմից վորին ադ հանձնված և անբավարար հսկողություն ունենալու համար

1-ինը կամ 2-րդը

41. Սխտեմատիկաբար խոտան թույլ տալու համար, յեթե ադպիսին տեղի յե ունեցել համալսարանի կազմի, վարչատեսչական կազմի անվության կամ թույլ հսկողության պատճառով

1-ինը կամ 2-րդը

աշխատավարձից պահելով խոտան ճանաչվածի արժեքը—համաձայն Աշխ. Որ. 83 հոդ . . .

42. Վարչատեսչական կազմի կողմից սույն պատճառացակար չլիբրատելու համար

1-ինը կամ 2-րդը

43. Աշխատավորների կողմից, զիտավորյալ կերպով, դադար յերկարաձգելու նորատակով միջոցներ զործադրելու, այլ և զխտավորյալ կերպով, արդեն իսկ տեղի ունեցած դադարը ձգձգելու համար

1-ինը կամ 2-րդը

44. Բանվորին կամ ծառայողին տրված մասնահատուցար և պահպանողական առարկաները չողտադործելու համար 1-ինը կամ 2-րդը

45. Իր, կամ ուրիշ աշխատավորների վարակիչ հիվանդությունը ծածկելու համար

1-ինը կամ 2-րդը

46. Ձեռնարկության մեջ յեղած ժամանակը, լուծությունը և կարգը ազմկով, բղավոցով, կովով կամ հայհոյանքներով խանդարելու համար

1-ինը կամ 2-րդը

47. Նախ քան մեքենաների աշխատեցնելը կամ նբանց աշխատանքի դադարեցնելը ազդանշանային զանգեր կամ սուլոցներ չտալու համար, այն աշխատավորներին, վորոնց ադ հանձնարարված է

1-ինը կամ 2-րդը

48. Հիվանդությունների հաստատված ձեռքման (սիմուլյացիա) համար 2-րդը

Ծանոթութիւն.—1. Ներքին կարգապահութեան կանոնների առաջին տեսակի պատժին յենթակա դանազան կետերի սխտեմատիկաբար խախտման դեպքում, կարող ե նշանակվել ե յերկրորդ պատիժը:

2. Աշխատավորի մեղքով յերկրորդ անգամ մը շահման նորմաները լրիվ շարժարացնելու դեպքում, նրան կարելի յե իջեցնել կարգի մեջ:

3. Առաջին ե յերկրորդ պատիժները նախատեսուող կետերում, վերջինը կիրառվում ե ըստ հանցանքի ծանրութեան ե խախտումների սխտեմատիկաբար կրկնվելու դեպքում:

Մետաղագործների Միութեան
Կենտ. վարչութեան
Նախագահ՝ Հ. ԴԵՄԻՐՃԵԱՆ
Պ. քարտ. ՅԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Հայպրես» Տրեստի վրչ
Նախագահ՝ Ի. ՉԵՌԱՍԻՆ
Տրեստի ԱՏ Բաժնի
վարիչ՝ ԱՐ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՅՈՒՅԱԿ

ԱՅՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՎՈՐՈՆՔ 2-ՇԱԲԱԹՅԱ ԼՐԱՅՈՒ-
ՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՆ ՏԱԼԻՍ

1. ԿՈԼՈՇՆԻԿՈՎԻ ՀՐԱՊԱՐԱԿ

- 1. Մանրողներ
- 2. Վազոնապաններ
- 3. Բարձողներ
- 4. Կշողներ
- 5. Մեքենավարներ

2. Ավան-Կուրգե

- 1. Վարպետները ե նրանց ոգնականները
- 2. Կուսնահատները
- 3. Աովապանները

3. Կոնկրետոր

- 1. Վարպետները
- 2. Վարպետների ոգնականները
- 3. Խողովակագործները (փուրով չչիկի)
- 4. Վազոնապանները
- 5. Հերթապահ փականագործները ե կաթսայագործները, վորոնք սպասարկում են կոնվերտորը ե վ-ժակետը ու աշխատում վնասակար պայմաններում կես հերթափոխութիւնից վոչ պակաս
- 6. Խարամագործները (չրակով չչիկներ)
- 7. Ֆուտերագործները կոնվերտորի շոգ ժամանակը աշխատելիս

4. Շարքեր

1. Վարպետները
2. Թափուղները
3. Բանվորները հետոյի մոտ
4. Մեխանիքական համալսարանի բանվորները մըլ-տապետա կնքնորդության մամանակ: (ավագենայա սպարկա)

5. Լաբորատորիա

1. Լաբորանտները
2. Լաբորատորյան վարիչները
3. Լաբորատորյալում մշտապես աշխատող բանվորները

6. Զուլման համալսարաններ

1. Վագրանչիկներ (հարուցներ)
2. Զուլուղներ
3. Զեվագործներ
4. Շիշիկներ
5. Զուլման համալսարանի բանվորները
6. Թափուղները

7. Զանազան

1. Ծառուղները և նրանց կուսակալները
2. Զեռքի և սննդամթերքի մուրձերով ու վորիչներով աշխատող բանվորները
3. Դարբինները և կուսակալները հիմնական աշխատանքում, ձեռքով կոփելիս:

Մեծագործների միութ. կենտ. «Հայդիկն» տրեստի վարչութան նախագահ — թյան նախագահ — Ի. ԶեհԱՍԻՆ
 Հ. ԴԵՄԻՐՃԵԱՆ

Պատ. Գարուզար՝ Տրեստի Ա.Տ. բաժնի վարիչ —
 ՅԵ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Յ Ո Ի Յ Ա Կ

ՎՈՁ ԶԱՓԱՎՈՐՎԱԾ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ ՈՒՆԵՑՈՂ
 ՊԱՅՏՈՆԵՐԻ

ՀԱՇՎԱԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԿԱԶՄԸ.

1. Գործերի վարիչներ (իրավախորհրդատուներ)
2. Ռազմա-Արդ. Բաժնի վարիչ
3. Տրեստի վարչութան Գլխ. հաշվապահ
4. Գլխավոր հաշվապահի տեղակալ
5. Կոմբինատների ավագ հաշվապահներ
6. Տրեստի և Կոմբինատների հաշվապահներ
7. Ավագ հաշվետարներ
8. Առևտրական բաժնի վարիչ
9. Առևտրական բաժնի վարիչի տեղակալ
0. Կենտրոնական պահեստի վարիչ
11. Տրանսպորտի վարիչ
12. Հրդեհաշեջ պահպանման տեսուչ
13. Հրդեհաշեջ հրահանգիչներ

Մեծագործների միութան կենտ. «Հայդիկն» տրեստի վարչութան նախագահ — թյան նախագահ —
 Հ. ԴԵՄԻՐՃԵԱՆ Ի. ԶԵՀԱՍԻՆ

Պատ. քարտուղար՝ Տրեստի Ա.Տ. բաժնի վարիչ —
 ՅԵ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐ. ՄԻՔԱՅԵԼԵ

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԱՐ ՀԵՍՏՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՄՆԱՀԱԳՈՒՍՏԻ ՄԵՏԱՂԱ-
ԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փականագործներ

Հազուստ թեթև կտորից 9 ամիս
Թաթպաններ (բուկովիցի) (ըստ կար․)

Փականագործի ձեռքի տակ աշխատողները

Հազուստ թեթև կտորից 9 »
Թաթպաններ (ըստ կարիքի)

Տոկարներ

Հազուստ թեթև կտորից 9 »
Ակնոցներ (ըստ կարիքի)

Թիթեղագործներ

Հազուստ թեթև կտորից 9 »
Թաթպաններ (ըստ կարիքի)

Ատաղձագործներ

Հազուստ թեթև կտորից 9 »

Ներկարարներ

Հազուստ թեթև կտորից 9 »

Քարտաչներ

Կտավե դոզնոց լանջապանակով 6 »
Բրեզենտի թաթպաններ 6 »
Հաստ ապակուց ակնոց (ըստ կար․)

Դարբիններ

Կտավե հազուստ 12 »
Կաշվե դոզնոց լանջապանակով 12 »
Կաշվե թաթպաններ 3 »
Ակնոցներ (ըստ կարիքի)

Կունահատներ

Կտավե հազուստ 12 »
Կաշվե դոզնոց լանջապանակով 12 »
Կաշվե թաթպաններ 3 »
Ակնոցներ (ըստ կարիքի)

Կաթսայագործներ

Բրեզենտի հազուստ 9 »
Կաշվե թաթպաններ 3 »
Ակնոցներ (ըստ կարիքի)
Թեփնոցները 12 »

Ելեքորո-մոնոյորներ

Հազուստ խիտ կտորից 9 »
Ռետինե ձեռնոցներ (ըստ կարիքի)
Ռետինե կրկնակոշիկներ (ըստ կար․)

Մալոք — Գծերի վրա աշխատող ելեք-
որոմոնոյորներին բացի դրանից,
արվում են բրեզենտի թիկնոց և կաշվե
ձտկավոր կոշիկներ, վորպես համալս-
րային մասնահազուստը ըստ կարիքի:
Փականագործներ-ըրտտարներ (չարաթը 12
ժամից ավելի աշխատելիս)

Բրեզենտի հազուստ 9 »
Կաշվե կոշիկներ 9 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)

Ելեքորո-յեռոցները վորայան ավելավ

Բրեզենտի դոզնոց 9 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)
Գունավոր ակնոցներ (ըստ կարիքի)

Նասուսչիկներ

Բրեզենտի հազուստ 9 »
Կաշվե կոշիկներ 8 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)

Հալոցներ (վաղրանչիկի)	
Հագուստ խիտ կտորից	9 »
Կաշվե կոշիկներ	9 »
Կաշվե գոգնոց	12 »
Կաշվե թաթպաններ (ըստ կարիքի)	
Գունափոր ակնոցներ (ըստ կարիքի)	

Չեվագործներ—Հալոցներ	
Հագուստ խիտ կտորից կաշվե ծնկոց .	9 »
Կաշվե թաթպաններ	
Թաղյա վոտնամաններ	
Գունափոր ակնոցներ	
Ըստ կարիքի համքյարության մեջ	

Շիշե ընկիներ	
Կտավի հագուստ	9 »

Սևագործներ ձուլարանում	
Բրեզենտի գոգնոց	12 »
Թաղյա վոտնամաններ	
Թաթպաններ	
Գունափոր ակնոցներ	

Տրվում է համքյարությունում ձուլման ժամանակ

ՎԱՏԵՐ—ԺԱԿԵՏ

Մանրոցներ կոլրչնիկյան հրապարակում	
Բրեզենտի հագուստ	12 ամիս
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ	6 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	

Վերջերակ մեքենաների մեքենավարներ	
Հագուստ թեթև կտորից	9 »
Ռեկտինե ձեռնոցներ (ըստ կարիքի)	

Վագոնապաններ—բարձույ	
Բրեզենտի հագուստ	12 ամիս
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ	6 »
Պահպանական ակնոցներ (ըստ կարիքի)	

Խարամի (չլակ) տալը (չրջապտույտներ)	
Բրեզենտի հագուստ	12 »
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ	6 »
Պահպանական ակնոցներ (ըստ կարիքի)	

Վարդետներ	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	4 »
Պահպանական ակնոցներ (ըստ կարիքի)	
Թաթպաններ (ըստ կարիքի)	
Թաղիքի շլյապ	12 »

Ավազ հնոցայինները	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	4 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Թաթպաններ (ըստ կարիքի)	
Թաղիքի շլյապ	12 »

Հնոցայինները	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	4 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Թաթպաններ (ըստ կարիքի)	
Թաղիքի շլյապ	12 »

Խարամագործներ (առվապաններ)	
Բրեզենտի գոգնոց	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ	5 »

ԿՈՆՎԵՐՏՈՐՆԵՐ

Վագոնապաններ	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Ծանոթ.—1. Վագոնապաններին կոշիկներ արվում են 4 ամսով	
Ծանոթ.—2. Խողովակազործներին (Փուլմովչչիկի) ցանցի յերեսի համար ըստ կարիքի և թաղյա զոզնոց 12 ամսով	
Վարպետներ	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Վարպետների աչակերտներին	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Խողովակազործներ (Փուլմովչչիկի)	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Կոնվերտ մաքրողները	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	

Կոնվերտորի խցակները (նորոյշչչիկի)

Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Պահպանման ակնոցներ (ըստ կարիքի)	
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Խարամի և շտեյնի հավաքողները	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	3 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	

ՇՊԼԵՅՁՈՑԵՆ

Վարպետներ	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Վարպետների ողնականները	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Ծանոթ.—Պղինձ թափողներին թաղյա վոտնամաններ և տրվում կոշիկները փոխարեն 8 ամսով	
Պղինձ թափողներ	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Բանվորներ	
Բրեզենտի հագուստ	6 »
Կաշվե կոշիկներ	6 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	

Յուզողներ (մասլյոնչչիկ) հիդրոսի

Հազուստ թեթև կտորից	5	»
Ռետինե կրկնակոշիկներ		
Ռետինե ձեռնոցներ		
Համբարության մեջ ըստ կարիքի		

Հիդրոկայանի մեքենավարները և ոգնականները

Հազուստ թեթև կտորից	9	»
Ռետինե կրկնակոշիկներ		
Ռետինե ձեռնոցներ		
Համբարության մեջ ըստ կարիքի		

Պիլելի և կոմպրեսորի մեքենավարները

Հազուստ թեթև կտորից	9	»
Կաշվե կոշիկներ	12	»
Ռետինե կրկնակոշիկներ		
Ռետինե ձեռնոցներ		
Համբարության մեջ ըստ կարիքի		

Ոգնականներ

Հազուստ թեթև կտորից	9	»
Կաշվե կոշիկներ	12	»
Ռետինե կրկնակոշիկներ		
Ռետինե ձեռնոցներ		
Համբարության մեջ ըստ կարիքի		

Յուզողներ (մաշլյոնչչիկ)

Հազուստ թեթև կտորից	9	»
Կաշվե կոշիկներ	12	»
Ռետինե ձեռնոցներ		
Ռետինե կրկնակոշիկներ		
Համբարության մեջ ըստ կարիքի		

Յանցի վրա աշխատողները (ոկչտոչիկի) (Հիդրոկայանում)

Բրեզենտի թիկնոց	36	»
Կաշվե կոշիկներ	12	»
Կիսամուշտակ	36	»
Տաք թաթպաններ (ձմեռը)		
Տաք փափախ	24	»

Առփազանները (հիդրոկայանում)

Բրեզենտի թիկնոց	36	»
Կաշվե կոշիկներ	12	»
Կիսամուշտակ	36	»
Տաք թաթպաններ (ձմեռը)		
Տաք փափախ	24	»

Բերմարդի մեքենավարներ

Հազուստ հաստ կտորից	9	»
-------------------------------	---	---

Ծանոթ.— Տորմուզավոր բրեմարդներով մեքենավարներին տալ բացի դրանից կաշվե կոշիկներ 12 ամս.

Ճանապարհային վարպետներ

Բրեզենտի հազուստ	9	»
Կաշվե կոշիկներ	6	»
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)		

Բանվորներ՝ ճանապարհի

Բրեզենտի հազուստ	9	»
Կաշվե կոշիկներ	6	»
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)		

Վազոնապաններ

Բրեզենտի հազուստ	9	»
Կաշվե կոշիկներ	7	»
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)		

Բրոյերի բանփորներին	
Կտավի հագուստ	9 »
Կաշվե կոշիկներ	7 »
Դիմակ փոշուց պաշտպ. (ըստ կար.)	
Կավորորոշներ	
Բրեզենտի գոգնոց	6 »
Կաշվե կոշիկներ	12 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Պահեստում աշխատող բանփորներ	
Կտավի հագուստ	6 »
Բրեզենտի թաթպաններ (ըստ կարիքի)	
Սեւադործներ զանազան աշխատանքներում	
Բրեզենտի գոգնոց	12 »
Չուստեր	9 »
Թաթպաններ (ըստ կարիքի)	
Լարորատորիայի բանփորներ	
Բրդի խալաթ	6 »
Լարորանաներ	
Բրդի խալաթ	6 »
Հակադազային գիմակ (ըստ կարիքի)	
Գրասենյակներ, չորանոցների և շենքերի հավաքարարները	
Կտավի խալաթ	6 »
Կանանց թաշկեններ (կոստիմի) ըստ կարիքի)	
Չուստեր	4 »
Բաղնիքում աշխատողներ	
Սալաթ, թեթև կտորից	9 »
Ախոսապաններ	
Բրեզենտի հագուստ	9 »
Կաշվե կոշիկներ	9 »

Կառապաններ յեթև ձիերին խնամում են-	
Հագուստ, թեթև կտորից	9 »
Բրեզենտի թիկնոց	24 »
Մուշտակ	36 »
Տաք ձեռնոցներ	12 »
Չմեովա զլխարկ	24 »
Կաշվե ճակափոր կոշիկներ	24 »
Թաղյա վոտնամանները	36 »
Դոնապաններ	
Բրեզենտի գոգնոց	9 »
Թղթատարներ (կուրյեր)	
Բրեզենտի թիկնոց	36 »
Կաշվե կոշիկներ	9 »
Տաք ձեռնոցներ	12 »
Կիսամուշտակ	36 »
Յրիչներ (րասիլնիլե)	
Բրեզենտի թիկնոց	36 »
Կաշվե կոշիկներ	9 »
Կիսամուշտակ	36 »
Տաք ձեռնոցներ	12 »
Կուրի մոտ աշխատողներ (ջուր կրողներ)	
Բրեզենտի գոգնոց լանջապանակով	9 »
Կաշվե կոշիկներ	8 »
Կուր տաքացնողներ	
Բրեզենտի գոգնոց լանջապանակով	9 »
Կաշվե կոշիկներ	8 »

Մետադարձների միութան կենտ. «Հայզդինձարեստի վարչու-
 վարչութան նախագահ— Թյան նախագահ—
 և ԴԵՄԻՐՃԵԱՆ Ի. ՉԵԿԱՍԻՆ
 Պատ. Քարտուղար՝ Տրեստի Ա. Տ. Ըամնի վարիչ—
 ՅԴ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ա.Ր. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԱՅՆ ԱՐ ՀԵՍՏՆԵՐԻ ՎՈՐՈՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆ-
ՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՊԵՏՔ Ե ՈՐԱ-
ԿԱՆ ՄԵԿ ՇԻՇ ԿԱԹ ՏՐՎԻ

1. Կալոշնիկ

- 1. Մանրողներին
- 2. Վազոնապաններին
- 3. Բարձրողներին
- 4. Կշոտողներին
- 5. Մեքենավարներին

2. Ավան-կրուզի

- 1. Հալոյ վարպետներին
- 2. Վարպետի ոգնականներին
- 3. Առվապաններին
- 4. Կոանահատներին (Մուրճահատներին)

3. Կուլիբրաոբ

- 1. Վարպետներին
- 2. Վարպետի ոգնականներին
- 3. Խողովակագործներին (Փուրձովչչիկ)
- 4. Վազոնապաններին

4. Շալեյգոֆեհ

- 1. Վարպետներին
- 2. Թափողներին (սլիվչչիկ)
- 3. Շալեյգոֆեհի վրա աշխատող բանվորներին

5. Այլ և այլ

- 1. Խրամագործները (շրակովչչիկ)
- 2. Զուլման բոլոր բանվորներին ձուլման որերին
- 3. Լարորատորիայի աշխատավորներին (վորոնք աշխատում են լարորատորայի մեջ)
- 4. Հերթապահ փականագործներին, յեթե նրանց աշխատանքը ձուլման մեջ, կես բանվորական օրից ավելի չե տևում :
- 5. Հանքի թրծման (օրարգ) վրա աշխատող բանվորներին

Մետալագործների միութ. կենտ. Հայաղինձ տրեստի վարչու-
վարչության նախագահ— Թյան նախագահ—

Հ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

Ի. ՉԵԿԱՍԻՆ

Գառ. Քարտուզար՝

Տրեստի ԱՏ. բաժնի վարիչ—

ՅՆ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՀԱՅՊՂԻՆՁ» ՏՐԵՍՏԻ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՇՈՒՑԱՓՈՒՅՑ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

1. Մեծ քանակությամբ բանվորներ ունեցող խոշոր հորիզոններում, այլև պղնձահալ համալսարաններում անհրաժեշտ է առաջին ոգնություն գեղատնիկներ (ապտեչիկ) կազմակերպել 50-ից վոչ պակաս բանվորներ ունեցող յուրաքանչյուր հորիզոնում և համալսարանների մեջ լավ լուսավորված, հարմար հնարավորի, աշխատավարից մոտիկ տեղում:

Դեղատնիկի վրա պետք է կարմիր Սաչ նկարված լինի: Շուտափույթ ոգնություն գեղատնիկի բանալին պիտի գտնվի տեխնիկական կազմին պատկանող այն անձի մոտ, վորը ղեկավարում է ավյալ հորիզոնի կամ համալսարանի աշխատանքները: Հիշյալ անձը պատասխանատու չէ գեղատնիկի մեջ յեղած գեղորայքի կանոնավոր պահելու ու նպատակահարմար գործադրելու, այլ և ժամանակին լրացնելու համար:

Ծանոթություն.—Շուտափույթ ոգնություն գեղատնիկը պետք է ապակյա դռնակ կամ կապարիչ ունենա, վորպեսզի կարիք լինելու դեպքում կարելի լինի ապակին կոտրել ու անհրաժեշտ նյութերը վերցնել—գժբախտ պատահարից տուժածին ոգնություն հասցնելու համար:

2. Յուրաքանչյուր ծառայող, վորը ստորելրկրյա աշխատանքների վրա հսկելու համար է նշանակված,

պետք է աշխատանքի ժամանակ իր հետ ունենա վոչ պակաս քան յերկու անհատական կապոց, ուղեփական տիպի վերականգնչ նյութերով, վորոնք ձեռք են բերվում առողջապահության տեղական մարմնի համաձայնությամբ:

3. Յուրաքանչյուր հորանում և աշխատանքի վայրի մոտ, ուր բանվորների ամենաշատ կուտակում է լինում, պետք է ունենալ լրիվ քանակությամբ վոլորած, կապած ու չապիկներ մեջ, պատգարակներ (նոսիլկի), 200 բանվորին վոչ պակաս քան մեկ պատգարակ, բայց համենայն դեպս 2-ից վոչ պակաս:

Ծանոթություն.—Պատգարակներն ինչպես և տրանսպորտի միջոցները ձեռք են բերվում ու սարք ու կարգին պահվում հորանների հաշվին:

4. Անհրաժեշտ է իր բարձրությամբ վրա դնել—տեխնիքական ստորին կազմի—այն և տասնապետների, ավագ բանվորների և մոնտյորների պարտադիր կարգով սանիտարական պատասխանատվություն տալը, այլ և ամենաակտիվ բանվորներին, իրենց ցանկությամբ շուտափույթ ոգնությունը սովորեցնելու գործը:

ՑՈՒՑԱԿ

Դեղորայքի, վիրակապ նյութերի ու այլ պարագաների, վորոնք անհրաժեշտ են «Հայպղինձ» տրեստի ձեռնարկությունների շուտափույթ ոգնության դեղատնիկի համար

1. Զափանոթներ	3	հատ
2. Բաժակներ	3	»
3. Մկրատ	1	»
4. Ռետինե ոլոր (ժգուտ)—արյունահոսությունը կանգնեցնելու համար	2	»

- 5. Յող 50,0
 - 6. Նաչադիրի սպիրտ 50,0
 - 7. Վալերյանի կաթիլներ 50,0
 - 8. Լավրո-վինեվի կաթիլներ 20,0
 - 9. Յեփացրած ջուր 1 կիլոգր.
 - 10. Թորած ջուր 100,0
 - 11. Արճճի պրիմոչկա 400,0
 - 12. Քրճիններ (լուրիկ) ձեռքերի ու վոտ-
ների համար 2-սկան կոմպլեքտ
 - 13. Հիգրոսկոպիկ ստերիլ բամբակ . . . 4 կապոց 50,0
 - 14. Հիգրոսկոպիկ վոչ ստերիլ բամբակ . . 400,0
 - 15. Բամբակ հասարակ 1 կիլոգր.
 - 16. Վաղելին մաքուր 200,0
 - 17. Թանգիվ հասարակ 5 մետր
 - 18. Յերիզ (բինտ) ստերիլ 2 վերջոկանոց . 10 հատ
 - 19. Նույնը 3 վերջոկանոց 10 »
 - 20. Նույնը 4 վերջոկանոց 5 »
 - 21. Մարզանցե-թթու կալի (կապոցի վրա
պետք է նշված լինի գործածու-
թյան ձևով) 2,0
 - 22. Թուղտ կոմպրեսսի 10 թերթ
 - 23. Խալաթ բժշկական 1 հատ
 - 24. Յերեսորբիչ 2 »
 - 25. Ոճառ ձեռքի 1 կտոր
 - 26. Խոզանակ ձեռքի համար 1 հատ
 - 27. Պայուսակ սանիտարական 1 »
- Դեղորայքի ու նյութերը պայուսակի մէջ են դրվում
այն դեպքում, յեթե անհրաժեշտ են այսպիսիները գրմ-
բարտ սրտահարի վայրը հասցնել:

Դանոթուքյուն.—Յեփացրած ջուրը և արճճի պրի-
մոչկան պետք է կանոնավոր կերպով թարմացվեն—
ջուրը որամեջ, իսկ արճճի պրիմոչկան յերկու աս-
միսը մեկ անգամ:

«Հայ գինձ» արեստի վարչու- Ա.Տ. բամբի վարիչ—
թյան նախագահ— Բ. ՉեչԱՍԻՆ Ա.Բ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Համաձայնեցված է
Սեռագաղերծների միութ. կենտ. վարչութ. հետ Հ. ԴԵՄԸՅԱՆ

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԱՅՆ ԱՐ ՀԵՍՏՆԵՐԻ ՎՈՐՈՅ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵ-
ՐԻ ԿԵՂՏՈՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՊԵՏՔ Ե ԱՄՍԱԿԱՆ
400 ԳՐԱՄ ՈՃԱՌ ՏՐՎԻ

1. Յուզողների (մասլոնչչիկների)
2. Ջեազործներ (ֆորմովչչիկներ)
3. Հալողներ (վազրանչչիկներ)
4. Զուգուների և այլ ձուլվածքների մաքրողներ
5. Տոկարներ և հարթողներ (ալիփովկա)
6. Կաթսաչազործներ
7. Կոմպրեսսորի մեքենավարներ
8. Դարբինները և կոանահատները—(կեղտոտ աշ-
խատանքներում)
9. Հնոցապաններ
10. Կավ փափկացնողները
11. Մանողները
12. Բարձրողները (զազրուզչիկ)
13. Վատեր-ժակետի կոանահատները
14. Առվապանները
15. Խողովակազործները (ֆուրմովչչիկներ)
16. Պղինձ թափողները
17. Շպլեյոֆենի բանվորները
18. Մանրողներին և շլակի հավաքողներին
19. Զուլողներին
20. Հողազործներին (զեմլեդել)
21. Շիչել—(զնդակազործներին)

22. Զուլող համաքարության սեազործ բանվորներին
23. Փականազործներին (կեղտոտ աշխատանքներում)
25. Հանքը ավոյ և բարձոյ բանվորներին
27. Բրեմսերգի մեքենավարներին
28. Կոկս կրողներին
29. Ֆուտերովչչիկներին

Մետազազործների միության . Հայպղինձ տրեստի վարչու-
կենտ. վարչության նախագահ— թյան նախագահ—
Հ. ԴԵՄՐՃՅԱՆ Ի. ՉԵՂՍՄԻՆ

Պատ. Բարտուկար՝ Տրեստի Ա.Տ. բաժնի վարիչ—
ՅԵ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Յ Ո Ւ Յ Ա Կ

ՎՈՁ ԶԱՓԱՎՈՐՎԱԾ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ ՈՒՆԵՅՈՂ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ

Ճարտարա-տեխնիկական կազմ.

1. Ճարտարագետ մետաղաբան
2. Պղնձահալ համաքարության վարիչ
3. Պղնձահալ համաքարության վարիչի սպնական
4. Հալման ավազ վարպետը
5. Մեխանիկական համաքարության վարիչ
6. Մեխանիկական համաքարության վարիչի սպնական
7. Հսնքերի մեխանիկական արհեստանոցների վարիչ
8. Կոմբինատների էլեքտրո-մեքենագետ
9. Ելեքտրո-համաքարության վարիչ
10. Կոմբինատների ավազ էլեքտրոմոնտյոր
11. Հիդրոկայանի վարիչը (հիդրոկայանի ավազ էլեքտրոմոնտյոր)

Մատակարարները միության կենտ. վարչության նախագահ
 Հ. ԴԵՄՐՉՅԱՆ
 Պատ Գարաուզար՝
 ՅԵ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Հայկզին» տր' ստի վարչության նախագահ՝
 Ի. ՉԵԿԱՍԻՆ
 Տրեստի ԱՏ. բաժնի վարիչ՝
 ԱՐ. ՄԻԲԱՅԵԼՅԱՆ

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՍԽՀՄ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺԿԽ-Ի

1928 թ. ոգոստոսի 1-ի.

Առդյուևաբերության և ժողովրդական տնտեսության այլ նյութերի դեռահամների բրոնյայի նվազագույն նորմաների մասին:

ՍՄՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտեները խորհուրդը վորոշում է. —

1. Հաստատել վողջ ՍՄՀՄ տերիտորիայի համար արդյունաբերության և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի դեռահամները բրոնյայի նվազագույն նորմաները, վոր թվարկված են սույն վորոշման կցվող ցուցակում:

2. Առաջին հոգվածում նշված դեռահամների բրոնյայի նորմաները սահմանվում են տոկոսային հարաբերությամբ հիմնարկության բանվորների ցուցակային ջանակի նկատմամբ, բացառությամբ ժամանակավոր բանվորների:

Սեզոնային և շինարարական աշխատանքներով և այլ արտադրություններում զբաղված բանվորների թվի նկատմամբ, ուր աշխատանքները կատարվում են վորջամբողջ տարվա ընթացքում, բրոնյայի նորմաների դործադրության կարգը վորոշվում է հրահանգով (9 հոդ. «գ» կ.):

3. ՍՄՀՄ Աշխատանքի Ժողովրդական Կոմիտեի և Կոմիտեների վերապահել, շահադրողված դեռատեսչությունների, դաշնակից հանրապետությունների ներկայացուցչությունների և Արհեստակցական Միության

Թյունների Համաժողովենական Կենտրոնական Խորհրդի հետ համաձայնեցնելով, առանձին արտադրությունների պայմանները փոփոխվելու դեպքերում, փոփոխություններ մտցնել 1 հոդ. նախատեսնված դեռահասների բրոնյայի նորմաների մեջ:

4. Առաջին հոդվածով նախատեսնված դեռահասների բրոնյայի նորմաները պարտադիր են, պետական կոոպերատիվ և մասնավոր ձեռնարկությունների համար, յերբ այնտեղ զբաղված բանվորների թիվը (հաշվելով և արտելների անդամներին) 10-ից պակաս չէ: Ձեռնարկության մեջ զբաղված բանվորների թիվը 10 լինելու դեպքում մի աշակերտի ընդունելությունը պարտադիր է:

5. Գեռահասների բրոնյան կազմվում է 14-18 տարեկան հասակ ունեցող անձերից՝ նախած արտադրության պայմաններին:

Վնասակար արտադրություններում թույլատրվում է բրոնյան համարել մինչև 20 տարեկան հասակի անձերից:

6. Ձեռնարկության բրոնյայի մեջ մտցված բոլոր անձինք, պետք է ուսուցման կազմակերպված ձեվերով ընդգրկված լինեն, Փարրիկա-գործարանային, բրիգադային և անհատական աշակերտության կարգով, ըստ վորում ձեռնարկությունները պարտավոր են ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ բաց թողնել:

7. Յեթե ներկա վորոշման կիրառման դնելու պահին (8 հոդ.) ձեռնարկության բրոնյայի մեջ մտցված անձանց թիվը դերագանցի նորման, (1 հոդ.), հավասարապես և ձեռնարկություններում բանվորների թիվը կրճատվելու դեպքում, բրոնյայի մեջ մտցված անձանց արձակելը արգելվում է:

8. Սույն վորոշումը կիրառման դնել 1928 թ. հոկտեմբերի 1-ից:

9. ԽՍՀՄ Աշխատանքի Ժողովրդական Կոմիտեի առին հանձնարարել:—

ա) Վերաքննել, շահադրույթ ժողովրդական Կոմիտեի առնների, դաշնակից հանրապետությունների ներկայացուցչությունների և Արհեստակցական Միությունների Համաժողովենական Կենտրոնական Խորհրդի հետ համաձայնեցնելով, գործող որենադրությամբ սահմանված բրոնյայի այն նորմաները, վոր չեն մտել սույն վորոշման կցված ցուցակի մեջ, և հրատարակել այդ նորմաները, ի լրացումն նշված ցուցակի, ըստ վորում մինչև այդ լրացումների հրատարակությունը գործող նորմաները պահպանում են իրենց ուժը:

բ) Սույն հոդվածի «ա» կետում նախատեսնված կարգով սահմանել դեռահասների բրոնյայի նոր նորմաները ժողովրդական տնտեսության այն ճյուղերի համար, վորոնց նկատմամբ սույն վորոշմամբ այդպիսի սահմանված չեն:

գ) ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի, դաշնակից հանրապետությունների ներկայացուցչների և Արհեստակցական Միությունների Համաժողովենական Կենտրոնական Խորհրդի հետ համաձայնեցնելով, հրատարակել յերկու ամսվա ժամանակամիջոցում հրահանգ, վորով նախատեսնել բրոնյայի լրագործման կարգը, բրոնյան համարելու, կարգն ու ժամկետը, ինչպես և սույն վորոշման կիրառման վրա վերստուգության ձևերը:

10. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կառավարություններին յերեք ամսվա ընթացքում

Հանրապետությունների Որենսդրությունը համապատասխանեցնել սույն վորոշման հետ:

ԽՍՀՄ ԿԳԿ Նախագահ՝ Ա. ՉԵՐՎՅԱԿՈՎ

ԽՍՀՄ ԺԿԽ Նախագահ՝ Ա. Ի. ՌԻԿՈՎ

ԽՍՀՄ ԿԳԿ Քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ

Մոսկվա—Կրեմլ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Արդյունաբերության և ժողովրդական տնտեսությունից ալլ ճյուղերի գեոասանների բրոնյայի նվազագույն նորմաների ցանկից.

1. ՄԵՏԱՂԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

3. Գունավոր մետաղագործության . . . 4,0%

2. ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

9. Հանքային—

4) Մարդանեցի և պղնձահանքային . . . 4,0%

ԽՍՀՄ ԿԳԿ Նախագահ՝ Ա. ՉԵՐՎՅԱԿՈՎ

[Redacted signature block]

ՀՐԱՀԱՆԳ № 619

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԻՍԻ

1928 թ. հոկտեմբերի 22-ի

ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԲՐՈՆՅԱՅԻ ՄԱՍԻՆ

Հրատարակված է ԽՍՀՄ Գերժողտնտեսության, գաղնակից Հանրապետությունների ներկայացուցչությունների և ՀԱՍԿԽ-ի համաձայնություններով, ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1928 թ. սպտեմբերի 1-ի «Արդյունաբերության և ժողովրդական տնտեսությունից ալլ ճյուղերի գեոասանների բրոնյայի նվազագույն նորմաների մասին» վորոշման հիման վրա (ԽՍՀՄ Որ. Հավ. 1928 թ. № 49 հոդվ. 437):

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Գեոասանների բրոնյան տարածվում է 10-ից վոչ պակաս բանվորներ ունեցող բոլոր պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր (նույն թվում և կապալով վերցրած, անախապործական և կոնցեսիոն) ձևանարկությունների վրա: Ըստ վորում, յեթև տասը կամ ավելի բանվորներ ունեցող ձևանարկությունը բրոնյայի սահմանված նորմայով, մեկից ավելի քիչ գեոասան և պահանջվում, բրոնյայի մեջ պետք է լինի մեկ գեոասան:

Ծանոթություն.—Բրոնյա անցկացնելու փոխարեն դրամական հատուցում տալը չի թույլատրվում:

2. Սույն հրահանգի դեռահասաների վերաբերյալ ըստ կանոնները համապատասխանորեն տարածվում են և այն վերահասաների (պերերստակի) վրա, վորոնք բրոնյայի մեջ լինելով գրառված են առանձնապես ծանր ու վնասակար աշխատանքներում, յեթև զրա հակառակը հրահանգի մեջ չի սահմանված :

2. ԳԵՌՍ.ՀԱՍՆԵՐԻ ԲՐՈՆՅԱՅԻ ՀԱՇՎԱՐԿԸ

3. Գեռահասաների բրոնյայն բնդհանրապես հաշվում ու անց և կացվում արտադրական յուրաքանչյուր ձեռնարկության մեջ առանձին (ֆարրիկա, գործարան և այլն) :

Սակայն, որեասաներին իրավունք և արվում, համապատասխան արհմիության համաձայնությամբ, հաշվել բրոնյան վորջ արեստի համար—իր ամբողջությամբ ու բրոնյայի մեջ չեղած բոլոր դեռահասաներին բաշխել արտադրական առանձին ձեռնարկությունների միջև—պրոֆուսիոնիկական կրթության հիմնարկների գոյություն ունեցող ցանցի համեմատ (այսինքն տարով նորմայից ավելի շատ արտադրական մեկ ձեռնարկություններին ու ավելի քիչ մյուսներին) : Բրոնյայի դասավորման, յուրաքանչյուր նման դեպքի մասին արեստը պարտավոր և, անմիջապես հայտարարել (մեջ բերելով անհրաժեշտ թվական ավյայներ) աշխատանքի տեղական բաժնին (կամ նրան համապատասխանող Աշխատկամատի մարմնին), վորը տեղեկացնում և այս մասին ավյայ արտադրական ձեռնարկությունների շրջանի աշխատանքի տեսչին—բրոնյայի կիրառման վերահսկողությունը սպահովելու համար (հոդ. 24) :

4. Գեռահասաների բրոնյան սահմանվում և արտադրական վորջ ձեռնարկության համար, իր ամբողջու-

թյամբ—բոս հիմնական արտադրության նորմայի (այլ վոր թե բոս առանձին մասերի, համբյուրությունների, արհեստանոցների և այլի) :

Կամբրիններում, և անտեսական այլ միավորներում, վորոնք արտադրական դանադան ձեռնարկություններ են համալումում, դեռահասաների բրոնյան սահմանվում և յուրաքանչյուր ձեռնարկության համար առանձին, բոս համապատասխան արտադրության նորմայի :

5. Ամբողջ տարին աշխատող ձեռնարկություններում դեռահասաների բրոնյան սահմանվում և բրոնյայի համարման (կոմպլեկտովանիլի) տմոի նախորդող ամսվա առաջին որը ցուցակագրված բանվորների թվին համեմատ, դուրս թողնելով այդ թվից—

ա) Ժամանակավոր բանվորներին .

բ) Այն բանվորներին, վորոնց նկատմամբ դեռահասաների բրոնյան սահմանվում և 6-րդ հոդ. համաձայն :

6. Սեզոնային, շինարարական և այլ արտադրություններում զբաղված բանվորների նկատմամբ, վորտեղ աշխատանքը կատարվում և վորջ ամբողջ տարին, դեռահասաների բրոնյայի հաշվարկման կարգը սահմանվում և հատուկ հրահանգով, վորը հրատարակվում և իՍՀՄ Աշխատկամատի կողմից իՍՀՄ Գերթսղանախորհի, դաշնակից Հանրապետությունների ներկայացուցչություններին, ՀԱՄԿՍ-ի և ԼԿՅԵՄ-ի Կենտկամի համաձայնությամբ :

7. Յեթև դեռահասաների բրոնյան հաշվելիս մեկ ամբողջ և կատարակ և ստացվում, այդ դեպքում կեսից պակաս կատարակը դուրս և ձգվում, իսկ կեսից ավելին լրացվում և մինչև միավորը :

8. Յերկու և ավելի հերթափոխությամբ աշխատող հիմնարկություններում դեռահասաների բրոնյան սահ-

մանվում և բոլոր հերթափոխութեաններում (ցերեկվա և գիշերվա) աշխատող բանվորների թվի ընդհանուր քանակի համեմատ :

3. ԴԵՌՍ. ՀՍՄՆԵՐԻ ԲՐՈՆՅԱՅԻ ՀՍՄԱԼՐՈՒՄԸ

(Կոմպլեկտովանիյե)

9. Դեռահասաների բրոնյայի համալրումը Փարզործուաների գործողների համար, կատարվում է աշակերտների ընդունելութեան ժամանակ—տարին մեկ կամ յերկու անգամ, Փարզործուանի գործողներում սովորող աշակերտների ընթացիկ պակասումը (յերկու ընդունելութեանների մեջ յեղած ժամանակաշրջանում) լրացվում է բրոնյայի համալրման հերթական առաջիկա ժամկետում :

Դեռահասաների բրոնյայի համալրում անհատական և բրիգադային աշակերտութեան համար, կատարվում է նրանց ուսումնական շրջանը վերջանալու պահից : Դեռահասաների ընթացիկ պակասումը (յերկու ընդունելութեանների միջև յեղած ժամանակաշրջանում) լրացվում է ըստ յեռամսյակների, յուրաքանչյուր յեռամսյակի առաջին 10 օրվա ընթացքում : Նոր ֆարբրիկաներ, գործարաններ կամ համաքարութեաններ բացվելու, այլ և 7 ժամյա բանվորական օրվա անցնելու պատճառով լրացուցիչ հերթափոխութեան մտցնելիս արգեն իսկ գոյութեան անեցող ֆարբրիկաները, գործարանները կամ համաքարութեանները չափահաս բանվորներ ընդունելու դեպքում, դեռահասաների բրոնյան համալրվում է չափահաս բանվորների համապատասխան կարգերի վարձման հետ միաժամանակ :

10. Դեռահասաների բրոնյան համալրվում է աշխատանքի բորսայում առմարագրված դեռահասաներից, տաղին հերթին բանվորների զավակներից :

Բրոնյայի համալրման մանրամասն կարգը, մասնավորապես ֆուտի գործողները, կամ անհատական և բրիգադային աշակերտութեան ընդունվելու համար, անհրաժեշտ—հասակի վերաբերյալ և ընդհանուր կրթական պահանջները սահմանվում են դաշնակից Հանրապետութեանների Աշխօղկոմատների կողմից—համապատասխան հանրապետութեանների Գերօղանտխորհների, Լուսօղկոմատների, կենտրոնական միջմիութեանական կողմակերպութեանների և ԼԿՑԵՄ կենտկոմների հետ միասին :

Բրոնյայի համալրման կարգը արանսպորտում սահմանվում է տրանս. լուս. վարչութեան կողմից, ԽՍՀՄ Աշխօղկոմատի, դաշնակից Հանրապետութեանների ներկայացուցչութեանների, յերկաթուղայինների և ջրայինների Արհմիութեանների կենտկոմի և ԼԿՑԵՄ կենտկոմի համաձայնութեամբ :

11. Դեռահասաների բրոնյան (12 հոդ. նշված բացառութեաններով) համալրացվում է 14-ից վոչ պակաս տարիք անեցողներից, այն հաշվով վոր ուսուցումն ավարտված լինի վոչ ավելի քան 18 տարեկան, իսկ անախադործական արդյունաբերութեան և արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկութեաններում—2) տարեկանից վոչ ավելի հասակում :

12. Առանձնապես ծանր և միատակար աշխատանքներում բրոնյան համալրվում է—

ա) Այն արհեստներում, ուր դեռահասաների աշխատանք արդեղված է 18 տարեկանից բարձր տարիք անեցող վերահասաներից :

բ) Այն արհեստներում, ուր ղեռահասաների աշխատանքը թուլյաւորվում է նրանց կազմակերպված ձեւով ուսուցանելու պայմանով (Ֆարգործուսի դպրոցներում կամ անհատական ու բրիգադային աշակերտութեան կարգով) 17 տարեկանից բարձր տարիք ունեցող ղեռահասաներից և վերահասաներից:

Ըստ վորում, հիշված անձանց միջոցով բրոնյան պետք է համարել այն հաշվով, վորպեսզի ուսման շրջանը ավարտված լինի 20-ից վոչ ավելի տարիքում:

Ծանոթութիւն.—Ստանձնադէս ծանր և վնասակար աշխատանքները համարվում են այնպիսիները, վորնք նախատեսված են ՈՍՀՄ Աշխտողկոմատի կողմից 1925 թ. փետրվարի 24-ի № 33-323 վորոշմամբ հրատարակված ցուցակով—«այն արհեստների և աշխատանքների, վորոնց կատարելը 18 տարեկանից վորք հատակ ունեցողներին չի թուլյատրվում» (ՈՍՀՄ Աշխտողկոմատի տեղեկատու 1925 թ. № 11-12):

13. Աշխատանքի բորսայից, բրոնյայի հաշվին ընդունվելիք, դործադուրկ ղեռահասաներ պահանջելիս, ձեռնարկութեանները պետք է մատնանշեն թե ինչ արհեստի և մասնադիտութեան համար են նրանք յենթադրվում ոգտադործել ղեռահասաների և վերահասաների աշխատանքը:

Այդ ցուցումները հիման վրա, Աշխատանքի Բորսաները, ըստ համապատասխան արհեստներին ու մասնադիտութեաններին առաջադրվող պահանջների, ուղարկվելիք ղեռահասաներին բժշկական քննութեան են յենթարկում ու նրանց մեջ արհեստակցական ընտրութեան կատարում:

14. Այն վայրերում, ուր աշխտողկոմատի միջնորդմամբ իններ չկան, ու նրանց ֆունկցիաներն այլ մարմիններ ել չեն կատարում, ղեռահասաների բրոնյան համարում է անմիջականորեն ձեռնարկութեան վարչութեանը, համապատասխան արհմիութեան համաձայնութեամբ, սահմանված պահանջները բավարարող ղեռահասաների թվից (հոդ. 10):

5. ԲՐՈՆՅԱՅՈՒՄ ԴՏՆՎՈՂ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

15. Բրոնյայում գտնվող ղեռահասաները, պիտի ուսուցանվեն կազմակերպված ձեւով—կամ Ֆարգործուսի դպրոցներում, կամ ել անհատական և բրիգադային աշակերտութեան կարգով:

Ըստ վորում, անհատական և բրիգադային կարգով ուսուցանվող ղեռահասաները, պետք է պարտադիր տեսական ուսում ստանան համապատասխան դասընթացներում, դպրոցներում և այն, վորոնք կազմակերպվում են ձեռնարկութեան կողմից, արհմիութեան համաձայնութեամբ:

Դեռահասաների բրոնյայի սակավաթվութեան ղեպքում, համանման արտադրութեաններ ունեցող ձեռնարկութեանները, կարող են համապատասխան արհմիութեան համաձայնութեամբ, Ֆարգործուսի միացյալ դպրոց ունենալ: Ձեռնարկութեանների նախահաշիվներում պետք է անհրաժեշտ միջոցներ նախատեսվեն, բրոնյայում գտնվող ղեռահասաների ուսուցման համար:

16. Դեռահասաների բրոնյայում գտնվողներ համարվում են—

ա) Ֆարգործուսի դպրոցներում կամ անհատական ու բրիգադային կարգով ուսանող ղեռահասաները:

բ) Փաբգործուսի դպրոցներում, կամ շող ու վնասակար համըլարություններում անհատական և բրիգադային աշակերտության կարգով սովորող վերահասաները:

Վոչ սույն հրահանգի կարգով աշխատանքի ընդունված դեռահասաներն ու վերահասաները, բրոնյայի մեջ չեն հաշվվում, յեթև նրանց բրոնյայի մեջ մացնելը չը նախատեսված հատուկ համաձայնությամբ, համապատասխան արձմիության հետ:

17. Բրոնյայի մեջ գտնվող դեռահասաների ու վերահասաների Փաբգործուսի դպրոցների և անհատական ու բրիգադային աշակերտության միջև սրինական բաշխումը, սահմանվում է ՊՍՀՄ Աշխտողիմատի կողմից ՊՍՀՄ Գերբսղտնխորհի, և շահագրգռված գերատեսչությունների, դաշնակից հանրապետությունների ներկայացուցչությունների, ՀԱՄԿՍ-ի և ԼԿՅԵՄ Կենտկոմի համաձայնությամբ:

Տրեսաներին և արտադրական սուանձին ձեռնարկություններին (Փաբրիկաներին, գործարաններին և այլ) իրավունք է տրվում, շահագրգռված արձմիության համաձայնությամբ, արտադրական պայմաններից բնորոշ ուղղումներ մտանել այդ բաշխման մեջ:

Մանաքուրքյուև.—Միեչև սույն հոդվածում նշված օրինակելի բաշխումը ուժի մեջ մտնելը, դեռահասաների և վերահասաների բաշխումը—Փաբգործուսի և անհատական ու բրիգադային աշակերտության միջև կանոնավորվում է ձեռնարկությունների վարչությունների ու համապատասխան արձմիության համաձայնությամբ:

18. Անշտիահասաների ուսուցումն—աշակերտության բոլոր ձևերում պիտի կատարվի միմիայն ցերեկվա հերթափոխություններում (գմենա):

19. Տրեսաներին և արտադրական սուանձին ձեռնարկություններին (Փաբրիկաներին և գործարաններին) թույլատրվում է, արձմիությունների համաձայնությամբ, իրենց մոտ, բրոնյայում գտնվող դեռահասաներին ուսման ուղարկել այլ տրեսաների և արտադրական ձեռնարկությունների շրջանային դպրոցները ու բրիգադաները, հասուցանելով ուսման և բնակարանով ապահովելու հետ կապված ծախսերը:

Նշված դեռահասաները հաշվվում են իրենց ուղարկող արեստի կամ արտադրական ձեռնարկության բրոնյայում: Այլ տրեսաներ կամ արտադրական ձեռնարկություններ, ուսման համար ուղարկված դեռահասաները աշխատավարձ ստանում են իրենց նոր աշխատավայրում:

6. ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՓՈՆԱԴՐՈՒՄԸ ԲՐՈՆՑԱՅԻՑ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԲԻ

20. Ուսման սահմանված շրջանը լրանալուց հետո, 18 տարեկան հասակ ունեցող դեռահասաները և 12 հոդ. նշված 20 տարեկան վերահասաները, ուղարկվում են գործարանավարչության վարակափորման եքսպերտ հանձնաժողովին, վորը վորոշվում է աշակերտների վորակը ու պատրաստականության աստիճանը: Գրոնից հետո հիշված անձինք հաստիքային աշխատանքի յեն վորտաղրվում իրենց վորակի և մասնադիտության համեմատ ու միաժամանակ դուրս-են հանվում բրոնյայից:

Մանաքուրքյուև.—Գործարանավարչությանը կից վորակափորման եքսպերտ հանձնաժողովների աշխատանքների կարգը սահմանվում է ՊՍՀՄ Գեր-

ժողովներին կողմից դաճակից հանրապետությանը
թյունների Լուսժողովատաների, ՀԱՄԿԽ-ի և
ԼԿՅԵՄ Կենտկոմի հետ միասին:

21. Ըստ մասնագիտության շրջանավարտ դեռահաս-
ների մեծամասնության հարմար ձևով բաշխելու նպատակով
արտադրության մեջ հաստիքային տեղերին ամ-
բայցնելը պետք է սկսել նախորդ, ուսման վերջին կի-
սամյակի ընթացքում:

22. Յեթե 20 հոդ. նշված անձինք, արտադրության
մեջ ազատ տեղ չլինելու պատճառով, չեն կարող ան-
միջապես հաստիքային աշխատանք ստանալ ըստ իրենց
վորակի և մասնագիտության, ապա ժամանակավորա-
պես նրանք նշանակվում են այլ, ավելի ցածր վորակի,
աշխատանքի, կամ փոխադրվում պահեստի բանվորների
չարքը: Ըստ վորում նրանց աշխատավարձ է տրվում
նույն չափով, ինչ չափով վոր ստացել են վորպես ա-
շակերտ մինչև արտադրության մեջ աշխատանքի փո-
խադրվելը: Այդ անձանց ըստ իրենց վորակի և մաս-
նագիտության, հաստիքային աշխատանքի փոխադրելը
պետք է կատարվի տեղեր ազատվելուն պես առաջին
հերթին:

Սրա հետ միասին, հիշված անձանց շուտափույթ
կերպով արտադրության մեջ տեղափոխելու նպատա-
կով, արհմիութային համաձայնություններ, թույլատր-
վում է նրանց փոխադրել նույն տրեստի արտադրա-
կան այլ ձեռնարկությունները, իսկ համապատասխան
համաձայնություններ ստանալու դեպքում, և այլ տրեստ-
ների ձեռնարկությունները, աշխատելու ըստ այն վո-
րակների, վորոնց համար շրջանավարտները պատ-
րաստված են, — հատուցանելով փոխադրության հետ
կապված ծախսերը:

7. ՅԵԶՐԱՓՍԿՈՒՄ

23. Գեոհասանների բրոնյայի կերաման հաշվառումը
կատարում են ձեռնարկությունների վարչությունները
(տրեստներում Աշխատանքի Տնտեսագիտության Բա-
ժինները (ԽՍՀՄ Աշխժողկոմատի կողմից, Միութենա-
կան Բանդեղտեսչության, Կենտրինվարի, Ժող-
տնտղերիտորհի, ՀԱՄԿԽ-ի համաձայնություններով սահ-
մանված կարգով:

24. Գեոհասանների բրոնյայի նորմաների և սույն
հրահանգի կերաման հսկողությունը իրազորվում
է Աշխատանքի Տնտեսության կողմից — ընթացիկ հսկո-
ղության կարգով:

25. Բրոնյայի մեջ գտնվող գեոհասաններին, ձեռնար-
կության բանվորների թիվը կրճատվելու հետևանքով,
արձակելը — արգելվում է:

26. Յեթե գեոհասանների բրոնյայի նորմաները գոր-
ծադրության մեջ ղնելու պահին, տվյալ ձեռնարկու-
թյան բրոնյայի մեջ յեղած անձանց թիվը նորմայից
կզերպանցիլ — դրանց չեն արձակում:

27. «Արդյունաբերության և ժողովրդական տնտե-
սության այլ ճյուղերի գեոհասանների բրոնյայի նվա-
զագույն նորմաների մասին» ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1928 թ.

որոտասի Ի-ի վերջումն , և սույն հրահանգի խախտման
համար հանցավորները պատասխանատու լուծյան են
յենթարկվում դաշնակից հանրապետությանն և
որենադրության համաձայն :

ԽՍՀՄ Աշտուղկոմի Տեղակալ—ՏՈՒՍՏՈՊՅԱՍՈՎ

**ԽՍՀՄ Աշտուղկոմատի Կարգադրի անդամ և աշխատանքի
շուկայի բաժնի վարիչ—ԳԻՆԴԻՆ**

Համաձայնեցրված և ԽՍՀՄ Գերժողովարար—ԿՐԱՎԱՅԻ

Համակ—ԳՈՊԱԳՈՎ

ԼԿՅՆՄ Կենտկոմի—ԺԴԱՆՈՎ

Քշտական ներկայացուցչությաններ—

ՌՍՖՖՀ—ՍՄՈՒՅԱՆԻՆՈՎ

ՌԻՍԽՀ—ՊԵՏՐՈՎՍԿԻՅ

Բ. ՍԽՀ—ՊԱՎԼՅՈՒԿԵՎԻՉ

ՌԻՋԲ. ՍԽՀ—ԻՍԼԱՄՈՎ

ԹՅՈՒՐՔ. ՍԽՀ—ՍՏԵՊԱՆՈՎ

ԱՍՖՖՀ—ՏԱԿԻՅԵՎ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՈՒ ԿՈՆՖԼԻԿՏՍՍԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ԳԿՀ կողմակերպվում և հիմնարկությաններում և
ձևնարկությաններում—

ա) Հալաքական պայմանագրից և տարիֆային հա-
մաձայնությանից բխող բոլոր կանոնները կիրա-
ռելու և ,

բ) Վարչության և բանվորների ու ծառայողների
միջև ծագող վեճերին ու կոնֆլիկտներին լուծում
տալու նպատակով :

1. ԳԿՀ ԱՆԵԼԻԲՆԵՐԸ .

Գնահատու կանֆլիկտային Հանձնաժողովը իրավա-
սույն չէ—

1. ա) Հաստատելու հալաքական պայմանագրերով
կամ որենքով նախատեսված դեպքերում և սահման-
ներում մշակման նորմաները, բուսական գնահա-
տումները, աշխատանքների և պաշտանների բոս տա-
րիֆային կարգերի դասումը, սահմանելու խոտանի
(բրակ) նորմալ տակտը, աշխատանքի փորձման և
այլ պայմանները, ինչպես նաև լուծելու բոլոր այն
ինդիկները, վերանք որենքի կամ հալաքական պայ-
մանագրի ուժով հատկապես գնահատու-կոնֆլիկտա-
յին Հանձնաժողովների իրավասությանն են վերա-
դասված :

բ) Լուծելու աշխատանքի վերաբերյալ որենքների ,
հալաքական և աշխատանքային պայմանագրերի ու

ներքին կարգապահութեան կանոնների կիրառման ժամանակ աշխատավորների ու վարձակալների միջև ծագող բոլոր կոնֆլիկտները :

Ծանոթութուն. — Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովները իրավասու չեն այնպիսի վարչումներ ընդունելու, վարձք փոփոխում, լրացում կամ վերացում են հավաքական պայմանագրի կեանքը, յեթե նման իրավունք, հավաքական պայմանագրով հատկապես նախատեսված չէ :

2. Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովներում, վորպես առաջին հիմնական ինստանցիայում անպայմանորեն քննութեան են առնվում այն խնդիրները, վոր վերաբերում են—

ա) Այլ աշխատանքի փոխադրման և զրա հետ կապված դատումի պահպանման, կամ արձակման նպատակով,

բ) Նորմայից ավելի քիչ մշակվածի վարձատրութեանը.

գ) Իր պարտականութեանները չկատարելուն կամ անպետք ճանաչելուն ու պաշտանից հեռացնելուն.

դ) Աշխատավորի դործիքները սպառնալու համար հատուցում տալուն.

ե) Մասնահաղուածի ու մասնատննղի, և նրա շահակալներումն ևլ զրա փոխարեն զրամական հատուցում տալուն.

զ) Բանվորական կրճատ սր և յերկարաձգված արձակուրդի կիրառելուն.

է) Բնագակայղին փոխարինելու հետ կապված տարբեր վարակի աշխատանքների վարձատրմանը.

ը) Դատարի (պրոստոյ) վարձատրմանը.

թ) Հոտոցորձ յա պատվերին նախադատարանով ժամանակի վարձատրմանը.

ժ) Չավաբաւած ըստղորձ յա պատվերի վարձատրմանը.

ի) Փշացրած նյութի, պարագաների և դործվածքների փոխարժեքը աշխատավարձից պահելուն և խոտանի վարձատրմանը.

լ) Աշխատանքից հեռացվելու ժամանակի վարձատրութեանը.

կ) Չհատկացված արձակուրդի համար զրամական հատուցում տալուն.

ծ) Փորձի ժամանակաշրջանի վարձատրման չափին.

դ) Աշխատավորին հասանելի պարգևի (պրեմիայի) չափին.

է) Արամածամ յա աշխատանքների վարձատրմանը.

ձ) Վարձակալի մեղքով աշխատանքի պայմանները լուծելու դեպքում—արձակման նպատակով տալուն :

Ծանոթութուն. — Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովներին, վորպես առաջին հիմնական ինստանցիայի պարտաղիր քննութեան յենթակա կոնֆլիկտներին շարքը, բացի սույն հոդվածում նախատեսվածներից, կարող են դասվել և ալլ կոնֆլիկտներ, վորոնց լուծման համար անհրաժեշտ և հաջի տունել կոնֆլիկտի մոտակա պատճառներն ու պայմանները, ալլև հիմնարկութեան կամ ձեռնարկութեան աշխատանքի առանձնահատկութեանները :

3. Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի իրադատութեան սահմաններից դուրս են—

ա) Արհեստակցական միութեան պահանջամբ աշխատավորի հետ կնքած աշխատանքային պայմանագրի լուծելու վերաբերյալ դործերը :

բ) Աշխատավարձի պետադատարման կարգով սահմանված պաշտոնեյակիան գրույթների և հաստիքների փոփոխման վերաբերյալ խնդիրները .

դ) Հավաքական և աշխատանքային պայմանագրերի պարտավորութայններից չլրջիտպ, բնակարանների հատկացման և բաշխման, աշխատավորների կենցաղային կարիքները բավարարելու և ալլ հոշի վրա բանվորների և վարձակալների միջև ծագող կոնֆլիկտները .

զ) Ժողովրդական պատարանի աշխատանքային նրատաշքջանի, հաշտարար սայանի կամ միջնորդ պատարանի կողմից յուծված, ալլ և նույն մարմինների քննութայնը հանձնված աշխատանքային գործերը .

յե) Կարգապահական պատասխանատվութայն վերաբերյալ գործերը, ստորագասութայն կարգով .

զ) Բոլոր հիմնարկութայններում և ձևնարկութայններում ծատայութայն բնգունելու և պաշտանից հեռացնելու իրավունքով ոծաված աշխատավորների արձակման կամ պաշտանի վերականգնման գործերը, ինչպես նաև այն կարգի պատասխանատու աշխատավորների գործերը, վորոնց (աշխատավորների) ցուցակը սահմանվում և ձևնարկութայն և արհմիութայն համաձայնութայնը :

Մանրութուն .— Սույն հոդվածի «զ» կետում հիշատակված աշխատավորների պաշտանի վերականգնման խնդիրը քննվում և բացառապես վերադաս մարմինների և անձանց կողմից—ստորադասութայն կարգով :

2. ԳԿՀ-ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. ԳԿՀ-ն կազմակերպվում է պարիտետ հիմունքներով, այն և—տվյալ հիմնարկութայն կամ ձևնարկութայն

թյան վարչութայն և աշխատավորների հավասար բանակի ներկայացուցիչներից :

2. Յուրաքանչյուր հիմնարկութայն կամ ձևնարկութայն մեջ բանվորական կազմի ներկայացուցիչներին նշանակում են գործարկումները, չախկոմներն էրենց անգամներից :

Իսկ այն ձևնարկութայններում, ուր գործարկում կամ չախկոմի պարտականութայնները կատարում և լիպորը—վերջինն էլ հանդիտանում և բանվորական կազմի ներկայացուցիչը ԳԿՀ-ում :

3. Ներկայացուցիչների քանակը ԳԿՀ-ում սահմանվում և հավաքական պայմանագրով կամ անամարմնի և միութայն լրացուցիչ համաձայնութայնը հաշվի առնելով յուրաքանչյուր հիմնարկութայն կամ ձևնարկութայն աշխատանքի բարգուծայնը և բազմապեսութայնը, բոս վորում ԳԿՀ-ի մեջ պետք է մտնեն մոշ պակաս քան յերկու ներկայացուցիչ յուրաքանչյուր կողմից :

4. ԳԿՀ անդամների աշխատանքը կատարվում և աշխատանքի ժամերին և վարձատրվում և հիմնարկութայն կամ ձևնարկութայն կողմից նրանց միջին պատումի չախով :

5. ԳԿՀ-ն իր տեխնիկական ապարատը չունի և իր կարիքների համար ոգտվում է հիմնարկութայն կամ ձևնարկութայն ապարտից :

3. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԳԿՀ-ՈՒՄ .

1. ԳԿՀ-ի նիստերը գունրաց են (ԳԿՀ-ի գոնվակ նիստերը տեղի յեն ունենում հանձնաժողովի հատուկ վորոչումներով) :

2. ԳԿՀ-ի նիստերը գումարվում են կարիք յինելու զեպքում, բոս վորում յուրաքանչյուր կողմի ներկայես

ցուցիչները պարտավոր են մյուս կողմի պահանջմամբ ներկայանալու հերթից դուրս նշանակվող նիստերին :

3. ԳԿՀ-ի քննութեանը զբոլող բոլոր խնդիրները պետք է իբեկց լուծուած ստանան փոշ աշ քան 72 ժամվա (3 օր) ընթացքում—զիմուծը բնդունելու պահից հաշված :

4. ԳԿՀ-ն մշտական նախագահներ և քարտուղարներ չունի, ԳԿՀ-ի նիստերում կողմերի ներկայացուցիչները հերթով նախագահում ու քարտուղարի պարտականութեանն են կատարում : Միևնույն նիստում նախագահը և քարտուղարը չեն կարող լինել մեկ կողմից :

5. ԳԿՀ-ն քննում է գործարկումի կամ չախկումի և վարչութեան զիմուծները, վերոնք պետք է տրվեն առաջինների, իսկ վերտեղ դրանք չկան, լիազօրի միջոցով : Նա քննում է նաև աշխատավորների խմբակների և անհատ աշխատավորների զիմուծները, ալլ և նախնական նյութեր ժողովում հարուցված խնդիրը լուծելու համար :

6. Յուրաքանչյուր կողմ կարող է հրավիրել նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, զիտակ անձանց, թեկուզ և դրանք նույն հիմնարկութեան կամ ձեռնարկութեան մեջ աշխատելիս չլինեն :

7. ԳԿՀ-ում խնդիրները լուծելու համար կողմերը (բանվորական կողմը և վարչութեան ներկայացուցիչները) հավասար քանակութեամբ ձայներ ունեն—անկախ նիստին մասնակցող նրանց ներկայացուցիչների թվից :

8. ԳԿՀ քննված բոլոր խնդիրները լուծված են համարվում, յեթե վերջումը յեղել է միաձայն :

4. ԳԿՀ-ին ԲՈՂՈՒՐՆԵՐ ՏԱԼՈՒ ԺԱՄԿԵՏՐ .

1. Գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովին կոնֆլիկտների քննութեան վերաբերյալ զիմուծներ տայու համար սահմանվում են հետևյալ ժամկետները .

ա) Աշխատանքից արձակելու խնդիրների վերաբերյալ 14 օր .

բ) Արտածամյա աշխատանքների վարձատրման խնդիրների վերաբերյալ՝ 1 ամիս .

գ) Մնացած բոլոր խնդիրների վերաբերյալ՝ 3 ամիս :
2. Վերահիշյալ ժամկետները հաշվում են .

ա) Պարտականութեանները չկատարելու պատճառով աշխատանքից հեռացնելու դարձերի համար հեռացման մասին խնդիր հարուցելու առիթ ծառայող խախտումը կատարելու պահից :

բ) Աշխատանքից արձակելու վերաբերյալ մնացած բոլոր դեպքերում—աշխատավորին հաշվարկ (ոսուչյոտ) առաջադրելու սրվանից :

գ) Մնացած բոլոր գործերի համար—համապատասխան պահանջ ներկայացնելու իրավունքի ծաղման սրվանից :

5. ԳԿՀ-ի ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ .

1. ԳԿՀ-ի վերջումները վերջնական են, պարտադիր կողմերի համար, բողոքարկման յեմիտակա չեն և պետք է կիրառվեն վերջումն մեջ նշված ժամկետում :

2. ԳԿՀ-ի վերջումները կարող են վերացվել միմիայն աշխատանքի մարմինների կողմից—վերահսկողութեան կարողով :

3. Կողմերի մեկն ու մեկի կողմից ԳԿՀ-ի վերջումը կատարելուց հրաժարվելու դեպքում, վերջումն կատարման մեջ չահադրված կողմը (գործարկում, չախկում կամ վարչութեանը) 48 ժամվա ընթացքում ուղարկում է այն—Աշխուղկումատի մարմիններին—վարչական յեղանակով ի կտար ամելու համար :

4. Աշխատանքի որենտդրութիւնը խախտող ԳԿՀ-ի վարչապետները վերացվում են Աշխատդիմատի մարմինների կողմից և համապատասխան ցուցմունքներով վերացարձվում ԳԿՀ-ին նորից քննութիւն անելու:

5. Այն խնդիրները, վարոնց վերաբերյալ համաձայնութիւն չի կայացել ԳԿՀ-ում և կոնֆլիկտի բնույթ են ստացել, ՀՏ ժամիա ժամկետում փոխադրվում և միութիւն միջոցով Աշխատդիմատի համապատասխան մարմինը:

6. ԳԿՀ-ի նիստերի արձանագրութիւնների պատճենները հանձնաժողովի ներկա դատվող անդամների կողմից ստորագրվում են և նիստի որից 3 օրվա ժամկետում ուղարկվում միութենական համադրատասխան մարմին:

7. ՅԷՅԼ կոնֆլիկտը ԳԿՀ-ում քննելու ժամանակ յերևան կզան քրեական հանցագործութիւն նշաններ, այդ դեպքում քրեական վարույթը պետք և անֆիլտոյես դատվի և ողարկվի համապատասխան դատարան:

6. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆՍԱՍՇՐՋԱՆՆԵՐԻՆ ԳՅՐԾԵՐԻ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

1. Աշխատանքային նստաշրջաններին կոնֆլիկտների վերաբերյալ դիմումներ տալու համար սահմանվում են հետևյալ ժամկետները—

ա) Աշխատանքից արձակելու, այլ և այն դեպքում, յերբ դնահատու կոնֆլիկտային հանձնաժողովի քննութիւնը յենթակա խնդիրը քննվել և բայց իր յուժումը չի ստացել, կամ յեթև դնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի վարչումը վերացված և յեղել աշխատանքի մարմինների կողմից վերահսկողութիւն կարգով՝ 14 օր:

բ) Մնացած բոլոր դեպքերում՝ 3 ամիս:

2. Վերոհիշյալ ժամկետները հաշվում են—

ա) Աշխատանքից արձակելու խնդիրների վերաբերյալ, վար չեն քննվել դնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովում, աշխատավորին հաշվարկ ստաջալրելու օրվանից:

բ) Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովում քննութիւն անված, բայց չլուծված, աշխատանքից արձակելու վերաբերյալ խնդիրների, այլ չլուծվածների նկատմամբ—վարչում չկայացնելու մասին հայտնելու օրվանից:

գ) Այն բոլոր խնդիրների վերաբերյալ, վարոնց նկատմամբ կայացել և գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի վարչումը, վարը սակայն վերացվել և վերահսկողութիւն կարգով—դնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի վարչումը վերցնելու մասին հայտնելու օրվանից:

Կազմված և համաձայն ԽՍՀՄ և ԱՍՖՍՀ որենտդիր բարձրագույն մարմինների վարչումների, հաշվի տոնելով վերջիններիս բոլոր յրացումներն ու փոփոխութիւնները, վարոնք ակզի յեն սենցել առ 1-ը նոյեմբերի 1928 թ.:

Համաձայնեցված և—

Տրեստի ԱՏ՝բաճի վարիչ—
ԱՐ՝ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ.

Կենտ. վարչութիւն նախագահ—
Հ. ԴԵՄՐՃՅԱՆ

«ՀԱՅՊՂԻՆՁ» ՏՐԵՍՏԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐ-
ՔԻՆ ԿԱՐԳԱՊՍՀՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1929 թ .

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. «Հայպղինձ» Տրեստի ձեռնարկությունների ներքին կարգապահությունը կանոնավորվում է սույն կանոններով, վորոնք պարտադիր են բոլոր աշխատավորների և վարչության համար :
2. Աշխատանքի խնդիրները կանոնավորվում են գոյություն սենյոզդ որենադրությամբ (Աշխ . Որենագրքով, Աշխժողկոմատի պարտադիր վորոչումներով և հավաքական պայմանագրով) :
3. Բոլոր աշխատավորները պարտավոր են առանց վորևե առարկության յենթարկվելու վարիչի կամ նրա տեղակալի (վորը պատասխանատու յե իրեն հանձնված արտադրության ձյուղի վոզջ ներքին կարգապահություն համար), կարգադրություններին, յեթև գրանք չեն հասկանում Աշխ . Որենագրքին : Յևթև բանվորների մեջ կասկած և առաջանում հիշված կարգադրությունների ճիշտ լինելու նկատմամբ, նրանք պետք և ոյզ մտախն իրազեկ դարձնեն միութենական մարմիններին, չընդհանառելով, սակայն, կարգադրությունների կատարումը :
4. Սույն կանոնները, ու կցված պատժացուցակը պիտի անպայմանորեն կախվեն բաժնի բոլոր համբյարու-

թյուններում և գրասենյակների մի վորևե տեսանելի տեղում : Բանվորներից և վոչ վոք իրավունք չունի հենվելու ներքին կարգապահության կանոններին ծանոթ չլինելու վրա :

Մանրություն .— Անգրագետ աշխատավորներին կանոնները պետք է ընթեռնվեն վարչության կողմից :

5. Սույն կանոններից բղխելիք բոլոր վիճելի խնդիրները քննության և առնում ԳԿՀ-ն, վորը այդ դեպքում պետք է ղեկավարվի Աշխ . Որենագրքով, հավաքական պայմանագրով և ԳԿՀ-ի կանոնադրությամբ :

6. Ներքին կարգապահություն կանոնների յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը ուժի մեջ և մտնում միության հետ համաձայնեցնելուց, Աշխ . Տեսչի կողմից հաստատելուց և բանվորներին հայտարարելուց հետո :

7. Գործող այլև հրապարակվելիք որենադրությամբ նախատեսված կետերը, վոր սույն կանոնների մեջ չեն մտցված, հրապարակման պահից հավասար ուժ ունեն :

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ, ԱՐՁԱԿԵԼԸ ՅԵՎ ՓՈՒԱԳՐՈՒՄՆ

8. Բանվորների և ծառայողների աշխատանքի ընդունելն ու արձակելը կատարում են տնտմարմինների կողմից լիազորված անձինք :

9. Ձեռնարկության մեջ ծառայության մտնողները պարտավոր են ներկայացնելու իրենց աշխատանքային գրքույկը (կամ անցագիրը) և վերջին պաշտոնատեղից ստացած վկայականը, իսկ զինվորականները, բացի դրանից, նաև զինապարտության վերարերյալ փաստաթղթեր :

10. Բոլոր ծառայութեան մանուկները փորձի յեն յեն-
թարկվում: Փորձի արդյունքներին նայած, աշխատա-
վորը կամ վերջնականապէս աշխատանքի յե ընդուն-
վում, կամ հեռացվում, ըստ վորում, փորձի ժամա-
նակաշրջանի համար նրան վարձատրութեան յու յու յու ե
տրվում տարիֆային այն կարգի գրույթով, վորը նրան
նշանակված ե յեղել ընդունման ժամանակ:

11. Ընդունվածին վոր ու ջ քան նրա վերջնականապէս
ընդունվելուց 3 սրվա ընթացքում, համարանիշ ե արը-
վում, վորը ծառայում ե վորպէս անցաթուղթ գործա-
բանը ներս մտնելու համար ե հաշվեգրութի, վարձման
պայմաններով:

12. Աշխատավորների մի աշխատանքից մյուսը, կամ
մի համալսարանութեանից մյուսը փոխադրելը կամ անց-
նելը վարչութեան կողմից թույլատրվում ե առանձին
համալսարանութեանների ե բաժինների վարիչների գրա-
վոր համաձայնութեամբ—անձնական կողմի սեղանի
միջոցով:

3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐԸ, ՆՐԱ ԲԱՇԽՈՒՄՆ, ՀԱՆԳՍՏԻ ՈՐԵՐԸ ՅԵՎ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

13. ձեռնարկութեան աշխատանքները յերեք կարգի
յեն.—

ա) Առաջին կարգի աշխատանքները կատարվում են
հերթափոխութեամբ, անընդհատ, ամբողջ տարին,
բոլոր տոն քրերը, անդադար: Այդ կարգին են դաս-
վում—տղնձահայ, չողի-եղեքարական, համալսարան-
այանների ե արհեստանոցների աշխատանքները, ջրթու-
ղը (վողառուիվ) հանքերում, իջեցումը ե բարձրա-
ցումը գլխավոր հորաններում (չախտա) ե ձեռնարկու-
թեան պաշտպանութեանը:

բ) Յերկրորդ կարգին են դասվում այն աշխատանք-
ները, վորտեք կատարվում են հերթափոխութեամբ,
անընդհատ, սակայն կարող են յինել պարբերական:
Այդ կարգի յեն համարվում բոլոր ընծային աշխա-
տանքները բացի ջրթողից, բարձրացման ե իջեցման
աշխատանքներից—գլխավոր հորաններում:

գ) Յերրորդ կարգի դասվում են ձեռնարկութեան
մնացած բոլոր աշխատանքները, վոր բանվորական սր-
վա ընթացքում, այլև շարաթական հանդատի ու տան
տրերին կարելի յե ընդհատել:

14. Առաջին ե յերկրորդ կարգի աշխատանքներն այն-
պէս են կազմակերպվում, վորպէսզի բանվորներն հնա-
րաւորութեամբ ունենան, առանց աշխատանքի ընթացքը
խանգարելու, հանգիստ ունենալ ճաշելու համար, ըստ
վորում, այդ ժամանակ բանվորները ջեն կարող բացա-
կայել ձեռնարկութեանից: ճաշելու ժամանակը անվո-
րոշ ե, կախված ե աշխատանքի ընթացքից, չպետք ե
խանգարել այդպիսին ե հաշվում ե բանվորական սրվա
մեջ:

Մակարդութիւն.—Առանձին դեպքերում, միութեան
համաձայնութեամբ, թույլատրվում ե նախորդ
վորը ընդմիջում սահմանել ճաշելու ե առաջին ու
յերկրորդ կարգի աշխատանքների համար, ըստ վո-
րում, յուրաքանչյուր դեպքում, բոլոր բանվորնե-
րը բաժանվում են խմբակների ե արձակվում հեր-
թով: Այդ ընդմիջումները բանվորական սրվա մեջ
ջեն մտնում ե ջեն վարձատրվում:

15. Այն ձեռնարկութեաններում, ուր արտադրու-
թեանն անընդհատ ե ընթանում, աշխատանքը տարվում
ե հերթափոխութեամբ:

Ծանոթութիւն 1.—Բանվորական ժամանակի բաշխումը հերթափոխութիւնների մեջ կատարվում է վարչութիւն կողմից:

2. Յերբորդ կարգի աշխատանքներ կատարելիս բանվորները ոգտվում են ճաշի ընդմիջումով—ժ. ից մինչև ք:

3. Համըջարային գրասենյակներն աշխատում են—ժամը ից մինչև ք, գործարանային—ժամը ից մինչև ք:

Համըջարային պահեստները աշխատում են—ժամը ից մինչև ք, դիւրավոր համըջարային պահեստներն աշխատում են—ժամը ից մինչև ք:

4. Կես ժամյա դադարը տրվում է ճաշելու համար և սահմանվում է վարչութիւն կողմից միութենական մարմինների համաձայնութեամբ:

16. Բացի սովորական 42 ժամ շաբաթական հանգստից, աշխատանք չի կատարվում պատմական և հասարակական դեպքերի հիշողութիւններին նվիրված հետևյալ օրերը.—

- ա) Հունվարի 1-ին (նոր տարի)
- բ) Հունվարի 22-ին (1905 թ. Հունվարի 9-ի օրը)
- գ) Մարտի 12-ին (ինքնակալութիւն տասարւումը)
- դ) Մարտի 18-ին (Փարիզյան կոմունայի օրը)
- ե) Մայիսի 1-ին (Ինտերնացիոնալի օրը)
- զ) Սեպտեմբերի 20-ին (Բազլի կոմունարների օրը)
- է) Նոյեմբերի 7-ին և 8-ին (Պրոլետ. Հեղափոխութիւն օրեր)
- ը) Նոյեմբերի 29-ին (Հայաստանի Խորհրդայնացման օրը):

17. Բացի դրանից սահմանվում են հանգստի օրեր, 122

փորձը նախատեսված են Աշխ. Որ. 112 հոդ., ՀՍՈՀ Ա. Կ. Ժողկոմատի կամ Ժողկոմխորհի վարչումների համաձայն:

Ծանոթութիւն.—Արտակարգ բնյութ ունեցող անհրաժեշտ աշխատանքներին, վորոնց չկատարելը կարող է ձեռնարկութիւն նորմալ աշխատանքների ընթացքը խանդարել, բանվորները և ծառայողները պարտավոր են ներկայանալու վարչութիւն պահանջմամբ, և տան օրերը համապատասխան վարձատրութեամբ, համաձայն հատկապահան պայմանագրերի:

Ծանոթութիւն.—16-րդ Պրակում թված յաքթակին հանդատի օրերի և տոների նախորդակին, բանվորական օրվա տեղութիւնը չպետք է վեց (6) ժամից ավելի լինի: Իսկ 17-րդ Պ.Պ. նշված հանդատի հատուկ օրերի նախորդակին, բանվորական օրվա տեղութիւնը պետք է լինի նորմալ:

18. Արտաժամյա աշխատանքներ կարող են կատարվել բացառիկ դեպքերում, ըստ համըջարային վարչութիւն գրավոր հատուկ պատվիրադրերի և միութիւն մարմինների համաձայնութեամբ ու միմեայն Աշխատանքի Տեսչի կողմից թույլատրված սահմաններում, իսկ արտակարգ դեպքերում—Աշխատանքի Տեսչին հետագայում այդ մասին հաղորդելով:

Ծանոթութիւն.—Արտակարգ, անհետաձգելի դեպքեր են համարվում—հրդեհը, ջրի և լուսավորութիւն մատակարարման ընդհատումը, ագրեզանների վնասումը և այլն:

19 Առաջին կարգի աշխատանքներն յերբեք չեն ընդհատվում և անցնում են մեկ հերթափոխութիւնից, մյուսը, աշխատանքների ընթացքում:

20. Առանց վարչութեան թույլատուութեան աշխատանքների վաղաժամ ընդհատումը կամ 18-րդ Գ-ում նշված սովորական կամ արտաժամյա աշխատանքներին, առանց հարգելի պատճառների դուրս չգալը, յեթե դրա պատճառով գործարանը, հանքերը, արհեստանոցը կամ առանձին մեքենաները կանդնել են, փչացել են նյութերը կամ վնասվել մեքենաները, համարվում են գործադուր (պրոզուլ) և հանցավորի վրա յե բարդվում առաջացած վնասների հատուցումը (Աչխ. Որ. 83 հոդ.) :

21. Աշխատանքի չգալու հիմնական հարգելի պատճառներ են համարվում.—

ա) Ամբուլատորիայի կամ բժշկի կողմից հաստատված հիվանդութունը, կամ պրոֆեսիոնալ հոգնածութունը,

բ) Բժշկի կողմից վավերացված բնաանխի անդամների ծանր հիվանդութունը, յեթե ուրիշ խնամողներ չկան և բանվորը անձամբ պետք է ներկա լինի :

գ) Համապատասխան կերպով ապացուցված տարբերային աղետները,

դ) Բժշկի կողմից սահմանված կարանտինը—տարափոխիկ հիվանդութունների դեպքում,

յե) Դատական և քննչական մարմինների, միլիցիայի ու զինկամանների կողմից կանչելը,

զ) Որենսդրությամբ նախատեսված դեպքերում բանվորների և ծառայողների քաղաքացիական ֆունկցիաներ և պարհակներ կատարելն այն է—խորհուրդների բնութագրությունները, խորհրդի անդամների պարտականութուններ կատարելը և համապատասխան մասնակցելը,

և) Աշխատավորի ձերբակալումը :

22. Հնոցապանների, մեքենավարների և այլն աշխատավորների աշխատանքի ժամանակը, վորոնք պարտավոր են կաթսաները վառելու և մեքենաները աշխատանքի դնելու համար ներկայանալ ձեռնարկութեան աշխատանքը սկսելուց առաջև մնալ այն աշխատանքները վերջնապուց հետո—սահմանում և վարչութունը, ըստ վորում, ափեճորդ աշխատած ժամանակը արտաժամյա յե համարվում :

23. Աշակերտները և դեռահասները աշխատում են միմիայն ցերեկը—առավոտյան 8-ից մինչև ցերեկվա 2 1/2 :

24. Մետաղահալ համքարութուններում, հնոցների աշխատանքները պիտի այնպես կազմակերպված լինի, վորպեսզի հարման և ձուլման պրոցեսը ավարտված լինի մինչև հերթափոխութեան, կամ բանվորական սրվա վերջը : Յեթե հարման և ձուլման պրոցեսն տեխնիկական պատճառներով ուշանում է, այդ դեպքում բոլոր բանվորները պարտավոր են մնալու արտաժամյա աշխատանքի, մինչև հարման և ձուլման վերջը :

25. Հերթափոխական աշխատանքների ժամանակ, վոր մի բանվոր իրավունք չունի հրաժարվելու դիչերային աշխատանքներից, բացի անչափահասներից, և կանանցից—հղիութեան շրջանում :

26. Անհատական հերթափոխական աշխատանքների ժամանակ, հերթափոխան իրավունք չունի թողնելու աշխատանքը, մինչև իրեն փոխարինող բանվորի ստու (սրինակ—ուժի տեղակայանքի (ուստանովկա) մեքենավարը, հերթապահը—վահանի մոտ, պոմպուպանը (նատանիկ), կոմպրեսորի մեքենավարը և այլն) :

27. Նոր հերթափոխութեան սկսվելն փոխանորդի ներկայանալու դեպքում, փոխարինվող բանվորը պար-

տավոր և հայտնել արդ մասին Համբարութեան վարչութեանը և առանց թույլատուութեան չի կարող թողնել աշխատանքը: Վարչութեանը պարտավոր և միջոցներ ձեռք առնել փոխարինելու հերթափոխին ուրիշ բանվորով:

Հերթափոխութեան ժամանակը լրանալուց հետո բանվորի անցկացված ժամանակը համարվում և արտոժամյա: Աշխատանքի դուրս չեկած փոխանորդի ներկայութեան անհրաժեշտութեան դեպքում, բանվորը պարտավոր և նրան փոխարինել, բայց մեկ հերթափոխութեանից փոչ ավելի ժամանակով:

28. Բանվորը պարտավոր և աշխատել այն հերթափոխութեան ժամանակ, վորը նրա համար նշանակված և: Արելիչ հերթափոխութեան անցնելը այլև փոչ իր հերթափոխութեանը աշխատանքի դուրս գալը չի թույլատրվում:

Մակրոսրյուն. — Բացառիկ դեպքերում միմիայն, և յուրաքանչյուր անգամ համբարութեան կամ հանքերի վարիչի հատուկ թույլատուութեամբ կարելի չե այն կանոնից բացառութեան անել:

29. Վնասակար աշխատանքներում բանվորական որը կրճատվում և — համաձայն հովաքական պայմանագրի մեջ գետեղված աշխատանքների ցուցակի:

30. Սննստ աշխատավորների համար, պետք և սահմանվեն լրացուցիչ բնդմիջուկներ, յուրաքանչյուր 3½ ժամը մեկ անգամ — փոչ պակաս ½ ժամից: Այդ ժամանակամիջոցը մտնում և բանվորական սրվա մեջ:

Բնդմիջումի ուղղամենտացիան սահմանում և ԳԿՀ-ն:

31. Բանվորական որը կամ հերթափոխութեանը վերջանալու մասին բանվորները տեղեկացվում են համբարային կամ համագործարանային ազգանշաններ:

ըով, վորոնք տրվում են, վորպես ընդհանուր կանոն, աշխատանքի վերջանալուց 10 րոպե առաջ այնտեղ ուր պետք և մաքրվի դադարահաները և մեքենաները և աշխատանքների վերջանալու պահին՝ ուր այդպիսին չպիտի կատարվի:

4. ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ԳՍԼՈՒ ԶԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՀԵ՝ ՈՒՆԱԼՈՒ ԿՍՐԳԸ

32. Աշխատանքները սկսելու կամ մեկ հերթափոխութեանը մյուսով փոխարինելու մասին, հանքերը, դործարանները, համբարութեանները տեղեկացվում են յետևյալ գոնհանով (գուրզով):

Առաջին գոնհանը տրվում և աշխատանք սկսելուց մեկ ժամ առաջ, իսկ յերկրորդ գոնհանը (կամ ազգանշանները համբարութեաններում) աշխատանքը սկսելու պահին:

Մակրոսրյուն. — Հանքերում, դործարաններում, համբարութեաններում աշխատանքը սկսելու և վերջացնելու մասին նախազգուշացնող գոնհանների սուցակը սահմանում և ձեռնարկութեան վարչութեանը, միութեան համաձայնութեամբ և պիտի կցված լինի սույն կանոններին:

33. Բանվորական որը, վորպես ընդհանուր կանոն, վերջանում և ճիշտ սահմանված ժամանակին, բացառությամբ այն դեպքերի, յեր անհրաժեշտ և դադարահաներն ու մեքենաները մաքրել: Վերջին դեպքում աշխատանքները վերջանում են 5 րոպե առաջ: Աշխատանքը թողնել թույլատրվում և նրանց վերջանալու մասին տրված գոնհանից հետո:

34. Բուրբ բանվորներն ու ծառայողները պարտավոր են աշխատանքի դալ և աշխատանքը թողնել ախշա-

տանքը կամ հերթափոխութիւնը սկսելու և վերջացնելու վերաբերյալ սահմանված ճիշտ ժամանակին: Աշխատանքները վերջանալու մասին ազդանշան տրվելուց հետո, բանվորը հավաքում է գործիքները և պատրաստվում դուրս գալու հանրակրթ., համալսարանական, կամ գործարանից: Սակայն, մինչև աշխատանքների վերջանալու մասին դռնշան տալը, աշխատանքը թողնել արգելվում է:

35. Աշխատանքի դալը, և աշխատանքից հեռանալը, թույլատրվում է միմիայն դրա համար դալութիւն ունեցող մուտքերով: Այդ մուտքերը բացվում են հերթափոխութեան սկզբից կես ժամ ատաջ փակվում հերթափոխութեան դռնշանից 10 րոպե հետո:

36. Աշխատանքի դալու և աշխատանքից հեռանալու ժամանակ, բանվորները և ծառայողները պարտավոր են կատարելու հատուկ տախտակի վրա համարներ (բիրկի) կախելու վերաբերյալ վերատուգիչ կանոնները, կամ աշխատանքի դալուց գցեն այդ նշանները արկղը և տախտակի վրայից հանեն, կամ էլ արհեստանոցից դուրս գալու ժամանակ ցույց տան վերահսկիչին:

37. Բանվորները, վորոնք կորցրել են իրենց համարները, աշխատանքի դալուց պետք է այդ մասին հայտնեն մուտքի դռներում կամ գրասենյակում և ստանան սահմանված նշան, վորի փոխարեն 3 արվա ընթացքում գրասենյակը պետք է նրանց տա նոր համարային նշան: Առանց համարի աշխատանքի յեկածները և այդ մասին չհայտնածները, համարվում են բացակայողներ: Կորցրածի փոխարեն տրված համարի արժեքը պահվում է աշխատողի գատուածից:

38. Աշխատանքը սկսելու համար սահմանված ժամանակից հետո, համալսարանները կամ գրասենյակը

յեկածները համարվում են ուշացած: Ուշացածները հատուկ ստմարագրութեան են յենթարկվում—ըստ պատժացուցակի պատասխանատւութեան կանչելու համար: Համալսարանները կամ գրասենյակը աշխատանքը սկսելուց ափելի ուշ քան 15 րոպե յից հետո գալու, այլ և մուտքի դռներով, նրանց փակվելուց հետո անցնելու ղեկըրում, բանվորին թույլատրվում է աշխատանքի անցնել միմիայն վարչութեան կարգապարտութեամբ: Ուշացումն հաշվի չէ տննվում վարչութեան կողմից և չի վարձատրվում:

39. Աշխատող բանվորին աշխատանքը թողնել և պարագ ժամանակ անցկացնել չի թույլատրվում, այլ և արգելվում է անձնական կարիքների համար իրենց ձեռքի տակ աշխատողներին, կամ աշակերտներին մի վորեն տեղ ուղարկել:

40. Այն ղեկըրում, յերբ բանվորին կամ ծառայողին անհրաժեշտ է աշխատանքից հեռանալ սահմանված ժամկետից ափելի շուտ, նրանք պարտավոր են այդ մասին հայտնել իրենց վարչութեանը և ստանալ համապատասխան անցաթուղթ: Հիմանդութեան պատճառով անցաթուղթ վերցնողը, միմիայն այն ժամանակ է հիմանդ համարվում, յեթև այդ հանգամանքը հաստատված կլինի համապատասխան բուժական կամ բժշկավերահսկողական հիմնարկութեան կողմից: Վուշ ուշ քան աշխատանքից դուրս գալուց հետո մյուս որը բժշկից համապատասխան վկայական չներկայացնելու ղեկըրում, բացակայած ժամանակամիջոցը համարվում է գործալքում:

41. Յեթև պաշտոնական պարտականութեանները կատարելու համար, աշխատողը պետք է թողնի իր աշխատավայրը ապա այդ թույլատրվում է ամեն ան-

զամ հանքերի կամ համըյարության վարիչի (տեղա-
կալի) համաձայնութեամբ, և այլ դեպքում, համըյա-
րութունից, հանքերից կամ բաժնից հեռանալու հա-
մար հատուկ թույլտվութեան և արվում:

42. Համըյարությունը, հանքերը կամ բաժինը վե-
րագտանալու ժամանակ աշխատողը տալիս է իր անցա-
թուղթը ցուցակագրին (տարելչչիկին), վորը հիշա-
տակում է նրա վրա գալու ժամանակը: Բացի դրանից
անցադրի վրա պետք է նշանակված լինի թե յերբ և յե-
կել և հեռացիլ աշխատողը այն համըյարությունից ուր
նա ուղարկված է յեղել:

Այլվրի նշանառումների բացակայութեան դեպքում,
բաց թողնված ժամանակը համարվում է գործալքում և
բանվորը պատասխանատվութեան և յենթարկվում:

43. Յեթև բանվորը կամ ծառայողը ինչ ինչ պատ-
ճառներով չի կարող աշխատանքի գալ, ապա այլ մտ-
անի նախորդը պետք է հայտնի վարպետին, չտեղեկրին,
տասնապետին, հանքերի կամ համըյարության վա-
րիչին: Իսկ յեթև այն պատճառը, վորն արգելք է հան-
դիսանում բանվորի կամ ծառայողի աշխատանքի գա-
լուն-հանկարծակի յե, ապա նա պետք է տեղեկացնի
վարպետին, չտեղեկրին կամ տասնապետին աշխատանքի
չգալու մասին, ծայրահեղ դեպքում—աշխատանքի գա-
լուց հետո, հարդեխութեան ապացույցներ ներկայա-
ցնելով աշխատանքի գալու առաջին խոսքը:

44. Աշխատանքի վայրից արգելված իրերը գուրս
տանիլը հանցանք է համարվում և պատժվում է պատ-
ժացուցակի հիման վրա:

45. Հանքերի, գործարանի, համըյարութեան և ար-
հեստանոցների մուտքը կողմնակի անձանց, բացի
ազատված պրոֆաշխատակիցների և աշխատանքի տեղ-

չությանը պատկանողներին, անպարանոտն արգել-
վում է: Աշխատավորների հետ տեսնվելու կարիք ունե-
ցողները, պիտի դիմեն մուտքի գրասենյակը, վորը
կարող է կանչել աշխատավորին միմիայն հույժ հարգելի
պատճառներ լինելու դեպքում:

Կողմնակի անձանց, վորոնք պիտի անցնեն վարչու-
թյան մոտ գործնական խնդիրներով, վերահսկիչ-հեր-
թապահները ներս են թույնում միմիայն անցաթուղթ
ներկայացնելուց հետո:

46. Յուրաքանչյուր հանքերում, համըյարություն-
ներում, արհեստանոցում, պիտի կախված լինի անցա-
թուղթ կամ գուրս գալու ու աշխատանքից ու շանայու
թույլտվութեանն տալու իրավունքով սժաված անձանց
ցուցակը:

47. Արտելային աշխատանքի ժամանակ, արտելի ան-
գամներից մեկի կամ մի քանիսի գուրս չգալու դեպ-
քում, բանվորները վարչութեան պահանջմամբ պարտա-
վոր են աշխատելու և ավելի քիչ քանակով, յեթև այլ
Ֆիզիքային հնարավոր է, վորջ արտելի համար գոյու-
թյուն ունեցող զնահատումներով:

48. Աշխատանքի ժամանակ ժողովները կարող են գու-
մարվել միայն ծայրահեղ դեպքերում, վորչութեան և
միութեան մարմիններին թույլտվութեամբ:

5. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ, ՊԱՐԱԳՄՆԵՐԻ, ՄԱՄՆԱՀԱԳՈՒՍԻ
ՍՏԱՅՄԱՆ, ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՅԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԻ
ՈՒ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ԱՊՊԱՐԱՏՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՐԾԻՔ-
ՆԵՐԻ ԽՆԱՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

49. Չեռնարկութեան մասնիկս, յուրաքանչյուր բան-
վոր ստանում է աշխատանքի համար անհրաժեշտ գոր-

ժիւրներ, պաշտօնականներ, պահպանողական (պրեզերւանսնիտելնոյն) առարկաներ—այլ և մասնահագուստ, վարանց մասին գրվում է բանփորների հաշվեգրքայինների կամ գործիքային գրքայինների ու գործիքների մատյանին մեջ: Վերջրած առարկաները հետ վերադարձնելիս գրքերին մեջ համապատասխան նշանակումներ են տրվում:

50. Հաշվեգրքային կամ գործիքային գրքային բանփորի կողմից կորցնելու դեպքում, նրա վրա յեն հաշվում այն բոլոր գործիքները, պարագաները, պահպանողական առարկաները և մասնահագուստը, վոր նշանակված են համապատասխան համբյարային կամ համագործարանային մատյանում:

51. Այն աշխատավորները, վորոնք իրենց աշխատանքի համար կարիք ունեն ընդհանուր սպասարձման մեջ գտնվող գործիքների, ստանում են այդպիսիները գործիքարանից (կամ պահեստից), իրենց համարներով, ու այդ գործիքների կարիքն անցնելուց հետո, անմիջապես հետ են վերադարձվում:

52. Ապագործելու համար բանփորներին տրված, հանքային կամ գործարանային գույքը, նրանք պարտավոր են սարք ու կարգին պահել: Կորցնելու դեպքում, բանփորից դանձվում է գույքի արժեքը—Աշխ. Որ. 83 հոդ. նախատեսնված չափով:

53. Մասնահագուստը ձեռնարկությունը տալիս և ճրիարար և պետք է սպասարձակ բանփորների կողմից գործող հավաքական պայմանագրի համաձայն:

54. Մասնահագուստը տրվում է վորտչ, հավաքական պայմանագրով, սահմանված նորմաներում նշված ժամկետով:

Մակնք ու քյուկ. — Հավաքական պայմանագրով սահմանված ժամկետում չսպասարձակված մասնահագուստը ձեռնարկությունը տալիս է հետագա սպասարձակության համար, պահպանելով առողջապահական կանոնները և համապատասխանորեն կործանելով մաշվելու ժամկետը:

Մակնք ու քյուկ. — Մասնահագուստի և պահպանողական առարկաների կորցնելու կամ դիտակցարուչ վնասելու դեպքում, բանփորը կամ ծառայողը պատասխանատվություն է կրում, վորպես ամեն մի իրեն հանձնված ձեռնարկության գույքի համար:

Աշխատանքից կամ պաշտոնից հեռացվելու կամ հոգարակամ հեռանալու դեպքում, բանփորները և ծառայողները պարտավոր են վերադարձնելու բոլոր իրենց տրված առարկաները, մասնահագուստը և այլն,—պահպանողական պարագաները: Աշխատանքից հեռացված բանփորների կամ ծառայողների կողմից, հիշված առարկաները, մասնահագուստը և պահպանողական պարագաները չվերադարձնելու դեպքում, նրանց արժեքը կարող է պահվել աշխատավարձից կամ բռնադատվել որեւէքով սահմանված կարգով:

55. Մաշված կամ կոտրված գործիքը բանփորը վերադարձնում է համբյարության պահեստը և նրա փոխարեն ստանում նորը, վարպետի հատուկ պահանջմամբ:

Գործիքների մատակարարման ուղացման մեջ հանցավորները համապատասխան պատասխանատվության յեն յենթարկվում:

56. Գործիքների կոմպլեկտի և սարք ու կարգի հրակելու պարտականությունը համբյարություններում

դրվում է համաքարուծյան վարիչի կամ դրա համար հատուկ լիազորված անձի վրա, վորը պատասխանատվութիւնն է կրում բանվորներին անընդհատ անհրաժեշտ և սարքին գործիքներ մատակարարելու համար:

57. Յուրաքանչյուր բանվոր պիտի հող տանի սարքին և մաքուր պահելու իրեն հանձնված մեքենաները: Աշխատանքը վերջանալուց հետո նա պետք է հավաքի իր դազգյաճը կամ մեքենան, գործիքները, պերճորատորը և այլն, ավելի ունդվածքը, (ստրուժկա) և կարգի բերի դազգյաճի մոտ յեղած նյութերը: Մեքենաները ու դազգյաճների ընդհանուր մաքրման (գեներալնայա չիստկա) պարտականութիւնը դրվում է բոլոր բանվորներին վրա և կատարվում տոն որերի նախորդակին, աշխատանքը վերջանալուց 15 րոպե առաջ, ղեկավարվելով այդ ղեկավար, դազգյաճների և մեքենաների խնամելու վերաբերյալ յեղած հատուկ հրահանգով: Իրենց մեքենաները կեդտից մաքրելիս, բանվորները պիտի ուշադիր լինեն, վորպեսզի դազգյաճի մեքենայի մաշված մասերը վոչ մի ղեկավար չժանգոտեն: Միահերթափոխական աշխատանքը վերջանալիս, բանվորները վորոշ ժամանակով վերցրած գործիքները պիտի իրենց տեղը դնեն, իսկ երկու և յերեք հերթափոխական աշխատանքների սեպքում, — հանձնեն սարքին հաջորդ հերթափոխութեան բանվորներին: Փոխարինողբանվորը պատասխանատու յե գործիքներէ համար, յիժէ հերթափոխութեան սկզբին չհայանի, վոր մատոյանում իր հաշվին դրված գործիքներէց պակասում է: Մեքենաների, դազգյաճների և այլ իրերի մաքրելը նրանց գործելու ժամանակ խստով արգելվում է: Գործիքները սարքին լինելու պատասխանատվութիւնը կրում է գործի անցնող հերթափոխութեան վարպետը:

58. Դազգյաճը, մեքենան, կամ պարազաները կտորըվելու ղեկավար, բանվորը պարտավոր է անմիջապէս ընդհատել աշխատանքը և այդ մասին հայտնել վարպետին, շտեյգերին կամ տասնապետին: Այս կանոնի խախտման համար բանվորը յենթարկվում է պատասխանատվութեան: Դազգյաճը, պահպանողական պարազան կամ մեքենան կտորվելու ու սրա հետ կապված դազարի ղեկավար, բանվորը ստանում է ըստ հավաքական պայմանագրի, միմիայն ղեկավարի մասին վարչութիւնը հայտնելու պահից:

59. Բանվորների և ծառայողների անփութութեան և ներքին կարգապահութեան սույն կանոնները չկատարելու, այլև հանքը անփութորեն արտադրելու և խառնուրդով բարձելու հետեանքով, տեղի ունեցած մեքենաների, դազգյաճների, պարազանների, գործիքների, նյութերի և, ընդհանրապէս, ձեռնարկութեան ամեն տեսակի գույքի վնասումը կարող է հիմք ծառայել, ԳԿՀ-ի վորոշմամբ, պահելու աշխատավորի աշխատավարձից, միանվագ, վնասվածի կամ հասցրած վնասների փոխարժեքը, բայց վոչ ավելի ամսական տարիճային դրույթի $\frac{1}{3}$ -եց: (Աշխ. Որ. 83 հոդ.):

60. Բանվորը, առանց վարչութեան թույլտվութեան իրավունք չունի տուն տանելու կամ փոխանակելու ուրիշ բանվորների հետ ձեռնարկութեան պատկանող գործիքը, այլև ոչտադործելու իր անձնական կարիքների համար ձեռնարկութեանը պատկանող վարեկ գույքը կամ նյութը:

61. Յեղած բոլոր պահպանողական միջոցներով և պարազաներով բանվորները պետք է ոգտվեն այնպէս, ինչպէս այդ բացատրված է նրանց տրված կամ պատին կախված անվտանգութեան կանոններով կամ մեքենանե-

ըով և պարագաներով ոգավելու վերաբերյալ կանոնների մեջ, կամ ել ինչպես նրանց ցույց և արված, աշխատանքի հսկիչներին կողմից աշխատանքի ժամանակ:

62. 3 որից սվելի հիվանդութան, կամ այլ պատճառներով արձակուրդ ստանալու դեպքում, բանվորը պարտավոր և հանձնելու յուր մաս յեղած գործիքներն ու պարագաները, հակառակ դեպքում բացակայող բանվորի արկղը, վարչութան կարգադրությամբ, կարելի չե բանալ, ըստ վերում գործիքներն ու պարագաները պետք և ցուցակագրվեն և հանձնվեն համըլարութան պահեստը: Վորեն առարկաներ պակասելու դեպքում, պատասխանատվությունը կրում և բանվորը:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

63. Զեռնարկութան մեջ բոլոր աշխատանքները բանվորները և ծառայողները կատարում են բացառապես վարչութան կարգադրությամբ և ցուցմունքներով, ըստ վերում բաղորդյա (սղեյիայա) աշխատանք կատարելու համար սահմանված պատվիրազրեր (նորայգ) են արվում:

Պատվիրազրերի մեջ պետք և նշված լինի—գործվածքի քանակը, բաղորդյա գնահատումը և այլն:

Պատվիրազրեր սալու համար պատասխանատու անձանց ցուցակը կազմում և վարչությունը և համըլարութան մեջ հրապարակում:

64. Բանվորական սրը սվելի լրիվ սպառողները նպատակով, յուրաքանչյուր բանվոր պետք և աշխատանքով վաղորաք սպահովված լինի այն հաշվով, վարչեսպի մեկ աշխատանքը վերջանալու պահին, նա

սնենա մի սրիչ աշխատանքի պատվիրազրը, այլ և այլ աշխատանքի համար անհրաժեշտ գծազրեր, նյութեր, գործիքներ և այլն:

65. Յեթի բաղորդյա պատվիրազրով աշխատանքը կվերջանա կամ կընդհատվի և բանվորին նոր պատվիրազրով աշխատանք չի արվի, սպա կորցրած ժամանակը պետի դադար համարվի:

Համըլարութան, հանքերի վարիչը պարտավոր և այլ դեպքում տալ բանվորին դադարի հատուկ քարտ, վորտեղ նշված լինի դադարի սկիզբը, վերջը և պատճառները:

66. Պահեստապետը (մազապիներ) պարտավոր և հսկել, վորպեսզի համըլարությունից ժամանակին ստացվեն կիսամշակ (զազատովի) բոլոր մասերն ու պատրաստի մասեր և գլխավոր պահեստից նյութեր, համաձայն տեխնիկական բյուրոյի կամ գրասենյակի կողմից, պատվերի համար իրեն ուղարկվող նյութերի մանրամասն ցուցակի (սպեցիֆիկացիայի):

Յեթի որահեստապետի մեղքով համըլարային պահեստում չեն գտնվի բանվորների անհրաժեշտ նյութերը և զբանով մատակարարումը կուշանա, այլ դեպքում պահեստապետը պատասխանատվություն և կրում և տուգանվում:

67. Աշխատանքի բնույթին չհամապատասխանող (վատվորակ, մոչ լրիվ քանակի և այլն) նյութեր կա կիսամշակ իրեր ստանալու դեպքում, բանվորը պարտավոր և այլ մասին անմիջապես հալոնել հանքերի, համըլարության վարիչին, շտեպերին կամ վարպետին: Վերջինը պարտավոր և միջոցներ ձեռք առնել փոխարինելու վատվորակ նյութերը, իսկ յեթև այլ անհնարին և, բանվորը պետք և շարունակի իր աշխատանքը մի-

միայն վարելի, շտեյգերի կամ վարպետի գրավոր
թուղթատվությամբ:

68. Իսկ յեթե բանվորը ժամանակին չնախազուշաց-
նի համբարության վարչությանը նյութերի վատ վո-
րակի մասին և դրա հետևանքով խոտան ստացվի,
այդ այդ աշխատանքը պիտի վարձատրվի ըստ հավա-
քական պայմանագրի:

69. Ստանալով անձամբ կամ հատուկ բանվորների մի-
ջոցով աշխատանքի համար անհրաժեշտ գործիքները,
գծադրերը, նյութերը և այլն, բանվորը պարտավոր
է անմիջապես գործի անցնել: Բանվորի մեղքով,
անարդյունավետ վատնած ժամանակի համար, նա պա-
տասխանատվության և յենթարկվում պատժացուցակի
համաձայն:

Գործիքների մատակարարման ուշացումը համարվում
է վորպես դադար և հանցավորը (բանվորը, վարիչը,
շտեյգերը, պահեստապետը և այլն) համապատասխան
պատասխանատվության են յենթարկվում:

70. Յուրաքանչյուր ավարտված աշխատանք, այլև
առանձին գործառնություն իսկույն ևեթ ընդունվում է
վարպետի, շտեյգերի կամ հատուկ տեխնիկական ըն-
դունիչի կողմից, վորը նշանակում է այդ մասին աշխա-
տանքի պատվիրագրի մեջ:

71. Այն դեպքում յերբ բանվորը, վորը հետագա աշ-
խատանքի համար գործվածք կամ նյութ է ստացել,
խոտան կհայտնաբերի, այդ մասին նա անմիջապես
հայտնում է յուր վարպետին, վորը կարգադրում է
տալու բանվորին, խոտանի փոխարեն, ուրիշ գործ-
վածքներ կամ նյութեր և պարզում է խոտանի պատ-
ճառները: Նմանապես յեթե խոտանը հայտնաբերում է
տեխնիկական ընդունիչը, բանվորներին և աշխատանք

ընդունելիս, նա հայտնում է այդ մասին հանքերի,
համբարարության վարիչին կամ նրանց ողնականնե-
րին, վորոնք ընդունիչի հետ միասին պետք է պարզեն
խոտանի պատճառները: Ըստ վորում պատվիրագրի
մեջ նշանակվում է խոտան դուրս յեկած գործվածքի
պատրաստման համար ծախսված ժամանակը, նրա
բնույթն ու պատճառները:

72. Բանվորի կամ վարչության մեղքով յուրաքան-
չյուր աշխատանքի համար սահմանված տոկոսից բարձր
խոտան ստանալու դեպքում, հանցավորները պատաս-
խանատվության են յենթարկվում ըստ պատժացուցակի:

73. Յեթե այս կամ այն պատճառով (որենակի փոփո-
խումբ, դադարակալի վնասումը, ողի մատակարարման
ընդհատումը, աշխատանքի պատվերագրերի ուշացու-
մը) աշխատանքը դանդաղում է և դադար է առաջ բե-
րում, բանվորը պարտավոր է այդ մասին անմիջապես
հայտնելու յուր շտեյգերին կամ վարպետին, վորը
պետք է միջոցներ ձեռք ասնի դադարին վերջ տալու
համար:

Դադարի պատճառ յեղած անձինք պատասխանա-
տվության են յենթարկվում պատժացուցակի համա-
ձայն:

74. Յուրաքանչյուր համբարության մեջ կամ բաժ-
նում պետք է սահմանված ձևով խոտանի կամ դադարի
տոճարագրություն կատարվի:

7. ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԻՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

75. Աշխատանքները սկսելուն պես պետք է գործի
դրվեն ձեռնարկության մեքենաները, շարժիչները,

սպանարկող տրանսմիտիաները, սպատարները և ան-
տրանսմիտները (սասանափի) - ճիշտ նույն ժամանա-
կին էլ բանփոխները պետք է սկսեն աշխատել առանց
ընդմիջումների— (ճաշել, թեյ խմել և ժամանակի այլ
վասնումներ) բացի ճաշելու համար նշանակված հա-
տուկ ընդմիջումից: Չանցառուները յենթարկվում են
սրատասխանափության վարչական կարգով:

76. Արդեւի՞նք է.—

ա) Աշխատանքից ուշանալը, առանց փորձե կարիքի
մեկ տեղից մյուսը փոխադրվելը, գործին չվերաբերող
խոսակցություններով զբաղվելը, աշխատանք թողնե-
լը, ուրիշները աշխատանք խանդարելը:

բ) Ուրիշների փոխարեն համարներ կախելը կամ
վերցնելը:

գ) Մանկ այն համբյուրություններն ու հանքատեղե-
րը, ուր նրանք գործ չունեն, յեթե չեն ուղարկված
աշխտեղ վարչության կողմից:

դ) Ինչպես յուր արհեստանոցում, նույնպես և համ-
բյուրության կամ հանքերի բակում քայլելը, յեթե այդ
չի պահանջում կատարվող աշխատանքը:

ե) Առանց պատշաճ թույլտվության, բանվորական
որից դուրս արհեստանոցում կամ հանքերում մնալը:

զ) Գործարանը և հանքերը հարբած դրության մեջ
դալը, այլ և գործարանն ու հանքերը վողբից խմիչք-
ներ բերել ու խմելը, փորձե բան վաճառելը, թուղթ
խաղալը, նիպակելը, յերգելը, անկարգությունները ա-
նելը և այլն:

է) Սովորական ժամերին կամ արտաժամյա առանց
սահմանված սրավերի վորձե տուրկաներ սրատաս-
տելը:

Մակնորքյուն.—Նման ձևով սրատաստված իրերը
ձեռնարկությունից դուրս սանելը գողութուն է
համարվում:

ը) Կողմնակի անձանց արհեստանոցը կամ հանքերը
ներս մտնելը ևն աշակցելը:

թ) Աշխատանքը սահմանված ազդանշանից առաջ դա-
դարեցնելը:

ժ) Աշխատանքի ժամանակ քնելը և ավարտված աշ-
խատանքի հանձնումն ուշացնելը:

ի) Աշխատանքի ժամանակ անձնական գործերով և
զանազան տեղեկանքներ ստանալու համար դիտավոր
զրտաննյակը, գործարանային կամիտեն և գործարանի
ու հանքերի այլ կենտրոնական հիմնարկություններ
դնալը:

Մայրահեղ գեպերում, աշխատողներին թույլատրե-
վում է հիշված ժամանակ անձնական գործերով զբաղ-
վել, բացառապես վարչության, հանքիմի, համբյուրա-
յին լիազորների միջոցով, իսկ անձամբ միմիայն բան-
վորական որը վերջանալուց հետո, վորքի համար հիմ-
նարկությունները աշխատանքները այդ ժամերին պետք
է ըստ այնմ կողմակերպված լինեն:

լ) Աշխատանքի ժամերին թերթ կամ գրքեր կար-
դալը:

խ) 14-րդ Պ-ով նախատեսված դեպքերից դուրս, աշ-
խատանքի ժամերին ճաշ սրատաստելը, ճաշելը և թե-
յելը:

ծ) Մխնին այնտեղ, վորտեղ այդ արդեւի՞նք է:

77. Կոտլերատիվ զբբույցիները, թերթերը և այլի-
րաժանումը կատարվում է ընդմիջումի ժամանակ կամ
աշխատանքից հետո:

Տ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՐԳԵՆՆԵՐԻ ՈՒ ԴԺԲԱՆՏ
ԴԵՊՐԵՐԻ ԿԱՆՈՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ .

78. Վարչութիւնը պարտավոր է նոր բնդունված կամ գործիքներ , սարքեր և այլն ստացող աշխատավորներին ծանոթացնելու այդ առարկաների և նամանավանդ նրանց փափանգավոր մասերի հետ , այլ և արտադրութեան փափանգավոր ու վնասակար մոմէնտներին հետ : Բանավորները պարտավոր են իմանալ տվյալ աշխատանքի անփափանգութեան կանոնները :

Ծանոթութիւն .— Անդրադետներին համար այդ կանոնները պիտի ընթեռնուին :

79. Բոլոր աշխատողները պիտի ձևօք առնեն զգուշութեան բոլոր անհրաժեշտ և հատկապէս , առաջադրված միջոցները և կանխեն իրենց սպառնացող վտանգը , հայտնեն վերջինի մասին մյուս աշխատավորներին ու վարչատեխնիկական անդամներին , այլ և հսկողութեան ունենալ պարագաների սարքին ու անթերի լինելու վրա :

80 Աշխատողների կյանքի և առողջութեան համար բոլոր փափանգավոր տեղերում որինակ—բաշխիչ վահաններին , բարձրալույտ կայանների , պայթուցիկ նյութերի պահեստների և այլի մոտ , համաձայն Աշխտողկոմատի պարտադիր վորտջման , համապատասխան մակադերը և պրկատներ պետք է կախված լինեն :

81. Բանվորների կյանքին կամ առողջութեանը սպառնացող մեքենաների , պազգլահներին և այլ մեխանիզմների բոլոր մասերը , այլ և վորվածքները (վերլարտակա) թէ հանքերում և թէ գրաստ , վորոնք սպառնում են թափվել , պետք է չեզոքացված լինեն հատուկ շրջապատերով (ողբաժգեներէ) :

Համապատասխան տեղերում շրջապատեր կառուցելու պատասխանատվութեանը և հսկողութեանը զբվում

և հանքերի և համքարութեանների վարչութեանների վրա :

Յուր հերթին բանվորները գործի մեջ յեղած բոլոր շրջապատերը քանդել չեն կարող , բացի վերանորոգում կատարելու անհրաժեշտութեան դեպքերից :

Գործի մեջ յեղած շրջապատերի ամեն տեսակի խախտումներ կատարողները պատասխանատվութեան են կրում ըստ պատժացուցակի :

82. Յուրաքանչյուր բանվոր , աշխատանքը սկսելիս , պետք է նախորոք ուշի ուշով գննի իրեն հանձնված մեքենան , գործիքները այլև անվտանգութեան շրջապատերը և վորեւէ կտորվածք կամ թերութեան նկատելու դեպքում , պարտավոր է աշխատանքը չսկսելով , այդ մասին անմիջապէս հայտնել վարչութեանը :

83. Դժբախտ պատահարները կանխելու նպատակով , աշխատավորները պարտավոր են պահպանելու նախազգուշութեան հետեյալ միջոցները—

ա) Արգելվում է դադգլահը աշխատանքի ժամանակ տեղափոխել նրա դանակը , (ոեղեց) կամ մշակվող առարկաները և բնդհանրապէս , դադգլահի աշխատող մասերին կամ նրանց վրա մշակվող առարկաներին ձևօք տալ կամ հենվել :

բ) Չի թույլատրվում դադգլահը , մեքենաները , բանեցումը (պրիվոզ) և ուրիշ մեխանիզմները գործելիս , նրանց նորոգել կամ կարգի բերել : Աշխատանքի ժամանակ յուղելը կարելի չէ թույլատրել միմիայն այն ժամանակ , յեթէ կան յուղելու անփափանգութեանը ծառայող հատուկ հարմարութեաններ :

գ) Հուղվակներէց (չիլի) և բանեցումներից փոկերը հանելիս և հազցնելիս բանվորները պետք է ոգարվեն հատուկ խոտանիչներով (աւովոզ վիլի) :

դ) Չի թույլատրվում մեքենաներին, գազզյաններին, մեխանիզմներին մոտենալ և աշխատեցնել այն բան-վորներին, վորոնք նրանց վրա չեն աշխատում :

յ) Առարկաները բարձրացնելու, իջեցնելու կամ նը-րանց ուղի մեջ յեղած ժամանակը, չի թույլատրվում կանգ առնել կամ նրանց տակովն անցնել, այլ և բեռ-ները բարձրացնելու համար ծառայող վերջելակների (պողյանիկի) վրա իջնելը :

զ) Չի թույլատրվում առանց կարիքի կանգ առնել գործող մեխանիկական կոսմոսների, ճնշիչների և դարբ-նող գազզյանների դիմաց :

ե) Չի թույլատրվում գործող վաղոնների առաջ յեր-կաթուղադճերի վրայով քայլել, կամ դճերի վրա դրո-նվող չարժական կազմի մեջ մտնելը :

ը) •Կարելի մետադյա— առարկաներ տաչել ուրիշ բանվորի յերեսի դիմաց. յեթե տաչվաքքի ուղղությամբ չեն զսված պահպանման ցանցեր կամ վահաններ :

թ) Չի թույլատրվում մեխանիկական մուրճերի, պրեսների, և կոտղ գազզյահների մոտ նրանց աշխա-տելու ժամանակ առանց կարիքի կանգ առնել :

ժ) Արգելվում է վերցնել չըջապատերը, պատյաննե-րը (կոժուխ) և այլ պարագաները, վորոնք արված են բանվորներին դժբախտ դեպքերից նախազուչացնելու համար :

ի) Արգելվում է աշխատանքի ժամանակ գործածել պարագաներ, վորոնք հնարված կամ պատրաստված են իրենց, բանվորների կողմից և դեռ վարչության հա-վանությունը չեն ստացել :

լ) Աշխատանքի ժամանակ աշխատավորները պարտա-վոր են գործածել համապատասխան մասնահագուստ :

խ) Բոլոր աշխատավորները, յեթե տեսնում են և-

րեքորական թեյը կտրված և կամ գազատարը և այլն փչացած—այդ մասին անմիջապես պետք է հայտնեն հերթապահ մոնտյորին կամ վարչությանը :

ծ) Արգելվում է ձեռք տալ ելեքտրական թեյերին այլ և բոնել ելեքտրական թեյը վորի ծայրը գեանի վրա յե, կամ ուղի մեջ կախված է :

կ) Աշխատողները առանձին զգուշությամբ պետք է վնարվեն ելեքտրական թեյերի և ամեն տեսակի սարքերի հետ :

Այն աշխատողներին, վո-րոնց պարտականությունների մեջ չի մտնում նման թե-յերի և սարքերի սպասարկումը, նրանց անպայմանորեն արգելվում է փոչ միայն ձեռք տալ այդ թեյերին, այլ և նրանց վրա սանդուխտներ, ձողեր և այլն դնել :

հ) Համքարություններում ընթացիկ վերանորոգում-ներ կամ վերակառուցումներ ու վերակահասվորումներ ելեքտրական թեյերի մոտ կատարելու դեպքում, յերբ վտանգ կա նրանց վրա առարկաներ պցելու կամ գործիքներ կպցնելու—անհրաժեշտ և նախ հանել կամ փոխադրել թեյերը, վորը վոչ մի կերպ չպետք է կատարվի ինքնուրույն կերպով, այլ միմիայն դրա համար հատուկ ուղարկված վարպե-տների միջոցով :

ճ) Յերարանները (պրիստավների յեսանիցքի) գործա-ծելիս պետք է հետեւել, վոր վերջինները սարքին լի-նեն և ունենան կայան, ծայրոցներ և շողկապներ : Սարքին չլինելու դեպքում, նրանց գործածությունը արգելվում է :

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ա) Լեռնային աշխատանքների հսկողության վրա պարտականություն է դրվում ծանոթացնել նոր ըն-

դունձված բանվորներին—ստորյեղիւրյա փորվածքների տեղավորութեան, բոլոր դեպքի դուրս տանող յեւքերի, այլ և լեռնային աշխատանքների յեղանակների հետ:

բ) Շտեյգերյան հսկողութեան և տաննապետների վրա պարտականութեան և դրվում, հերթափոխութեան վողջ ընթացքում, հանքերում մնալ և այցելել խորտերը (գարոյ), հատկապես ուշադրութեան դարձնելով ամենամատանդավորների վրա:

գ) Սահմանված նորմայից ավելի բանվորներ իջեցնել և բարձրացնել վանդակի մեջ (կլեյա) արգելվում է:

դ) Արգելվում է բարձրանալ և իջնել վերջերյակների մեջ, վորոնք ծառայում են միմիայն բեռներ փոխադրելու համար:

ե) Հորանների (չախտա) խորացման (ուղլուբլենիյե) և շուրֆման (շուրֆովանիյե) ժամանակ արգելվում է փոքր չափի կուրերի (բաղյա) մեջ իջնել և բարձրանալ, առանց կոնատակից նախորդ ամուր կապվելու: Սանդուխտները, արասները այլ և պահպանողական բուրբ շինվածքները հորանների բարձրացող (փոստայուշչի մատցների (լյուկ) և այլնի մոտ պիտի պահպեն սարք ու կարգին:

ե) Յերկաթուղադձերի վրայով անցնելու անհրաժեշտութեան դեպքում, նախորդ պետք է համոզվել, փոր չարժվող վազոններ չկան. չի թույլատրվում դձերի-վրայով անցնել չարժվող վազոնների առաջ:

ը) Ողափոխիչ դոներով անցնելիս, ուշադրութեամբ ծածկել, փորպետի չխանդարվի հանքերի ողափոխումը:

թ) Արգելվում է առանց լույսի մութ փորվածքներով չարժվել:

ժ) Արգելվում է մնալ այն փորվածքներում, որ

լույսը մարում է, կամ վառվում աննորմալ բոցով: Եման դեպքերում պետք է անմիջապես հայտնել այդ մասին հերթապահ շտեյգերին կամ տաննապետին:

Տոներից կամ այլ դադարից հետո դուրսանալով և շուրֆերով աշխատելիս—բանվորներին, արգելվում է իջնել հիշված փորվածքները առանց նախորդ փորձելու ողի փորակը, իջեցնելով վառված մոմը կամ լամպան:

կ) Բանվորների բարձրացման կամ իջեցման ժամանակ արգելվում է հորանի միջոցով պայթուցիկ նյութեր փոխադրել կամ աշխատանքի վայրը հանելը:

լ) Շպուրը վառելուց հետո արգելվում է խորտում (գարոյ) աշխատանքներ սկսել նախ քան, խորտը բաժարար չափով ողափոխված չի լինի և նրա մուտքը վարչութեան կողմից չի թույլատրվի:

լս) Բիկֆորդյան բուրբ վառելիս բոլոր նախադուրսողական միջոցներ ձեռք առնել (բռնկիչի պայուսակի մեջ պետք է լինի միմիայն անհրաժեշտ քանակութեամբ լցված պատեճներ (կադայուլի):

ձ) Բռնկիչները շպուրը վառելու, այլ և հանքերի մեջ չըջելու ժամանակ, պիտի հատուկ լապտերներ և փոշիթե մոմ կամ կարբիտի լամպիկներ ունենան:

կ) Արգելվում է չկրակած շպուրից լեցը դուրս հանել, այլ և մնացած բաժակների փորերը չարունակել: արգելվում է աշխատանքը սկսել նախքան աշխատանքի վայրը չի գննված լինի աշխատանքի հսկողութեան կողմից:

Հանքը—չկրակած փամփուշտի հետ դուրս թափվելու դեպքում, աշխատանքը պետք է կատարել շատ զգույշ—առանց բրիչի (կայրա) գործածութեան:

հ) Շպուրը պայթումից հետո, չբացվելու (ոսեչկա) դեպքում, լեռնային հսկողութեանը պարտավոր է լիկ-

վերգացիայի յենթարկել այդ վերջինը. զբանից հետո միմիայն աշխատավորներին կարելի չի թույլ տալ աշխատանքի անցնելու: Չպայթած շտուկներ հայտնաբերելու դեպքում, վոր կարող է վորս հետևանքներ ունենայ լեռնային հսկողութեան պատկանող համապատասխան անձնավորութեանը պատասխանատուութեան և կրում համաձայն Աշխ. Որ. 139 հոդ.:

ձ) Փորձաձգի ամրացումը պետք է կատարվի յուր ժամանակին և լեռնային հսկողութեան ցուցմունքներէ համաձայն:

Անկալուն ապարներէ (սյրոտի) մեջ չամրացած փորվածքներում աշխատելն արգելվում է: Առանձնապես ուշադիր պետք է լինել դեպի խորտի տանիքը և պատերը, պայթուցիկ աշխատանքներից հետո—մանր գուրս թափումներից (վրիվայ) խույս տալու նպատակով:

դ) Նախապատրաստական հին փորվածքներից, ամրացումներն առանց վարչութեան թույլատրութեան գուրս ձգելն արգելվում է:

ճ) Երեքտրական թեւերին և տեղակայանքներին (ուսանովիկ) ձեռք տալը, այդ գործի հետ կապ չունեցող անձանց, արգելվում է:

մ) Բոլոր յուղելու և սրբելու նյութերը պահել ամուր փակված յերկաթե արկղներում և վոչ ուշ, քան շարաթական յերկու անգամ գուրս հանել:

յ) Հսկել 1) վոր բոլոր խուցերում (կամերա), ուր յուղ է գործադրվում, մշտապես լրիվ քանակութեամբ ավազ լինի—ձածկելու համար այն տեղերը, վորտեղ պատահաբար յուղ է թափված, 2) վոր հակահրդեհ միջոցները սարքին լինեն:

ն) Ստորերկրյա դժբախտ պատահարների դեպքում, (հրդեհ, պայթում, գազի ու ջրի հանկարծակի գուրս

զարը և այլն) այն հանքերում, վորտեղ կան վրկիչ կայաններ, բոլոր սեպտերատորները, սարքերը և պարզանքը պետք է միշտ կազմ ու պատրաստ լինեն:

Յ3. Տեխնիկական անվտանգութեան համար պատասխանատու չեն, բացի վարչութեանից, հատուկ նշանակված անձինք, վորոնց ցուցակը հայտարարվում է յուրաքանչյուր համքարութեաններում կամ հանքում:

Յ4. Աշխատանքի ժամանակ բանվորները պետք է սպովեն նրանց արվող պահպանական պարագաներից, այլ և համապատասխան մասնահագուստից:

Յ5. Հրամանից տեղերում պիտի կախված լինեն համապատասխան մակադրեր:

Յ6. Արգելվում է կրակ վառել այն տեղերում, ուր այդ չի թույլատրվում: Այն տեղերում, ուր համապատասխան մակադրեր կան, չի թույլատրվում ծխախոտ ծխել և բանվորից պահանջվում է, վոր նա զգուշ վերաբերվի կրակի հետ:

Յ7. Աշխատանքից հետոնալուց առաջ, բանվորները պարտավոր են մարել կրակը ամբողջ շենքում, բացի այն տեղերից, վոր կվորոչվեն գործվարչութեան և մատնանչվեն բանվորների կողմից:

Յ8. Գործարանում կամ նրանից այնքան մոտ տարածութեան վրա, վոր սպասուում է գործարանային շենքերին և գուլքին, հրդեհ առաջանալու դեպքում, տեսողները պարտավոր են այդ մասին անմիջապես հայտնեն գործարանի վարչութեանը, ցույց տալ հրդեհի վայրը և հանգցնելու միջոցներ ձեռք առնել—բոտ գործող կանոնների:

Յ9. Դժբախտ պատահարների և հանկարծակի սուր հիվանդութեանների դեպքում, բժշկական շտաբախույժ սպանութեանը աշխատավորներին ցույց է տալիս ձեռնար-

կուլթյան առաջին բուժօգնութեան կայանը կամ համապատասխան բուժարանը, վորի հասցեն և հեռախօսը պետք է կախված լինի վորեւէ տեսանելի տեղում:

90. Գործարանում տեղի ունեցած դժբախտ պատահարների և հանկարծակի սուր հիվանդութիւնների դեպքում, հիվանդներին բուժարան տեղափոխելու համար, փոխադրական միջոցներ (սանիտ. յերկանիւ) է արւում:

91. Բանվորներն աշխատանքի ժամանակ վորեւէ վերափորում կամ վնասվածք ստանալու դեպքում, պարտավոր են անմիջապէս առանց արհեստանոցից դուրս գալու, հայտնել այդ մասին—վարչութեանը: Միաժամանակ տուժողի վրա պարտականութեան է դրվում, առանց հետաձգելու դիմել հիվանդների ընդունարանը և ներկայացնել վարչութեան ավագ դրութեանը:

Յեթե ինքը, տուժողը ի վիճակի չէ անձամբ բուժօգնութեան դիմելու, նրան պարտավոր է, համապատասխան կայանը բուժօգնութեան հասցնելու համար ուղարկել վարչութեանը, իսկ նրա բացակայութեան դեպքում, մտապէս ընկերները:

92. Յեթե տուժողը ի վիճակի չէ անձամբ վարչութեանը դիմելու, ապա աշխատանքի նրա յուրաքանչյուր ընկերը պարտավոր է անմիջապէս տեղեկացնել վարչութեանը և առաջին բուժօգնութեան կայանը դժբախտ դեպքի մասին, վորը պարտավոր է անմիջապէս միջոցներ ձևուք առնել տուժողին առաջին բուժօգնութեանը հասցնելու և համապատասխան բուժարանը ուղարկելու համար:

9. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

93. Բոլոր աշխատավորները պարտավորվում են կարգին և մաքուր պահեն աշխատանքի տեղերը:

94. Բոլոր սենյակները հատուկ բանվորների միջոցով ամենօրյա ավերածումը (մաքրելը) պետք է կատարվի ջրով և շարաթական մեկ անգամ ընդհանուր ավերածում: Կարծր տականքները և աղբը աշխատանքի վայրից դուրս է հանվում հատուկ նշանակված տեղեր: Աշխատանքի սենյակները վոչ բավարար մաքրութեան պատասխանատվութեանը կրում է հանքային վարչութեանը:

95. Ձեռքերը և յերեսը լվանալու համար ծառայող բոլոր սենյակներում պետք է լինեն լվացարաններ—լրիվ քանակութեամբ ջրով լիքը, ունենան ոճառ և մաշաք յերեսուրբիչներ, իսկ խմելու համար՝ փակված պահածան (բակ) ծորակներով, յեփացրած ջրով և դավաթներով: Պահածանները պետք է մաքուր և սարքին պահվեն, միշտ լվացվեն, իսկ յեփացրած ջուրը պետք է փոխվի ամեն օր:

96. Արտաքնոցներում անհրաժեշտ մաքրութեան պետք է պահանջու. այդ նպատակի համար—չծառայող տեղերից ողավելն արգելվում է:

97. Առողջապահական կանոնները խախտող աշխատավորները պատասխանատվութեան են յենթարկվում համաձայն պատժացուցակի:

10. ԱՇԽԱՏԱՎՈՐՁԻ ՎՃԱՐՈՒՄԸ

98. Աշխատավորներին դատուժը վճարվում է համաձայն հավաքական պայմանագրի, առանց խանգարելու աշխատանքների ընթացքը կամ կանգնացնելու մեքենաները և դադարակները:

99. Դատուժի վճարելուց հինգ օր առաջ աշխատավորը պարտավոր է համքարային դրասենյակին ներ-

կայացնել յուր հաշվեկրթույլը և կոնտրոմարկ ստա-
նայ: Աշխատավորն ինքը պետք է հետևի, զոր աշխա-
տանքը ճիշտ զրվի, զորի համար նա, գրքույկն ստա-
նարուն պես պետք է ստուգի ստանալիք դատումի և
պահված գումարի ճշտությունը, և յեթև հաշվարկը
սխալ է հայտնի գրասենյակին:

100. Հաշվեկրթույկն կորցնողին արվում է նորը, ըստ
փորում գանձվում է նրա փաստական արժեքը:

101. Հաշվեկրթույլը կամ կոնտրոմարկը կորցնելու
դեպքում, աշխատավորը պարտավոր է այդ մասին
անմիջապես հայտնել յուր համբարային գրասենյակին,
ըստ փորում այդ դեպքում, նա ստանում է իրեն հա-
տանելիք զրամը միմիայն հատուկ ստորագրությամբ:

Մեծագաղտրձները Միության հաշվարկին՝ Տրեստի
Կենտ. վարչության վարչության նախագահ՝
Նախագահ՝ Զ. ԴԵՄՐՁՅԱՆ Ի. ՉԵԿԱՍԻՆ

Պատ. Բարա՝ Յե. ԲԱՂԴԱՍՍՐՅԱՆ Տրեստի ԱՏ Բամբի
Վարիչ՝ ԱՐ ՄԻԲԱՅԵԼՅԱՆ



Յ Ո Ւ Յ Ա Կ

ԱՅՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՎՈՐՈՆՅ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԻ ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ

Ներքոհիշյալ 12 արհեստների և պաշտոնների համար,
փորպես հաշվառման շլենթարկվողների—սահմանել
աշխատավարձի ամսական ամուր գրույթ, յեղնելով
նրանց տարիֆային գրույթից և ալեկացնելով,—վար-
չության և միության փոխադարձ համաձայնու-
թյամբ վուշ ալելի քան 10—ից մինչև 50 ասկոս հալել-
յալ աշխատավարձ—աշխատանքի ծախալի համաչափ:


1. Կենտրոնական պահեստի կշտոջ
2. Դրամարկղակալ
3. Շոֆֆեր
4. Տրակտորավար
5. Բաղնիքապան—կրակալատ
6. Ախտապաններ
7. Կառապան
8. Սայրապան—(Փուրղոն)
9. Սայրապան
10. Շենքերի հակիչները (հյուրանոցի վարիչները)
11. Եքսպեդիտոր (ավազ)
12. Եքսպեդիտոր


Մեծագաղտրձների միության հաշվարկին՝ Տրեստի վարչու-
Կենտ. վարչության նախագահ— թյան նախագահ—
Զ. ԴԵՄՐՁՅԱՆ Ի. ՉԵԿԱՍԻՆ
Պատ. Բարա՝ ԱՏ. Բամբի վարիչ—
Յե. ԲԱՂԴԱՍՍՐՅԱՆ ԱՐ ՄԻԲԱՅԵԼՅԱՆ

1890

THE UNIVERSITY OF CHICAGO
DEPARTMENT OF CHEMISTRY
RECORDS OF THE DEPARTMENT
OF CHEMISTRY
1890

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100





2013
« Ազգային գրադարան

NL0041815

32 30K